«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ

Այս գրքի հիմքում ընկած է Բաբկէն կաթողիկոս Կիլէ-սէրեանի «Քրիստոնէականը», որը ենթարկել ենք զգալի փոփոխութիւնների՝ պահպանելով նրա ընդհանուր կառուցուածքը: Որոշ մասեր նոյնաբար թարգմանուել են արեւելահայերէն կամ նորովի շարադրուել, որոշ մասեր ուղղակի հանուել են, կատարուել են անհրաժեշտ յաւելումներ: Փոփոխութիւնները պայմանաւորուած են եղել նիւթն առաւել դիւրահաս, արդիական եւ մեր Եկեղեցու աւանդութեանը հարազատ ներկայացնելու մղումով:

Գիրքը կարող է ծառայել որպէս ձեռնարկ կիրակնօրեայ դպրոցների համար եւ օգտակար լինել բոլոր նրանց, ովքեր առհասարակ հետաքրքրւում են մեր Եկեղեցու աւանդութեամբ եւ ցանկանում լրացնել իրենց կրօնական գիտելիքների պակասը:

Մեր մասնաւոր շնորհակալութիւնն ենք յայտնում գերաշնորհ տ. **Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեանին**, ում անձնական նախաձեռնութեամբ եւ ջանքերով իրականացաւ սոյն գրքի հրատարակումը:

«Գանձասար» հանդէսի խմբագրութիւն

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐ
Երեւան 1994

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՑ

Մեկենասութեամբ՝
Երեմիա եւ Ժոզեֆին Կիլլամերեաններ
ի յիշատակ իրենց ծնողաց՝
Մարտիրոսի եւ Արաքսիի
(ծնեալ ի Զուլամերիկ, Վասպուրական)

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Ի՞նչ ենք հասկանում *Քրիստոնէական* ասելով:

–Քրիստոնէական են անուանւում այն մեծ ու փոքր գրքերը, որոնք սովորեցնում են քրիստոնէական կրօնի դաւանութեան սկզբունքները եւ կրօնական այլ գիտելիքներ:

Ի՞նչ է նշանակում *դաւանել*:

–Դաւանել նշանակում է մի բան ընդունել, խոստովանել եւ հաստատել: Հետեւաբար, դաւանութիւն կամ դաւանանք նշանակում է այն, ինչն ընդունուած, խոստովանուած եւ հաստատուած է, որը մեր դէպքում կոչւում է քրիստոնէական կրօն, հաւատք:

Ինչպէ՞ս է պատրաստուել Քրիստոնէականը:

–Քրիստոնէականի հիմնական սկզբունքները Նոր Կտակարանի մէջ են. սակայն Քրիստոնէական եկեղեցու առաջին պաշտօնական եւ ընդհանրական Քրիստոնէականը պատրաստուել է Նիկիոյ Տիեզերաժողովի ժամանակ (325 թ.), որը սկսւում է Հաւատամք (= հաւատում ենք) բառով եւ այդ անունով էլ կոչւում է:

Քանի որ Նոր Կտակարանում կան Քրիստոնէականի սկզբունքները, բաւական չէ՞ նրանց իմացութիւնը:

–Անշուշտ բաւական է: Բայց ամէն քրիստոնեայ անհատ անհրաժեշտ չափով պատրաստուած չէ՝ այդ սկզբունքները հասկանալու համար:

Բացի այս, դրանք ցրուած են ընդարձակ գրքերի մէջ, որոնց ի մի բերումը եւ կապակցումը դժուար թէ ամէն մարդու կարողութեանը հասու լինի: Մէկ այլ կարեւոր հանգամանք եւս կայ. շատերը ճիշտ կամ ուղղափառ մտքով չեն կարող հասկանալ դրանք, որի հետեւանքով զանազան կարծիքներ են երեւան գալիս Եկեղեցու մէջ, եւ սա տեղիք է տալիս բաժանումների: Այս պատճառներով Քրիստոնէականն անհրաժեշտութիւն է դարձել:

Ի՞նչ է նշանակում ուղղափառ:

–Ուղղափառ՝ հայերէն թարգմանութիւնն է յունարէն օրթոդոքս

բառի, որ նշանակում է հաւատքի մէջ ճիշտ կամ ուղիղ կարծիք ունեցող:

Նրանք, ովքեր չեն ընդունում պաշտօնապէս բանաձեւուած եւ ընդունուած դաւանանքը, կոչւում են չարափառ՝ թիւր կամ սխալ կարծիք ունեցող:

Ուղղափառութիւնն անհրաժեշտ պայմա՞ն է քրիստոնեայ լինելու համար:

-Անտարակոյս, Յիսուս Քրիստոսի անունով բոլոր մկրտուածները քրիստոնեայ են: Եւ նրանց ապրած կեանքը լաւագոյն ապացոյցն է իրենց հաւատքի եւ դաւանանքի ուղղափառութեան կամ չարափառութեան: Բայց մի եկեղեցու միութեան եւ ներքին զօրութեան համար ուղղափառութիւնն անառարկելի անհրաժեշտութիւն է:

Երբ մի եկեղեցու անդամներ իրարից տարբեր կարծիքներ ունեն հաւատքի եւ դաւանութեան խնդիրների մասին, եւ այդ կարծիքները տեղիք են տալիս վէճերի եւ պառակտումների, այդպիսի եկեղեցին տկար է բոլոր առումներով:

Ուրեմն, ո՞րն է *Քրիստոնէականի* արժէքը:

-Մինչ այս տրուած բացատրութիւնները ցոյց են տալիս, որ Քրիստոնէականը շատ հետաքրքրական մի գիրք է, որը մեզ սովորեցնում է Յիսուս Քրիստոսի եկեղեցու մէջ պաշտօնապէս ընդունուած եւ հաստատուած հաւատքն ու դաւանութիւնը:

Իւրաքանչիւր խելացի, պարկեշտ եւ բարի քրիստոնեայ սիրով եւ խոնարհութեամբ սովորում է իր եկեղեցու Քրիստոնէականը:

Մանաւանդ հայ պատանիները այս գրքոյկով իրենց մանկութիւնից պէտք է լաւ սովորեն իրենց մայրենի եկեղեցու Քրիստոնէականը:

Ի՞նչ է նշանակում կրօն:

-Կրօնը մէկից աւելի իմաստ ունեցող բառ է, սակայն այստեղ նշանակում է մարդկանց՝ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը եւ այդ յարաբերութեան արտայայտութեան բոլոր կերպերը:

ՀԱՒԱՏՔ

Ի՞նչ է *հաւատքը*:

-Հաւատք, բառի կրօնական իմաստով, նշանակում է ամուր վստահութիւն աստուածային ճշմարտութիւնների հանդէպ: Իսկ Պօղոս առաքեալն այսպէս է սահմանում. «Հաւատքը յուսացած բաների հաստատութիւնն է եւ չտեսնուած բաների ապացոյցը» [Եբր. ԺԱ 1]:

Կարելի՞ է հաւատալ չտեսնուած բաների:

-Այո՛: Շատ բաներ կան այս աշխարհում, նոյնիսկ մեր շուրջը, որոնք չենք տեսնում կամ չենք կարող տեսնել, բայց գիտենք եւ հաւատում ենք, որ դրանք կան:

Կարո՞ղ ես օրինակներ բերել:

-Այո՛: Նախ՝ նիւթական բաներ, ինչպէս օրինակ՝ մեր չտեսած երկրները, քաղաքները, մարդիկ եւ այլն. յետոյ՝ բարոյական բաներ, ինչպէս՝ առաքինութիւններ, յոյսեր, ապագաներ եւ այլն. վերջապէս՝ կրօնական ճշմարտութիւններ, ինչպէս օրինակ՝ Աստուած, հոգի, հրեշտակ եւ այլն, որոնց չենք տեսնում, բայց գիտենք եւ հաւատում ենք, որ կան:

Հաւատքն անհրաժեշտութի՞ւն է մարդկանց համար:

-Այո՛: Մարդկանց բոլոր գործերը հիմնուած են հաւատքի վրայ:

Այս երկրագունդը, որի վրայ ապրում ենք, տիեզերքը, որի մի փոքրիկ մասն է այս երկրագունդը, լի են այնպիսի իրողութիւններով, որոնք մենք չենք տեսնում եւ չենք հասկանում, բայց գիտենք եւ հաւատում ենք, որ կան:

Կարո՞ղ ես բացատրել, թէ Աստուած, որ չի տեսնւում, իրօք կայ:

-Այո՛: Այս աշխարհում չկայ մի բան, որ չունենայ իր հեղինակը կամ պատճառը: Որեւէ տուն առանց կառուցողի ինքնին չի կառուցւում: Որեւէ ժամացոյց կամ մեքենայ ինքն իրեն չի կարող գոյութիւն ունենալ: Նոյնպէս էլ այս երկրագունդը, այս տիեզերքը ունեն իրենց

գոյութեան մի հեղինակ, մի ստեղծիչ, մի արարիչ, որի անունը մեր լեզուի մէջ ԱՍՏՈՒԱԾ է: Այս է պատճառը, որ ես էլ եմ հաւատում, թէ ԱՍՏՈՒԱԾ կայ:

Հաւատքը միայն Աստուծոյ գոյութիւնն ապացուցելո՞ւ համար է պէտք:

-Ո՛չ: Մարդիկ իրենց ողջ կեանքն ու գործը հիմնում են հաւատքի վրայ: Վաղը կամ ապագան անորոշութիւն եւ անստուգութիւն են, բայց մարդիկ հաւատքով են ապրում, քանզի իրենց բոլոր խորհուրդները եւ աշխատութիւնները վաղուայ, այսինքն՝ ապագայի համար են:

Կարող ենք նոյնիսկ ասել, թէ հաւատքը հոգեկան մի կարողութիւն է, որ հաւասար չափով չի արտայայտւում բոլոր մարդկանց մէջ:

Ո՞րն է հաւատքի դերը կրօնի մէջ:

-Կրօնը, կարող ենք ասել, նոյն ինքը հաւատքն է, որովհետեւ կրօնների ուսումնասիրութիւնը մեզ սովորեցնում է, թէ ինչպէս է զարգացել մարդկանց հաւատալու կարողութիւնը, ինչպիսի փուլերով է անցել եւ ինչ հանգրուանների է հասել սկզբից մինչեւ այսօր:

Հաւատքի եւ հաւատքին առնչուող խնդիրների մասին խօսելիս ո՞ր կէտին պէտք է ուշադրութիւն դարձնել:

-Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ հաւատքը չշփոթուի նախապաշարումների հետ:

Ի՞նչ է նախապաշարումը:

-Նախապաշարումը տգէտ, ռամիկ մարդկանց մէջ տիրող սխալ համոզումների, կանխակալ կարծիքների ամբողջութիւնն է, որոնց ծագումը հին է, եւ որոնք շատ կողմերով շփոթւում են հաւատքի հետ:

Մենք՝ հայերս էլ ունե՞նք նախապաշարումներ:

-Անշուշտ ունենք: Հայերը բացառութիւն չեն կազմում մարդկութեան մէջ:

Նախապաշարումները շեշտւում են այն չափով, որքանով մարդիկ չեն լուսաւորւում ճշմարիտ հաւատքի լոյսով եւ մի ճշմարիտ կրօնի գիտութեամբ:

Ո՞րն է, ուրեմն, կրօնի մէջ նախապաշարումներից զերծ մնալու միջոցը:

-Պէտք է առաջնորդուել քրիստոնէական կրօնի սկզբունքներով, որոնց աղբիւրն է Նոր Կտակարանը եւ մասնաւորապէս՝ Սուրբ Աւետարանը: Այդ սկզբունքները մշակուել եւ դասակարգուել են Եկեղեցու հայրերի կողմից: Ուստի նախապաշարումներից զերծ մնալու համար պէտք է հետեւել հայրերի ուսուցումներին եւ իրագործել դրանք կեանքում:

ՀԱԻԱՏԱՄՔ

ՀԱԻԱՏԱՄՔ

Ի՞նչ է *Հաւատամքը*:

–Հաւատամքը քրիստոնէական կրօնի հաւատալիքների բանաձեւն է եւ կամ, ինչպէս սկզբում ասացինք, Հաւատամքն առաջին Քրիստոնէականն է, որի մէջ բանաձեւուած են քրիստոնէութեան հաւատալիքները:

Ո՞վ կամ ովքե՞ր են պատրաստել կամ բանաձեւել *Հաւատամքը*:

–Ըստ աւանդութեան՝ առաջին Հաւատամքը բանաձեւել են առաքեալները. այս է պատճառը, որ այն Առաքելական Հաւատամք է կոչւում: Իսկ այն Հաւատամքը, որ այժմ դաւանում է մեր Եկեղեցին, ինչպէս նաեւ՝ քրիստոնէական հին եկեղեցիները, բանաձեւուած է 325 թ՝ Նիկիոյ Ա Տիեզերաժողովի ժամանակ:*

Ի՞նչ կարեւորութիւն ունի *Հաւատամքը*:

–Շատ մեծ է Հաւատամքի կարեւորութիւնը, որովհետեւ ընդհանրապէս Նոր Կտակարանում եւ մանաւորապէս Աւետարանում կան այնպիսի պատմութիւններ եւ արտայայտութիւններ, օրինակ՝ Աստուծոյ մասին, Յիսուս Քրիստոսի ծննդեան եւ զարթնումութեան, Սուրբ Հոգու, յաւիտենական կեանքի եւ այլ խնդիրների մասին, որոնց անսխալ ըմբռնման համար անհրաժեշտ է մի պաշտօնական, հեղինակաւոր մեկնութիւն՝ այս կամ այն խնդրի շուրջ անհամաձայնութիւնները կամ տարակարծութիւնները վերացնելու համար:

Ուրեմն, ի՞նչ արժէք ունի *Հաւատամքը* Եկեղեցու մէջ:

–Քանի որ բացատրեցինք Հաւատամքի կարեւորութիւնը, անմիջապէս ասենք, որ այդ կարեւորութեան մէջ է արդէն իր արժէքը: Որովհետեւ առաքեալները, Եկեղեցու առաջին հայրերը ժամանակակիցներ են քրիստոնէութեան ծագման եւ տարածման, հետեւաբար նրանք ծանօթ են այն գաղափարներին եւ կարծիքներին, որոնք տիրում էին այդ դարերում Հաւատքի հիմնական կէտերի շուրջ: Ուստի եւ պաշտօնական բանաձեւով արտայայտուած մի ուղիղ եւ հեղինակաւոր մեկնութեան անհրաժեշտութիւն է առաջ եկել՝ վերացնելու շփոթութիւնները եւ տարակարծութիւնները:

Ահա թէ ինչու մեծ արժէք է ներկայացնում Եկեղեցու կողմից բանաձեւուած Հաւատամքը:

Հաւատամքի կարեւորութեան մասին ուրիշ ի՞նչ կարող ես ասել:

–Հաւատամքը կազմում է քրիստոնէական Եկեղեցիների միութեան հիմքը, քանի որ նրանք ընդունում են այն եւ հանդիսաւորապէս յայտարարում իրենց Եկեղեցիներում:

Ուրի՞շ:

–Դարձեալ, Հաւատամքը միեւնոյն Եկեղեցու ժողովրդի կամ անդամների մէջ քրիստոնէական հաւատքի մասին համաձայնութեան եւ ներդաշնակութեան հիմքն է:

Ուրեմն, Եկեղեցու անդամների համար անհրաժեշտ պայմա՞ն է *Հաւատամքն* ընդունելը եւ գիտենալը:

–Այո՛: Սա անվիճելի է, բայց, դժբախտաբար, ոմանք հարկ եղած ուշադրութիւնը չեն ընծայում Հաւատամքի կարեւորութեանը, ոմանք էլ շեղւում են Հաւատամքի հարազատ ըմբռնումից:

Անգիր գիտէ՞ք մեր Եկեղեցու մէջ ասուող *Հաւատամքը*:

–Այո՛:

Հաւատամք ի Մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի Մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ո՛չ արարած: Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր՝ մարդկան,

---

* Այստեղ նկատի ունի Հաւատամքի հիմնական սկզբունքները, որովհետեւ Նիկիոյ Հանգանակն ունի մի քանի յետագայ խմբագրութիւններ, որոնք նաեւ ներառում են Կ. Պոլսի Բ Տիեզերաժողովի դաւանական որոշումները Սուրբ Հոգու մասին: Մեր Հաւատոյ Հանգանակը կամ Հաւատամքը այդպիսի մի գեղեցիկ խմբագրութիւն է:

եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս. որ էջն ի Ցորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգի, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինիլ զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթողիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ Միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀԱՒԱՏԱՄՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Ո՞ՐՆ է Հաւատամքի բովանդակութիւնը:

-Հաւատամքը բովանդակում է տասը կէտեր կամ խնդիրներ, որոնք են.

ա) Աստուած,

բ) Որդի,

գ) Հոգի,

դ) Եկեղեցի,

ե) Մկրտութիւն,

զ) Մեղք,

է) Մեռելների յարութիւն,

ը) Յաւիտենական (կամ վերջին) դատաստան,

թ) Երկնքի արքայութիւն,

ժ) Յաւիտենական կեանք (կամ հոգու անմահութիւն):

Աստուած ինչպէ՞ս է բանաձեւուած եւ նկարագրուած Հաւատամքի մէջ:

-Հաւատում ենք մէկ Աստուծոյ. այսինքն՝ Աստուած մէկ է, ուրիշ աստուածներ չկան, եւ այդ մէկ Աստուած ամենակալ Հայրն է**, որ ստեղծեց երկինքը եւ երկիրը, տեսանելի եւ անտեսանելի բոլոր բաները:*

Որդի՞ն:

-Հաւատում ենք մէկ Որդու, որ ծնուած է նոյն Ինքը Հայր Աստուծոյ էութիւնից: Որդին էլ ճշմարիտ Աստուած է, լոյս է, որովհետեւ ծնուած է Աստծուց եւ ոչ թէ՝ ստեղծուած (ծնունդ եւ ո՛չ արարած):

Որդի Աստուած մարդկանց փրկութեան համար իջաւ երկնքից, Սուրբ Հոգու միջոցով ծնուեց սուրբ Կոյս Մարիամից եւ եղաւ կատարեալ մարդ՝ ճիշտ մեզ պէս, սակայն՝ առանց մեղքի. եւ չարչարուեց, խաչուեց, մեռաւ, թաղուեց եւ երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով երկինք ելաւ եւ նստեց Հօր աջ կողմում: Միեւնոյն մարմնով

---

* ամենակալ- ամէն բանի տէր, ամէն բան իր ձեռքի մէջ ունեցող

** *Մի Աստուած* արտայայտութիւնը հաւասարապէս վերաբերում է Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն:

էլ գալու է՝ դատելու ողջերին եւ մեռածներին, եւ Նրա թագաւորութիւնը վախճան չունի:

Հոգի՞ն:

–Հաւատում ենք մէկ Սուրբ Հոգու, որ անեղ է (ստեղծուած կամ եղած չէ) եւ կատարեալ: Այս Հոգին է, որ խօսեց Օրէնքի եւ Մարգարէների (Հին Կտակի) մէջ, իջաւ Յորդանան (Յիսուս Քրիստոսի Մկրտութեան ժամանակ), քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակուեց սուրբերի մէջ:

Եկեղեցի՞ն:

–Հաւատում ենք մէկ Եկեղեցու (այսինքն՝ քրիստոնէական Եկեղեցին մէկ է), որ Ընդհանրական է, Առաքելական է եւ Սուրբ է:*

Իսկ մնացածնե՞րը:

–Հաւատում ենք մէկ մկրտութեան (այսինքն՝ իւրաքանչիւր անձ միայն մէկ անգամ է մկրտւում), ապաշխարութեան, մեղքերի թողութեան, մեռելների յարութեան, յաւիտենական (վերջին) դատաստանի, երկնքի թագաւորութեանը եւ յաւիտենական կեանքին:

ԾԱՆՕԹ. Մեռելների յարութիւն, վերջին դատաստան, յաւիտենական կեանք եւ այլն՝ ինչ որ վերաբերում է հանդերձեալ կեանքին, սրանք վախճանաբանական խնդիրներ են, որոնց մասին խօսւում է աստուածաբանութեան մէջ: Սրանք մատչելի են սակաւաթիւ պատրաստուած անձերի: Իսկ այս խնդիրների մասին անպատրաստներին եւ մանուկներին գաղափար տալու համար բաւական է սովորեցնել նրանց այն, ինչ կայ Աւետարանում:

Այս Հաւատամքը ե՞րբ է ասւում մեր Եկեղեցու մէջ:

–Ամէն օր, Ճաշու գրքերի եւ Աւետարանի ընթերցումից յետոյ՝ պատշաճ հանդիսաւորութեամբ, ձեռնամած:

ԾԱՆՕԹ. Այս Հաւատամքին հետեւելով՝ երկու ուրիշ Հաւատամքներ էլ են խմբագրուել մեր Եկեղեցում. մէկը՝ Ժամագրքի սկզբում՝ «Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ» սկսուածքով, որ ամէն առաւօտ, ժամերգութիւնը չսկսած, ասւում է ժամարար քահանայի կողմից. նաեւ՝ քահանայական կոչման արարողութեան մէջ ընծայեալն այս Հաւատամքով է տալիս իր դաւանութիւնը:

Մէկն էլ կայ՝ հակիրճ եւ խիտ, որ գրուած է Մկրտութեան կանոնի մէջ՝ «Հաւատամք յԱմենասուրբ Երրորդութիւնն» սկսուածքով: Սա պէտք է ասի Մկրտութեան եկողը, եթէ չոփահաս է, իսկ եթէ փոքրիկ է, պէտք է ասի նրա կնքահայրը:

---

* Յետոյ առանձին պիտի խօսենք Եկեղեցու եւ Եկեղեցիների մասին:

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի՞նչ ենք հասկանում՝ Ամենասուրբ Երրորդութիւն ասելով:

–Հայր Աստուած, Որդի Աստուած, Սուրբ Հոգի Աստուած՝ Երեքը միասին կոչւում են Ամենասուրբ Երրորդութիւն:

Ներսէս Շնորհալի հայրապետն ի՞նչ է ասում Երրորդութեան մասին:

–Քրիստոսին երկրպագողները եւ Ամենասուրբ Երրորդութեան անունով մկրտուածները պէտք է խոստովանեն, որ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու Երեք Անձնաւորութիւնները համագոյ են:

Ի՞նչ է նշանակում համագոյ:

–Համագոյ նշանակում է միեւնոյն գոյութիւնը ունեցող. հետեւաբար, Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին առանձին-առանձին երեք աստուածներ չեն, այլ Մի (մէկ) Աստուած: Շնորհալին ասում է՝ մի բնութիւն, մի աստուածութիւն, մի իշխանութիւն՝ համապատիւ եւ զուգափառ. որեւէ մէկից չեղած (չստեղծուած), սկիզբ եւ վերջ չունեցող, այսինքն՝ յաւիտենական:

Երբ ծնունդ է ասւում, պէտք չէ հասկանալ մարդկանց ծնունդի սովորական կերպերը, այլ՝ ինչպէս լոյսից լոյս է ծնւում, կամ կրակից՝ կրակ, եւ կամ, քիչ թէ շատ հեռաւոր մի օրինակով, ինչպէս մեր մտքից ծնւում է խօսքը:

Հոգին բխում է Հօրից, փառակից է Որդուն եւ կատարեալ Աստուած է Հօր եւ Որդու պէս:

Սրանք դժուար եւ անիմանալի բաներ են, ինչպէ՞ս կարելի է ըմբռնել:

–Այո՛, դժուար են մեր մտքի համար, բայց հաւատացեալ մարդու համար դժուար չեն, որովհետեւ միայն հաւատքով են ըմբռնւում այսպիսի խրթին խնդիրները: Ներսէս Շնորհալին ասում է. «Անհասկանալին հասկանալու միակ միջոցն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ հաւատալը Սուրբ Գրքի մէջ ասուածներին»:

ԱՍՏՈՒԱԾ

Ո՞վ է Աստուած:

–Աստուած Ամենասուրբ Երրորդութիւնն է՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին: Ինչպէս տեսանք Հաւատամքի մէջ, Աստուած ողջ տիեզերքի Արարիչն է:

Ո՞ւր է Աստուած:

–Աստուած մարդկանց պէս մարմնաւոր էակ չէ, որ տեղ ունենայ: Նա հոգի է եւ ամէնուրեք է, այսինքն՝ ամէն տեղ:

Ի՞նչ ենք հասկանում՝ աստուածպաշտութիւն ասելով:

–Աստուածպաշտութիւն նշանակում է պաշտել, ծառայել Աստծուն:

Մարդիկ ծառայում են Աստծուն, երբ սիրում են Նրան իրենց ամբողջ հոգով, երբ պահում են աստուածային պատուիրանները եւ աղօթում Նրան:

Ինչո՞ւ պէտք է աստուածապաշտ լինենք:

–Որովհետեւ Աստուած մեր Արարիչն է. մեր վայելած բոլոր բարիքները Նա է տալիս մեզ. Նա սիրեց մեզ եւ միշտ սիրում է:

Աստուած ինչպէ՞ս է սիրում մեզ:

–Սուրբ Աւետարանում կարդում ենք. «Աստուած այնքան սիրեց աշխարհը (մարդկութեանը), որ նոյնիսկ Իր Միածին Որդուն տուեց նրա համար» [Յովհ. Գ 16], այսինքն՝ Տէր Յիսուս Քրիստոսին, որ յայտնեց մարդկանց, թէ ով է Աստուած, եւ թէ ինչպէս պէտք է աղօթել Նրան:

Ինչպէ՞ս պէտք է աղօթել Աստծուն:

–Մեր աղօթքը պէտք է լինի հոգեւոր. որովհետեւ Աստուած հոգի է, եւ հոգով եւ ճշմարտութեամբ պէտք է աղօթել Նրան [տե՛ս Յովհ. Դ 24]: Որովհետեւ նոյնիսկ մեր նիւթական պէտքերը ծառայելու են մեր հոգեւոր կեանքն ազնուացնելուն եւ բարձրացնելուն:

Աստուած տեսանելի՞ է:

–Ո՛չ: Քանի որ Աստուած հոգի է, տեսանելի չէ մարմնական աչքերի համար, բայց տեսանելի է կամ յայտնւում է մաքուր սիրտ ունեցողներին: Սուրբ Աւետարանն ասում է. «Երանի՛ սրտով մաքուրներին, որովհետեւ նրանք Աստծուն պէտք է տեսնեն» [Մատթ. Ե 8]:

Աստուած ինչպէ՞ս է նկարագրուած Աւետարանում:

–Աստուած ամենաբարձր կատարելութիւնն է. սրա համար է, որ մեր Տէրն ասեց. «Կատարեա՛լ եղէք ձեր երկնաւոր Հօր պէս» [Մատթ. Ե 4]:

Աստուած բարի է [Ղուկ. ԺԸ 9]:

Աստուած ճշմարիտ է [Յովհ. ԺԷ 3]:

Աստուած սէր է [Ա Յովհ. Դ 8]:

Այս *կատարեալ, բարի, ճշմարիտ, սէր* եւ այլ յատկանիշներն ի՞նչ նշանակութիւն ունեն մեր գործնական կեանքում:

–Մարդը ստեղծուած է Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ. հետեւաբար, իր աստուածային նկարագիրը պահելու համար մարդ միշտ պէտք է աշխատի լինել կատարեալ, բարի, ճշմարիտ, սիրով լեցուն: Եւ այս ամենի հիմքը սէրն է:

Սիրոյ մասին ինչնե՞ր ասաց մեր Տէրը:

–Սիրեցէ՛ք իրար ձեր անձի պէս, նոյնիսկ սիրեցէ՛ք ձեր թշնամիներին [տե՛ս Մատթ. Ե, Մարկ. ԺԲ, Ղուկ. Զ]: Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք իրար. ինչպէս որ ես ձեզ սիրեցի, դուք էլ նոյնպէս սիրեցէ՛ք իրար [Յովհ. ԺԳ 34]:

Կարող ենք ասել, որ ողջ Նոր Կտակարանի բարոյականը հիմնուած է սիրոյ վրայ: Յովհաննու Աւետարանը եւ Թուղթը, ինչպէս նաեւ Ա Կորնթ. ԺԳ գլուխը շատ կարեւոր են՝ քրիստոնէական սիրոյ արժէքը հասկանալու համար:

Մարդիկ, ինչ է, չե՞ն սիրում իրար:

–Մարդիկ, անշուշտ, սիրում են իրար եւ սիրում են նաեւ ուրիշ շա՛տ բաներ. սակայն այս սէրը հիմնուած է շահի, պէտքի կամ հաճոյքի վրայ: Աստուածային սէրը, որի մասին է խօսքը, շահախնդրական չէ: Քրիստոնեաներն ա՛յս սիրով պէտք է սիրեն իրար, որպէսզի կատարեալ լինեն իրենց երկնաւոր Հօր պէս:

Այս չարիքներով լի աշխարհում հնարաւո՞ր է աստուածային սիրով սիրել միմեանց:

–Այս աշխարհն աւելի բարիքներով է լի, քան չարիքներով: Մարդիկ են, որ մշակում են չարիքները, քանզի չեն սիրում իրար աստուածային սիրով: Շահը, նախանձը, ատելութիւնը, ագահութիւնը, տեսակ-տեսակ ցանկութիւնները եւ այլն, մէկ խօսքով՝ չափազանց եսապաշտութիւնը, բարիքները փոխում են չարիքի:

Ուրեմն, ի՞նչը պէտք է լինի քրիստոնեաների պարտականութիւնն այս աշխարհում:

–Քրիստոնեաների պարտականութիւնը պէտք է լինի չտարուելը աշխարհային չարիքների հոսանքով: Մեծ եւ լուրջ աշխատանք է պահանջում այս, եւ հէնց սրանում է քրիստոնեայ մարդու քաջութիւնը կամ առաքինութիւնը: Եթէ աշխարհը մութ է, քրիստոնեան պէտք է լուսաւորի այն ճրագի նման. եթէ աշխարհն անհամ է, քրիստոնեան պէտք է համեմի այն աղի պէս. այսպէ՛ս պատուիրեց Տէրը Իր աշակերտներին եւ բոլոր հետեւողներին [տե՛ս Մատթ. Ե 13-16]:

Վերջապէս, քրիստոնեաներն այնպէս պէտք է ապրեն իրենց հաւատքի կեանքը, որ քրիստոնէական վարդապետութիւնը փառաւորուի [տե՛ս Տիտոս Բ 10]:

ՈՐԴԻ

Ո՞վ է Որդին:

-Որդին թէ՛ Աստուած է եւ թէ՛ Մարդ: Ինչպէս տեսանք, Նրա Աստուածութիւնը Հաւատամքի մէջ նկարագրւում է որպէս Միածին՝ ծնուած նոյն Իր՝ Հայր Աստուծոյ էութիւնից: Սա նշանակում է, որ Որդին կատարեալ Աստուած է, քանի որ Աստուծոյ էութիւնից կամ բնութիւնից է ծնուել: Այս է պատճառը, որ Որդին կոչւում է նաեւ ԼՈՅՍ, քանի որ Աստուած Լոյս է. եւ այսպէս, Աստուծոյ բոլոր յատկութիւնները նաեւ Որդու յատկութիւններն են:

Եթէ Որդին Աստուած է, ինչպէ՞ս է մարդ լինում:

-Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարաններից սովորում ենք, որ Որդի Աստուած մարդ է դառնում հրաշալի պարագաներում: Հաւատամքի բացատրութեամբ, ինչպէս տեսանք, Որդին ծնունդ է եւ ոչ թէ՝ արարած կամ ստեղծուած. Նա մարդկանց փրկութեան համար իջաւ երկնքից եւ Սուրբ Հոգով ծնուեց սուրբ Կոյս Մարիամից, կատարեալ մարդ եղաւ, փրկութեան գործը կատարեց մարդկանց մէջ եւ որպէս ապացոյց Իր Աստուածութեան, չարչարուելուց, մեռնելուց եւ թաղուելուց երեք օր յետոյ յարութիւն առաւ, համբարձուեց երկինք եւ նստեց Հօր աջ կողմում: Նա դարձեալ պիտի գայ այս աշխարհ՝ դատելու մեռեալներին եւ ողջերին:

Այս՝ մտքի համար անհասանելի պատմութիւնները կարելի՞ է հասկանալ:

-Ստոյգ է, որ մարդկօրէն դժուար է ըմբռնել Յիսուս Քրիստոսի Աստուածութեան եւ մարդեղութեան խորհուրդը, բայց նոյնչափ ստոյգ է Որդու Աստուածութիւնը, որի վրայ է հիմնուած բովանդակ քրիստոնէութիւնը:

Սակայն եթէ սա անհասանելի է մտքով, ապա հասու է հաւատքով, կամ, սուրբ Ներսէս Շնորհալու ասածի պէս, «անհասկանալին հասկանալու միակ միջոցը հաւատալն է Սուրբ Գրքի ասածներին», որովհետեւ աստուածային ծնունդն անըմբռնելի է եւ խօսքով չի բացատրւում: Հետեւաբար, քրիստոնեաների պարտաւորութիւնն է խոնարհութեա՛մբ ընդունել Սուրբ Գրքի մէջ աւանդուածները եւ սուրբ հայրերի բացատրութիւններն այս մասին եւ լաւ սովորել Աւետարանի պատմութիւնն այս մասին:

Շնորհալի հայրապետն ինչպէ՞ս է նկարագրում Որդու Աստուածութիւնը եւ մարդեղութիւնը:

-Բանն Աստուած (= Որդին) Գաբրիէլ հրեշտակապետի աւետումով իջաւ սուրբ Կոյս Մարիամի արգանդը, նրանից առաւ մարմին, հոգի եւ միտք, խառնեց եւ միաւորեց դրանք Իր Աստուածութեան հետ, ինն ամիս մանկան պէս զարգացաւ նրա արգանդի մէջ եւ ծնուեց որպէս կատարեալ Աստուած եւ Մարդ՝ անշփոթ էութեամբ (բնութեամբ) եւ անբաժանելի միութեամբ. մի Քրիստոս եւ մի Անձնաւորութիւն՝ միացած երկու բնութիւններից: Որպէս մարդ՝ կաթով սնուեց եւ որպէս Աստուած՝ փառաւորուեց հրեշտակներից. երեսուն տարի շրջեց աշխարհի վրայ՝ մինչեւ մարդկային կատարեալ հասակին հասնելը, որպէս մարդ՝ մկրտուեց ծառայից (= Յովհաննէս Մկրտչից) եւ որպէս Բարձրեալի Որդի՝ վկայուեց Հօր եւ Սուրբ Հոգու կողմից: Որպէս մարդ՝ փորձուեց սատանայի կողմից եւ որպէս կատարեալ Աստուած՝ յաղթեց փորձչին: Որպէս մարդ՝ քաղցեց, ծարաւեց, ննջեց, արտասուեց, յոգնեց՝ մարմնի օրէնքներին ենթարկուելով, որպէս Աստուած՝ գործեց նշաններ ու հրաշքներ, ցոյց տուեց աստուածային զօրութիւնը: Իր կամքով չարչարանքների եկաւ, անչարչարելին մեր չարչարելի բնութեամբ չարչարուեց խաչի վրայ. մահուան պարտք չունեցողը մեր այս մահկանացու մարմնով մեռաւ՝ մեղքով մեռած մեր այս բնութիւնը կենդանացնելու համար. Աստուածութեան հետ միացած մարդկային հոգով գերեզման իջաւ, կրկնակի աւերեց դժոխքը՝ ազատութիւն շնորհելով դժոխքում գտնուող հոգիներին, իսկ Իր աստուածային Մարմնի յարութեամբ մեր մահկանացու բնութեանը մահուան ապականութիւնից յարութիւն առնելու յոյսը տուեց, երրորդ օրը իշխանաբար (հեղինակօրէն) մեռելներից յարութիւն առնելուց յետոյ երեւաց Իր աշակերտներից տասներկուսին եւ եօթանասունին, հինգ հարիւրների եւ ուրիշ շատերի, որոնք Իր վկաներն ու քարոզիչները եղան աշխարհում, եւ, քառասուն օրերի ընթացքում երեւալով, խօսում էր նրանց հետ: Քառասուներորդ օրը երկինք բարձրացաւ եւ բարձունքներում մեր բնութեամբ նստեց Հօր աջ կողմում, Որից անբաժան էր Իր

Աստուածութեամբ: Պիտի գայ նոյն մարմնով, Հօր եւ Իր Աստուածութեան փառքով՝ մեռելներին յարութիւն տալու եւ աշխարհն արդարութեամբ դատելու՝ բարեգործներին տալով բարիքների ժառանգութիւնը եւ անվերջ թագաւորութիւնը, իսկ չարագործներին՝ իրենց գործերի համեմատ յաւիտենական ամօթը եւ տանջանքը:

Շնորհալի հայրապետն ինչպէ՞ս է վերջացնում Որդու Աստուածութեան եւ մարդեղութեան մասին իր խօսքերը:

–Հաւատքի այս ճշմարիտ դաւանութիւնը մեր միջի աստուածային տաճարի հիմքն է: Իսկ բարի գործերը այս հիմքի վրայ բարձրացրած շինութիւնն են, ինչպէս որ Տէրը Պետրոսի դաւանութիւնը հաստատեց որպէս վէմ՝ որպէս Իր Եկեղեցու իմանալի հիմք, եւ Իրեն՝ որպէս շինող, իսկ բոլոր ազգերից Իր ընտրեալների կատարած բարեգործութիւնները՝ որպէս շինանիւթ՝ քարի, փայտի եւ այլ պէտքերի փոխարէն:

Որդին ճարտարապետ է, եւ մենք՝ հրամանակատար մշակներ, ինչպէս ասաց Իր աշակերտներին. «Առանց Ինձ ոչինչ անել չէք կարող» [Յովհ. ԺԵ 5]: Պօղոսը եւս գրում է. «Ես Աստուծոյ իմաստութիւնը որպէս հիմք դրեցի, որ է Քրիստոս եւ Նրա ճշմարիտ հաւատքը» [տե՛ս Ա Կորնթ. Գ 10–11]... Իսկ շինելը գործերով է, որ կամենում է իւրաքանչիւր ոք՝ լինի չար, թէ բարի. եթէ մէկն այս հիմքի վրայ շինի «ոսկով», ասում է առաքեալը, որ արդարութիւնն ու ճշմարտութիւնն է. «արծաթով», որ մտքի մաքրութիւնն ու սրտի սրբութիւնն է. «թանկագին քարերով», որոնք բազմապատիկ առաքինութիւնների տեսակներն են՝ սէր, խոնարհութիւն, ողորմածութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն. սրանք եւ սրանց նման բաները արդար հոգիների կողմից հաւատքի հիմքի վրայ դրուած թանկարժէք քարերն են:

Իսկ մեղասէրների հոգիները, ասում է Պօղոս առաքեալը, իրենց շէնքը հաւատքի հիմքի վրայ շինում են ոչ թէ թանկարժէք եւ հաստատուն այս նիւթերով, այլ անարդ եւ դիւրին փչացող նիւթերով, այսինքն՝ փայտով, խոտով եւ եղէգով: Փայտը խորհրդանիշ է թանձրագոյն մեղքերի՝ սպանութեան, պոռնկութեան, գողութեան, յափշտակութեան եւ սրանց նման բաների, խոտը՝ սրտում հաւաքուած չար խորհուրդների, եւ եղէգը՝ դարշ խօսքերի, որ մարդիկ թափում են իրենց բերանից՝ լեզուն սատանայի գործիք դարձնելով, իրենց ընկերոջը թշնամութիւն անելով եւ անարգելով զանազան ու պէս-պէս հայհոյանքներով, որոնք գեղջկական բարբառով յիշոց են կոչւում, իսկ Սուրբ Գրքում՝ անէծք, թշնամանք եւ նման բաներ: Եղէգի են նմանւում նաեւ սուտը, չարախօսութիւնը, մատնութիւնը եւ սրանց նման այլ անիրաւ խօսքերը:

Այս երկու՝ իրար հակառակ թանկարժէք եւ անարգ շինանիւթերը, ասում է Պօղոսը, հուրը պէտք է ընտրի, որովհետեւ հրով պիտի յայտնուի Դատաւորը: Եթէ հաւատքի հիմքի վրայ շինուած գործը ոսկի է, արծաթ եւ թանկարժէք քարեր, որոնք չեն փչանում, այլ սրբւում են հրով, գործողը պիտի ապրի եւ վարձատրուի: Իսկ եթէ գործը խոտ է, եղէգ եւ փայտ, որոնք հեշտօրէն փչանում են նոյն կրակից, այն գործողը պիտի տուժի: Որովհետեւ ինչպէս ապարանքը միայն հիմքով չի կարող մարդկանց բնակութեան համար բաւական լինել եւ կարիք ունի պատերի, ձեղունների եւ այլ շինութիւնների, նմանապէս էլ միայն հաւատքով, առանց գործերի, ոչ ոք չի կարող իր անձը Աստուծոյ տաճար դարձնել:

Եւ ինչպէս որ գլուխն առանց մարմնի հետ կապուելու չի կարող կենդանի մնալ, ոչ էլ մարմինն՝ առանց գլխի, նմանապէս հաւատքն առանց գործերի եւ գործերն առանց հաւատքի, երկուսն էլ մեռած են՝ ըստ առաքեալի [տե՛ս Յակ. Բ 17]: Ուստի աղաչում եմ բոլորիդ, որ արդար գործերն էլ միացնէք ձեր ճշմարիտ հաւատքին, որն Աւազանի ծնունդից ստացաք եւ հաստատութեամբ պահում էք, որպէսզի միայն մէկ աչքով չլուսաւորէք ձեր հոգիները, այլ երկուսով պայծառանաք: Եւ մի՛ վստահէք անմիտների սնոտի յոյսին, որոնք ասում են, թէ միայն հաւատքի ճշմարտութիւնը բաւական է՝ քրիստոնեային փրկելու տանջանքներից եւ արժանի անելու արքայութեանը: Քանզի ինչպէս մեռած անդամները մարմնի գործունէութեանը ոչնչով պիտանի չեն, այնպէս էլ մեռած հաւատքը հոգուն զօրութիւն չի տալիս, այլ մանաւանդ՝ այն ունեցողին աւելի մեծ տանջանքների է պարտաւորեցնում:

ՀՈԳԻ

Ո՞վ է Հոգին:

–Հոգին, աստուածաբանական լեզուով, բխումն է Հօրից եւ փառակից է Որդուն: Հոգին կատարեալ Աստուած է Հօր եւ Որդու պէս:

Ի՞նչ է կոչւում աստուածային Երեք Անձերի միութիւնը:

–Ամենասուրբ Երրորդութիւն:

Երեք առանձին-առանձին Անձեր ինչպէ՞ս կարող են մի լինել:

–Երեք աստուածային Անձերը միեւնոյն բնութիւնն ունեն:

Աստուած անսկիզբ է եւ անեղ: Անսկիզբ նշանակում է սկիզբ կամ ծագում չունեցող, այսինքն՝ ինքնագոյ. իսկ անեղ նշանակում է անստեղծ, այսինքն՝ որեւէ մէկի կողմից չստեղծուած, չեղած:

Որդին ծագում կամ ծնունդ է Հօրից: Այս ծագումը կամ ծնունդն ըմբռնելի դարձնելու համար որպէս օրինակ են վերցւում լոյսը եւ կրակը. ինչպէս որ լոյսից լոյս է ծնւում կամ ծագում, եւ կրակից էլ՝ կրակ, այնպէս էլ Որդին ծնւում կամ ծագում է Հօրից:

Շնորհալին ի՞նչ է ասում այս մասին:

–Լոյսը եւ կրակը թէեւ զատ-զատ «անձեր» են, բայց միեւնոյն են «բնութեամբ». այդպէս էլ «Լոյս Որդին» ծնւում է «Լոյս Հօրից», կամ՝ Որդու Աստուածութեան կրակը ծագում է Հօր Աստուածութեան կրակից, հետեւաբար «այլ եւ այլ» չեն, այլ ունեն միեւնոյն բնութիւնը:

Ո՞րն է Հոգու պաշտօնը:

–Ինչպէս բացատրուած է Հաւատամքի մէջ, Հոգին է, որ խօսել է Հին Ուխտում՝ Սուրբ Գրքի (Օրէնք եւ Մարգարէներ) մէջ, նոյն Հոգին է, որ Յորդանան իջաւ Յիսուս Քրիստոսի Մկրտութեան ժամանակ, քարոզեց առաքեալների բերանով եւ գրուածքներով. նոյն Հոգին է, որ Պենտեկոստէին, Վերնատանը, իջաւ առաքեալների վրայ եւ բնակուեց սուրբերի մէջ:

Շնորհալին ինչպէ՞ս է բացատրում Երրորդութեան Երեք Անձերի պաշտօնը:

–Հայրը կամեցաւ ստեղծել երեւելի եւ աներեւոյթ արարածները, Որդին անգոներից գոյացրեց, եւ Սուրբ Հոգին իմաստութեամբ զարդարեց նրանց:

Աւետարանում ինչպէ՞ս է նկարագրուած Հոգին:

–Որպէս Ներշնչում, Իմաստութիւն եւ Մխիթարութիւն: Ինչպէս օրինակ՝ սուրբ Կոյս Մարիամի յղութիւնը Սուրբ Հոգո՛վ է տեղի ունենում [Մատթ. Ա, Ղուկ. Ա]: Յիսուս Քրիստոս Հոգո՛վ է, որ պիտի մկրտի [Մարկ. Ա 8]: Սուրբ Հոգի՛ն է, որ ներշնչում եւ իմաստութիւն է տալիս խօսելու [Մարկ. ԺԳ, Ղուկ. ԺԲ]: Յիսուս Քրիստոսի հրաշագործութիւնների մէջ նոյնպէս ներկայ է Սուրբ Հոգին [Մատթ. ԺԲ]: Սուրբ Հոգին է Մխիթարիչը [Յովհ. ԺԴ], եւ աններելի մեղք է Սուրբ Հոգու դէմ հայհոյելը [Մատթ. ԺԲ, Մարկ. Գ, Ղուկ. ԺԲ]:

Առաքելական ժամանակներում Սուրբ Հոգու ներգործութիւնն ի յայտ է գալիս մեծ արդիւնաւորութեամբ: Մասնաւորապէս ուշադրաւ են Գործք առաքելոցի պատմութիւնները Սուրբ Հոգու ներգործութեան մասին:

Սուրբ Հոգու մասին այս բոլոր ասուածներից ի՞նչ է հետեւում:

–Հետեւում է, որ Սուրբ Հոգին, որպէս կատարեալ Անձնաւորութիւն, կենդանի զօրութիւն է քրիստոնէական կեանքում: Նա անձնաւորում է Սէրը, Ճշմարտութիւնը, Իմաստութիւնը, Շնորհը. հաւատացեալներին Աստուծոյ տաճար է դարձնում եւ նրանց բազմութեամբ կազմակերպում Եկեղեցին. վերջապէս՝ առաջնորդում է հաւատացեալներին նրանց կեանքի ողջ ընթացքում՝ պէս-պէս շնորհներով զարդարելով նրանց ի նպաստ մարդկանց մէջ Աստուծոյ թագաւորութեան հաստատման եւ մշտնջենաւորման:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ի՞նչ է նշանակում *խորհուրդ*:

–Խորհուրդ, բառի կրօնական եւ աստուածաբանական իմաստով նշանակում է անտեսանելի բաների յայտնութիւն. ինչպէս օրինակ Մկրտութեան մէջ մկրտուողի քրիստոնեայ դառնալը խորհուրդ է ծածուկ մի բան, եւ այն ծէսն ու արարողութիւնը, որով կատարուում է Մկրտութիւնը, խորհուրդի իրական արտայայտութիւնն է: Հետեւաբար, խորհուրդ նշանակում է ոչ միայն ծածուկ մի բան, այլ նաեւ դրա արտայայտութեան արտաքին ձեւերն ու կերպերը կամ արարողութիւններն ու ծէսերը:

Ի՞նչ կերպով ենք ըմբռնում խորհուրդը:

–Խորհուրդն ըմբռնում ենք հաւատքով եւ երկիւղածութեամբ, քանզի քրիստոնէական սուրբ կրօնը, ինչպէս տեսանք, ինքնին հիմնուած է հաւատքի վրայ: Հետեւաբար, առանց հաւատքի եւ առանց երկիւղած նկարագրի անհնար է ընդունել խորհուրդը:

Ո՞րն է խորհուրդների նպատակը:

–Քրիստոնէական կեանքի համար խորհուրդները հոգեւոր ազդակներ ու միջոցներ են՝ միշտ մնալու աստուածային շնորհի մէջ, ապրելու հոգեւոր կեանքի բարձրութեան վրայ եւ գործերով ցոյց տալու, թէ Յիսուս Քրիստոսով աւետարանուած փրկութիւնը հոգեւոր իրականութիւն է դարձել հաւատացեալների համար իրենց հաւատքի եւ կեանքի մէջ: Այս ըմբռնումով պէտք է դիտել խորհուրդները: Այս պատճառով ոչ միայն կարեւոր է գիտենալ խորհուրդների աստուածաբանական նշանակութիւնը, այլ մանաւանդ հրամայական պարտք է կեանքում եւ կենցաղում արտայայտել նրանց կրօնական ու հոգեւոր իմաստը, նրանց բարոյագիտական գեղեցկութիւնը: Եթէ այս գիտակցութիւնը չդնենք Քրիստոնէականի ուսման մէջ, եթէ երկիւղածութեամբ չսերտենք խորհուրդները, չենք կարող զգալ աստուածային օրհնութիւնն ու շնորհը մեզ վրայ:

Որո՞նք են Եկեղեցու խորհուրդները:

–Ուղղակի մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից հաստատուած խորհուրդներն են Մկրտութիւնը եւ Հաղորդութիւնը: Բայց, ինչպէս կտեսնենք յետոյ, Եկեղեցին խորհուրդների թիւը բարձրացրել է եօթի, որոնք են.

ա) Մկրտութիւն,

բ) Դրոշմ,

գ) Ապաշխարութիւն,

դ) Հաղորդութիւն,

ե) Պսակ,

զ) Կարգ հիւանդաց կամ Վերջին օծում,

է) Կարգ ձեռնադրութեան:

ԳԱՆՁԱՍԱՐ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Մկրտութիւնը:

–Մկրտութիւն, որպէս բառ, նշանակում է լուացում, մաքրութիւն: Բայց կրօնական իմաստով նշանակում է այն արարողութիւնը, որ կատարւում է ջրով՝ սրբելու, մաքրելու համար մկրտուողի մեղքը, որը, ըստ աստուածաբանների, կոչւում է առաջին կամ սկզբնական մեղք: Մկրտութիւնը կոչւում է նաեւ վերստին ծնունդ, որովհետեւ մկրտուողը սրբւում է, մաքրւում իր մեղքից եւ նորից ծնւում Աւազանից: Այս նոր եւ հոգեւոր ծնունդը մկրտուածին դարձնում է Քրիստոսի Եկեղեցու անդամ:

Ի՞նչ ենք հասկանում՝ առաջին մեղք ասելով:

–Սուրբ Գրքից սովորում ենք, որ Ադամը չպահեց աստուածային պատուէրն իր դրախտային կեանքում. այս պատուիրանազանցութիւնը կամ անհնազանդութիւնը, ըստ աստուածաբանների, կոչւում է առաջին (սկզբնական) մեղք, որ Ադամից ժառանգաբար սերնդէ սերունդ անցել է բոլոր մարդկանց:

Գրիգոր Տաթեւացին այսպէս է սահմանում այդ մեղքը. «Ադամի մեղքն այն է, որ կորցրեց արդարութիւնը եւ մեղքով ու ցանկութեամբ ծնեց իր որդուն. այս է սկզբնական մեղք ասուածը, որը չի քավւում, եթէ չի մկրտւում Քրիստոսի մահով»:

Մկրտութիւնն անհրաժեշտ պայմա՞ն է՝ քրիստոնեայ լինելու համար:

–Այո՛: Մկրտութեան կարեւորութիւնը հասկանալու համար պէտք է գիտենալ, որ նոյն Ինքը՝ մեր Տէրը, նոյնպէս մկրտուեց Յորդանան գետում Յովհաննէս Մկրտչի կողմից [տե՛ս Մատթ. Գ 13–17, Մարկ. Ա 9–11, Ղուկ. Գ 2–22, Դ 1]: Յիսուս, երբ Իր առաքեալներին ուղարկեց քարոզութեան, պատուիրեց նրանց. «Սրանից յետոյ գնացէ՛ք, Աւետարանի աշակե՛րտ դարձրէք բոլոր ազգերին, մկրտեցէ՛ք նրանց Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» [Մատթ. ԻԸ 19]:

Մեր Տէրն ինչո՞ւ մկրտուեց. մեղաւո՞ր էր հասարակ մարդկանց պէս:

–Քա՛ւ լիցի: Յիսուս Քրիստոս կատարեա՛լ մարդ էր, այսինքն՝ մեղք չունէր. այլ խօսքով՝ մեր Տէրը մարդկային բոլոր հանգամանքներն ունէր, բացի մեղքից: Բայց մկրտուեց մեղաւոր մարդկութեանը ցոյց տալու համար, թէ Մկրտութիւնն անհրաժեշտ պայման է վերստին կամ հոգեւոր ծննդեան համար:

Պօղոս առաքեալն ինչպէ՞ս է բացատրում հոգեւոր ծնունդը:

–Տիտոսին ուղղուած թղթի Գ գլխում ասում է. «Մի ժամանակ մենք էլ էինք անմիտ, անհնազանդ, մոլորուած, ծառայում էինք ցանկութիւնների եւ պէս-պէս անառակութիւնների, չարութեամբ եւ նախանձով էինք ապրում, ատելի էինք եւ ատում էինք միմեանց: Իսկ երբ մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնը եւ մարդասիրութիւնը յայտնուեց... փրկեց մեզ վերստին ծննդեան Աւազանի միջոցով եւ Սուրբ Հոգու նորոգութեամբ» [Տիտոս Գ 3–5]:

Կարո՞ղ ես Աւետարանից էլ յիշել մի նշանաւոր հատուած Մկրտութեան մասին:

–Այո՛: Յովհաննու Աւետարանի Գ գլխում նկարագրուած է փարիսեցի Նիկոդեմոսի գիշերային տեսակցութիւնը Յիսուս Քրիստոսի հետ, որի ժամանակ Յիսուս ասում է, թէ Աստուծոյ թագաւորութիւն մտնելու համար մարդ պէտք է վերստին ծնուի, այսինքն՝ մկրտուի, որովհետեւ ով չի ծնւում ջրից եւ Հոգուց, չի կարող մտնել Աստուծոյ թագաւորութիւն, քանզի մարմնից ծնուածը մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ հոգի: Եւ քամու օրինակով բացատրում է հոգեւոր ծնունդի խորհուրդը. «Քամին ուր ուզում է, փչում է, եւ նրա ձայնը լսում ես, բայց չգիտես՝ որտեղից է գալիս կամ ուր է գնում. այդպէս է եւ ամէն ոք, որ ծնուած է Հոգուց» [Յովհ. Գ 8]:

Ո՞րն է Մկրտութեան պայմանը:

–Հաւատքը: Մկրտուողը պէտք է հաւատայ Ամենասուրբ Երրորդութեանը, որովհետեւ, ինչպէս տեսանք, Յիսուս Քրիստոս ասաց. «Մկրտեցէ՛ք նրանց յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու»: Եւ դարձեալ՝ «Նա, ով հաւատում է եւ մկրտւում, պիտի փրկուի, իսկ նա, ով չի հաւատում, պիտի դատապարտուի» [Մարկ. ԺԳ 16]:

Ուրեմն, մկրտուողը պէտք է խելահաս լինի, որպէսզի գիտենայ, թէ ինչ է հաւատք եւ այլն:

-Այո՛: Մկրտութեան եկողը պէտք է գիտենայ, թէ ինչ է հաւատք, ինչ է Ամենասուրբ Երրորդութիւն եւ այլն, որպէսզի գիտակցութեամբ մկրտուի եւ փրկուի իր հաւատքով:

Եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ ենք մկրտում նորածին փոքրիկներին, որոնք դեռեւս ոչինչ չգիտեն:

-Այն շատ պարզ եւ շատ բնական պատճառով, որ ծնողները պարտաւոր են հոգալ իրենց զաւակների ե՛ւ մարմնաւոր, ե՛ւ հոգեւոր պէտքերը: Հայրերն ու մայրերը հոգում են իրենց զաւակների ապրուստը, նրանց դպրոց ուղարկում, մայրենի լեզուն սովորեցնում, իրենց ազգային զգացումները փոխանցում եւ այլն, եւ շատ բնական է, որ իրենց զաւակներին դաստիարակեն նաեւ իրենց կրօնով. այս է պատճառը, որ մկրտել են տալիս իրենց փոքրիկներին, որոնք մեծանում են իրենց ծնողների ազգային եւ կրօնական կեանքով եւ նրանց հաւատքով:

Բայց աւելի ճիշտ չէ՞, որ փոքրիկները մեծանան, քիչ թէ շատ խելահաս դառնան եւ իրենց գիտակցութեամբ մկրտուեն:

-Սա շատ նուրբ խնդիր է: Կրօնական ճշմարտութիւնները եւ խորհուրդները հասկանալու համար ո՞րն է խելահասութեան տարիքը: Հայրն ու մայրը ապատո՞ւմ են, որ իրենց փոքրիկները խելահաս դառնան, այսինքն տարիքն ունենան եւ նրանից յետոյ միայն գնան դպրոց կամ որոշեն իրենց ազգութիւնը: Սա անբնական է եւ հակառակ ողջամտութեան: Ծնողները շատ բնական կերպով, իրենց կեանքի պայմանների համեմատ եւ իրենց ազգութեան ու կրօնի համաձայն են դաստիարակում իրենց փոքրիկներին:

Ուրեմն, մկրտչականները սխալո՞ւմ են:

-Անտարակո՛յս: Յիսուս Քրիստոս, երբ Իր աշակերտներին պատուիրեց գնալ, մկրտել բոլոր հեթանոսներին, տարիքի խօսք չդրեց «Գործք առաքելոցից» գիտենք, որ կային տնով մկրտուողներ, այսինքն՝ ամբողջ ընտանիքներ՝ իրենց մեծ ու փոքր անդամներով:

Մկրտուելը բաւակա՞ն է՝ քրիստոնեայ լինելու համար:

-Այո՛, պայմանով, որ մկրտուածներն աճեն իրենց ուղղափառ հաւատքի եւ շնորհի մաքուր կեանքի մէջ: Որովհետեւ մկրտուածների զօրաւոր հաւատքով եւ մաքուր կեանքով է, որ պայծառանում է եկեղեցին, եւ փառաւորւում քրիստոնէութիւնը, քանի որ Մկրտութեան նպատակն է արքացնել մարդկանց եւ Աստուծոյ որդեգիրը դարձնել քրիստոնէական եկեղեցու անդամակցութեամբ:

Մկրտութիւնն ինչպէ՞ս է կատարւում Հայաստանեայց Եկեղեցում:

-Մկրտութիւնը մեր եկեղեցում կատարւում է ջրով եւ քահանայութեան աստիճան ունեցող պաշտօնեայի ձեռքով:

Մկրտուողը գալիս է կնքահօր հետ, մկրտիչ քահանան հարցաքննում է կնքահօրը, յետոյ բռնում փոքրիկին եւ երեք անգամ ընկղմում Աւազանի ջրի մէջ Ամենասուրբ Երրորդութեան անունով՝ ասելով. «...Մատաս Յիսուսի Քրիստոսի, եկեալ յերախայութենէ ի Մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. գնեալ Արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի՝ լինել ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն Սրբոյ»:*

Ի՞նչ ենք հասկանում՝ *երախայութիւն* ասելով:

-Երախայ բառն այստեղ նշանակում է չմկրտուած անձ: Քրիստոնէական եկեղեցու հին դարերում Մկրտութեան եկողները որոշուած ժամանակից 40 օր առաջ սկսում էին պատրաստուել սուրբ խորհուրդն ընդունելու, այսինքն՝ հրահանգւում էին քրիստոնէական գիտելիքների մէջ եւ յետոյ մկրտւում: Քառասնօրեայ պատրաստութեան այս վիճակը կոչւում է երախայութիւն:

Հիմա երախայութիւն կա՞յ:

-Եթէ մէկը ծնուած է քրիստոնեայ ծնողներից, սակայն իր մանկութեան ժամանակ չի մկրտուել եւ չափահաս է դարձել, կոչւում է երախայ: Այլ կրոններից եկող չափահասները եւ փոքրիկները նոյնպէս, որոնք ուզում են՝ քրիստոնեայ լինել, պատրաստւում կամ երա-

* Կնքահայր նշանակում է հայր կնիքի կամ կնունքի: Կնիք նշանակում է դրոշմ, լայն առումով՝ ընդգրկում է նաեւ մկրտութիւնը:

խայտանում են, ապա՝ մկրտում:

Հաւատամքի մէջ ասում է՝ *մի Մկրտութիւն.* ո՞րն է դրա բացատրութիւնը:

-Այս մասին արդէն խօսեցինք (էջ 24): Ինչպէս որ մի (մէկ) է Յիսուս Քրիստոսի Եկեղեցին, այնպէս էլ մի (մէկ) է քրիստոնէական Մկրտութիւնը, այսինքն՝ որեւէ անձ միայն մէկ անգամ է մկրտւում քրիստոնեայ դառնալու համար. այլ խօսքով՝ Մկրտութիւնը չկրկնուող խորհուրդ է:

Ուրեմն, քրիստոնէական Եկեղեցում չկա՞յ կրկնամկրտութիւն:

-Սկզբունքօրէն չկայ: Առաքեալը յայտարարում է. «Մի Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն» [Եփես. Դ 5]: «Զգիտէ՞ք, որ մի անգամ մկրտուեցիք Յիսուս Քրիստոսով, Նրա մահով մկրտուեցիք» [Հռոմ. Զ 3]: Բայց նախանձը, տգիտութիւնը երբեմն այն աստիճան կուրացրին յարանուանական Եկեղեցիների պաշտօնեաներին, որ նախատինքի համար մկրտուածներին նորից էին մկրտում, որի դէմ ստատիկ յանդիմանութիւն ունի Պօղոս առաքեալը [տե՛ս Եբր. Զ 4-6]:

Հայաստանեայց Եկեղեցու մէջ Մկրտութեան Աւազանի անշարժութիւնը, ըստ սուրբ Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի, նշանակն է Մկրտութեան խորհուրդի անյողդողդութեան:

Ո՞րն է Մկրտութեան խորհուրդի արդիւնքը:

-Մկրտուելով՝ մարդիկ ոչ միայն սրբւում են մեղքից եւ որդեգրւում Աստծուն՝ շնորհի կեանքի մէջ, այլեւ եղբայրանում են իրար որպէս սուրբ Աւազանից ծնուածներ: Քրիստոնէական Եկեղեցու մարդկային հաւասարութեան, եղբայրութեան եւ արդարութեան խորհուրդներն իրագործւում են Մկրտութեան արդիւնքով. այս մասին ասում Պօղոս առաքեալը. «Բոլորդ Յիսուս Քրիստոսի հաւատքով Աստուծոյ որդիներ էք: Բոլորդ, որ մի անգամ մկրտուեցիք Քրիստոսով, Քրիստոս էք հագել, խտիր չկայ ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի, զի դուք բոլորդ մէկ էք Յիսուս Քրիստոսով» [Գաղատ. Գ 27-28]:

Ո՞րն է մկրտուածների պարտքը:

-Որպէսզի մկրտուածները կարող լինեն պահելու եւ զգալու Մկրտութեան շնորհը, պէտք է արթուն լինեն: Խելահաս մկրտուածները պէտք է կենդանի պահեն իրենց քրիստոնէական հաւատքը, գիտակցութեամբ ապրեն եւ անհոգութեան կամ անտարբերութեան մէջ չթմրեցնեն իրենց միտքն ու հոգին: Մկրտութեամբ սրբացած եւ փրկուած հոգիները պէտք է միշտ կապուած մնան իրենց Փրկչին:

Այդ դէպքում ի՞նչ պիտի լինի փոքրիկ մկրտուածների վիճակը:

-Փոքրիկը դեռեւս չունի չափահասի կարողութիւնները, նա ամբողջովին կախուած է իր ծնողներից, հետեւաբար ծնողների կամքը, գիտակցութիւնը, հաւատքը, նրանց պարկեշտ կեանքն ու կենցաղը օրինակ եւ առաջնորդ են լինում նրանց: Այդ պատճառով էլ ծնողները հիմնովին պատասխանատու են իրենց փոքրիկների դաստիարակութեան եւ զարգացման համար նրանց կրօնական կեանքում:

Ո՞րն է կնքահօր պարտքն ու պաշտօնը:

-Ցաւօք, կնքահայրութիւնը հիմա անուանական մի պաշտօն է դարձել: Հին ըմբռնումով՝ կնքահայրն է մկրտուածի դաստիարակը: Ծնողների չափ եւ նրանցից առաւել մեծ էր կնքահօր իրաւունքը իր հոգեւոր սանի նկատմամբ, եւ այս էր պատճառը, որ նրանք դառնում էին հոգեւոր ազգականներ եւ չէին կարող խնամիութիւն անել միմեանց հետ:

Ուրեմն, աւելորդ մի պաշտո՞ն է կնքահայրութիւնը:

- Ո՛չ: Ամէն մի պաշտօնական ընդունելութեան ժամանակ որեւէ մէկի ներկայացումը կամ ընծայումը կատարւում է մի ուրիշի կողմից, այսինքն՝ ընտանիքի անդամներից, բարեկամներից կամ ազգականներից մէկը ներկայացնում է ընծայելին, այսպէս էլ Մկրտութեան եկողը ներկայացւում կամ ընծայւում է Եկեղեցուն արդէն կնքուած մէկի կողմից: Այդ անձը կնքահայրն է: Ցանկալի է, որ կնքահայրերն այս արարողական պարտականութիւնից զատ փորձեն վերադառնալ անցեալի գեղեցիկ սովորութիւններին եւ հոգ տանեն իրենց սանիկների հոգեւոր կրթութեան համար:

Որո՞նք են փոքրիկների եւ առհասարակ բոլոր մկրտուածների կրօնական դաստիարակութեանը զարկ տալու միջոցները:

–Եկեղեցում կատարուած աստուածային պաշտամունքը եւ նրանից անբաժան կենդանի խօսքը, քարոզութիւնը:

Բարեկարգ եւ պայծառ Եկեղեցու աստուածային պաշտամունքը միշտ հոգեւոր արթուն կեանքի ազդեցիկ խթան է: Մկրտուածները չպէտք է թմրեն, չպէտք է քնեն կեանքի հոգեւոր պահանջների նկատմամբ: Որովհետեւ Մկրտութեան նպատակն է ոչ թէ մաքրել մարմնի աղտը, այլ արթուն պահել մարդու խղճմտանքի վկայութիւնը [տե՛ս Ա Պետր. Գ 21]:

Ցիսուս Քրիստոս սիրու՞մ էր փոքրիկներին:

–Այո՛: Մեր Փրկիչն ասաց. «Թո՛յլ տուէք այդ փոքրիկներին եւ մի՛ արգելէք նրանց ինձ մօտ գալ, որովհետեւ այդպիսիներին է երկնքի արքայութիւնը» [տե՛ս Մատթ. ԺԹ 14, Մարկ. Ժ 14, Ղուկ. ԺԸ 16]: Մեր մայրենի Եկեղեցու պարտքն է փոքրիկներին բերել, մօտեցնել Քրիստոսին՝ նրանց դաստիարակելով հոգեւորապէս, համաձայն մեր հայեցի աւանդութիւնների: Այս նպատակով հայ եկեղեցիների կողքին հաստատուած են հայ կիրակնօրեայ դպրոցները՝ փոքրիկների հոգեւոր դաստիարակութիւնն աւելի արդիւնաւոր դարձնելու համար:

ԴՐՈՇՄ

Ի՞նչ է Դրոշմը:

–Դրոշմը Մկրտութեան անբաժան մասն է: Ջրով մկրտուելուց անմիջապէս յետոյ երախան դրոշմւում կամ օծւում է մեռոնով կամ սուրբ իւղով: Դրոշմ նաեւ նշանակում է կնիք, եւ այս պատճառով Մկրտութիւնը կոչւում է նաեւ Կնունք:

Ինչո՞ւ է Դրոշմը խորհուրդ:

–Որովհետեւ խորհրդաւորում է Սուրբ Հոգու շնորհը: Սուրբ Հոգին յայտնուեց մեր Փրկչի Մկրտութեան ժամանակ եւ աղաւնակերպ իջաւ Նրա վրայ: Սրբալոյս մեռոնը խորհրդանշում է Սուրբ Հոգու էջքը մկրտուածների վրայ:

Դարձեալ՝ օծումը աստուածային ճշմարտութիւնները սովորելու եւ պահելու երաշխիք է: Հոգով արթուն քրիստոնեան բնաւ չի մոլորուի ճշմարիտ հաւատքի կեանքում, քանզի օծումով ստացած Սուրբ Հոգու շնորհն անբաժան է նրանից [տե՛ս Ա Յովհ. Բ 26, հմմտ. Եփես. Ա 13, Դ 30]:

Սուրբ Հոգին միայն աղաւնակե՞րպ է յայտնուել:

–Ո՛չ, կրակի ձեւով էլ է յայտնուել, օրինակ՝ Հոգեգալստի պատմութեան մէջ կարդում ենք, որ յայտնւում է հրէ լեզուների ձեւով, որովհետեւ հուրը մաքրութեան խորհրդանշանն է. ինչպէս որ ամէն ներսած եւ փտած բան ջնջւում է կրակով, այնպէս էլ Սուրբ Հոգին շնորհի մէջ է պահում մկրտուածներին եւ պաշտպանում նրանց հոգեւոր նեխումից ու փտումից:

Ո՞րն է հայ ծնողների պարտքը:

–Քանի որ Մկրտութիւնն ու Դրոշմը մեղքերից սրբուելու եւ Աստուծոյ որդեգիր դառնալու անհրաժեշտ պայմաններ են, ուստի անհրաժեշտ է, որ հայ ծնողները, յարգելով իրենց մայրենի Եկեղեցու հնաւանդ սովորութիւնները, մկրտել եւ կնքել տան իրենց փոքրիկներին նրանց ծնուելուց ուշ օր յետոյ, եթէ բժշկական արգելող պատճառ չկայ:

Փոքրիկներին ամիսներով եւ նոյնիսկ տարիներով անկնունք թողնելն ամենեւին ներելի չէ, եւ այն ծնողները, ովքեր առանց լուրջ պատճառի անհոգ ու անտարբեր են մնում եւ ժամանակին մկրտել չեն տալիս իրենց փոքրիկներին, ծանրապէս պատասխանատու են Աստուծոյ, ինչպէս նաեւ հոգեւորապէս անխնամ թողնուած իրենց զաւակների առջեւ:

Ի՞նչ է մեռոնը կամ սուրբ իւղը:

–Մեռոն կամ միւռոն յունարէն բառ է եւ նշանակում է անուշահոտ իւղ, իսկ այստեղ մասնաւորապէս նշանակում է այն իւղը, որ գործածւում է եկեղեցում՝ դրոշմելու համար մկրտուածներին եւ օծելու համար քահանաներին, եկեղեցիները եւ եկեղեցական որոշ նուիրական իրեր:

Ի՞նչն է մեռոնի նիւթը, եւ ո՞վ է պատրաստում այն:

–Մեռոնի բուն նիւթը ձիթենու իւղն է՝ ձէթը, բայց նրա հետ նաեւ խառնում են 40-ից աւելի անուշահոտ նիւթեր (ծաղիկներ, արմատներ), որոնցից ամենագլխաւորը բալասանն է: Բալասան է թէ՛ ծառի, թէ՛ նրա ծաղկի եւ թէ՛ նրա իւղի անունը: Մեռոնի ծառ էլ է անուանուել բալասանը, որի իւղը, երբ խառնւում է ձէթի հետ, մակարդւում է:

Մեր Եկեղեցում մեռոն պատրաստելու եւ օրհնելու իրաւունքը կաթողիկոսին է վերապահուած:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է նշանակում Ապաշխարութիւն:

–Ապաշխարել նշանակում է հեծել, ցաւել, այսինքն՝ զղջումով լաց լինել կատարած յանցանքի կամ մեղքի համար:

Ինչո՞ւ է Ապաշխարութիւնը խորհուրդ:

–Մարդ արարածը մեղանչական է: Թէեւ Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդներով նա սրբւում է իր մեղքերից եւ որդեգրւում Աստծուն, սակայն բազմիցս մեղանչում է իր աստուածային որդեգրութեան պայմանների դէմ. եւ երբ անդրադառնում է իր մեղքերին, զղջում եւ լաց է լինում, այսինքն՝ ապաշխարում է, ապա Աստուած ներում է նրան, եւ վերահաստատւում է նրա որդեգրութիւնը: Մարդու հոգեկան կեանքում կատարուած այս փոփոխութիւնը խորհուրդ է:

Սրանից չի՞ հետեւում, թէ ապաշխարութիւնը քաջալերում է մեղաւորութիւնը:

–Ուզում էք ասել՝ քանի որ ապաշխարութիւնը մեղքերից սրբուելու միջոց է, մարդը կարող է գիտակցաբար մեղանչել, յետոյ ապաշխարել ու սրբուել: Այսպէս մտածողներ եղել են եւ հիմա էլ կան: Սակայն այսպէս մտածելն իսկ ներելի չէ որեւէ պարկեշտ մարդու: Քրիստոնէական կրօնի սկզբունքն է՝ աստուածային որդեգրութեան շնորհը կենդանի պահել մտքում եւ հոգում: Եւ եթէ քրիստոնեան, հակառակ իր անկեղծ ջանքերի, որեւէ կերպ մեղանչի եւ զգայ, որ մեղքով արատաւորուել է իր քրիստոնէական նկարագիրը, ապա կարող է ապաշխարել եւ թողութիւն ստանալ: Իսկ եթէ գիտակցաբար եւ դիտմամբ մեղանչի, ապա կչարաշահի Աստուծոյ ներողամտութիւնը, որը ինքնին ծանր մեղք է:

Ուրեմն, սահման կա՞յ Ապաշխարութեան մէջ:

–Աստուած չի կամենում մեղաւորի մահը: Անսահման եւ անքննելի է Նրա գթութիւնը: Բայց սա պատճառ չէ, որ քրիստոնեան չարաչար սխալ հասկանայ աստուածային գթութեան նշանակութիւնը: Ընդհակառակը, նրա պարտքն է արթուն եւ պատրաստ գտնուել ամէն մի

պատահականութեան եւ փորձութեան դէմ՝ մեղքի հրապոյրներով չտարուելու համար:

Հետեւաբար մեղանչողը պէտք է.

ա) սրտանց զղջայ իր գործած մեղքերի համար եւ վճռի այլեւս չմեղանչել.

բ) ջերմեռանդութեամբ եւ երկիւղածութեամբ աղօթի, խոստովանի Աստուծոյ առջեւ եւ թողութիւն խնդրի, որովհետեւ Աստուծոյ համբերութիւնն ու քաղցրութիւնը մեղաւորին առիթ են ընձեռում ապաշխարելու եւ արդարանալու [տե՛ս Հռոմ. Բ 4]:

գ) միշտ յիշի, որ ինքը փրկուել է Յիսուս Քրիստոսի Արիւնով եւ պարտաւոր է հետեւել Նրա անմեղ կեանքին:

Աղօթքը չմեղանչելու ամենագործնական միջոցն է: Ճշմարիտ աղօթողը մեղք չի գործում եւ չի կարող գործել:

Ի՞նչ է խոստովանութիւնը:

-Երբ մարդը ճանաչում է իր կատարած սխալը, ընդունում այն եւ յայտարարում իր խղճմտանքի, Աստուծոյ եւ Եկեղեցու առջեւ, սա կոչւում է խոստովանութիւն, որին անմիջապէս եւ անպայման հետեւում է ապաշխարութիւնը:

Ինչպէս տեսնում ենք տրուած բացատրութիւններից, խոստովանութիւնն ամենից առաջ կատարւում է մարդու խղճմտանքի մէջ՝ դառնալով ապաշխարութեան հիմքը.՝ այլ խօսքով, հնարաւոր չէ ապաշխարել առանց խոստովանելու:

Ապաշխարութեան համար ի՞նչ կանոններ ունի Հայաստանեայց Եկեղեցին:

-Մեր Եկեղեցին ունի քրիստոնէական վաղեմի Եկեղեցու կանոնները, այսինքն՝ պահք, աղօթք, հրապարակային խոստովանութիւն, զղջում, առաքինական եւ մարդասիրական գործեր ու պարտաւորութիւններ եւ այլն:

Ապաշխարութեան օրերին աստուածային պաշտամունքի սաղմոսներն ու աղօթքները, շարականներն ու ընթերցուածները, հրապարակային խոստովանութեան ձեւերն ու կերպերը այնպիսի յօրինուածք եւ կարգաւորութիւն ունեն մեր Եկեղեցում, որ անկարելի է նրանցից չազդուել եւ չապաշխարել:

Ի՞նչ կարիք կայ այդպիսի արտաքին միջոցների. աւելորդ չե՞ն դրանք:

-Ո՛չ: Եկեղեցու ժողովուրդն ինքն իր մէջ մի ամբողջական միութիւն է կազմում: Նրա անդամները ոչ միայն այլեւայլ յարաբերութիւններով ու կապերով միացած են իրար հետ, այլ նաեւ եղբայրացած են սուրբ Աւազանի Մկրտութեամբ, այնպէս որ նրանցից մէկի առաւելութիւնը կամ թերութիւնը ազդում է ամբողջ Եկեղեցու վրայ: Սրա համար հրապարակային աղօթքները, հրապարակային խոստովանութիւնները, իբրեւ Եկեղեցու շինութեան պայման, ուղղակի բխում են ժողովրդից, որ նոյն ինքը Եկեղեցին է:

Մի՞շտ է նրանց կարծիքը, ովքեր ասում են, թէ աւելորդ է խոստովանութիւնը եկեղեցում, տգէտ եւ անարժան քահանաների առջեւ:

-Ո՛չ: Երբ մարդիկ իրենց անմեղութիւնը կամ իրաւունքները պաշտպանելու համար դիմում են դատական ատեաններին, մի՞թէ նայում են դատաւորների մեղաւոր կամ առաքինի լինելուն: Անշուշտ ոչ: Այսպէս էլ նրանք, ովքեր կարծում են, թէ իրենք արդար են, իսկ ուրիշները՝ մեղաւոր, իրենք արժանաւոր են, իսկ ուրիշները՝ անարժան, պէտք է յիշեն Աւետարանի փարիսեցու եւ մաքսաւորի առակը [տե՛ս Ղուկ. ԺԸ 9-14]:

Ուրեմն, պէտք չէ՞ նկատի ունենալ հոգեւոր պաշտօնեայի արժանիքը:

-Ընդհակառակը: Երանի՜ թէ բոլոր հոգեւորականները սուրբեր լինէին: Այստեղ խնդիրը հոգեւորականի արժանիքը չէ, այլ քրիստոնեայ մարդու պարտականութիւնը: Մարդ ուրիշներին քննադատելուց առաջ պէտք է իրեն դատի ու քննի: Իրար դատելուց զգուշանալու մասին է խօսում Պօղոս առաքեալը Հռոմ. ԺԴ գլխում:

Որեւէ մէկը պէտք չէ հպարտանայ եւ իր հոգեւոր հովուից աւելի սուրբ եւ արժանաւոր կարծի իրեն, այլ թող խոնարհուի նրա առջեւ,

ով կոչուած է Աստուծոյ կողմից՝ լսելու հաւատացեալների խոստովանութիւնը:

Ուրեմն, ո՞րն է մեր պարտքը:

–Աշխարհական թէ հոգեւորական, մեր բոլորի պարտքն է աշխատել մաքուր լինել մեր խղճի եւ Աստուծոյ առջեւ, սիրով եւ լայնախոհությամբ յարգել մեր սուրբ Եկեղեցու կարգ ու կանոնը, գործնականապէս աշխատել նրա բարեկարգութեան եւ պայծառութեան համար:

Ցաւօք, շատերը չգիտեն խոստովանութեան եւ ապաշխարութեան նշանակութիւնը եւ չեն զգում դրանց պէտքն իրենց կեանքում, կան նաեւ այնպիսիք, ովքեր դրանք համարում են ձեւական, հետեւաբար եւ՝ աւելորդ բաներ:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է նշանակում Հաղորդութիւն:

–Հաղորդուել նշանակում է մի բանի մասնակից, կցորդ լինել, միանալ, իսկ այստեղ նշանակում է խորհրդաբար միանալ Յիսուս Քրիստոսին՝ մասնակցելով սուրբ Պատարագի խորհուրդին: Ահա թէ ինչու Հաղորդութիւն նշանակում է նաեւ սուրբ Սեղանի վրայ օրհնուած եւ պատարագուած հացն ու գինին:

Ուրեմն, ո՞րն է Հաղորդութեան խորհուրդը:

–Յիսուս Քրիստոսի Մարմնի եւ Արեան խորհուրդն է, որ հացի եւ գինու ձեւով հաստատուեց Քրիստոսի կողմից Իր յիշատակի համար եւ որպէս հոգեւոր սնունդ՝ հաւատացեալների համար:

Քրիստոս ե՞րբ հաստատեց այս խորհուրդը:

–Պասեքի կամ Զատկի ընթրիքի սեղանի շուրջ բազմել էին Քրիստոս եւ Նրա տասներկու աշակերտները: Քրիստոս վերցրեց հացը, օրհնեց այն, կտրեց եւ տուեց Իր աշակերտներին՝ ասելով. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ Մարմինը»: Ապա վերցրեց գինու բաժակը, գոհացաւ եւ տուեց նրանց՝ ասելով. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի Իմ Արիւնը, որ հեղւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար» [Մատթ. ԻԶ 26–27, հմմտ. Մարկ. ԺԴ 22–24, Ղուկ. ԻԲ 14–21, Յովհ. Զ 48–59, Ա Կորնթ. ԺԱ 23–26]:

Ինչպէ՞ս են հացը եւ գինին Քրիստոսի Մարմին եւ Արիւն դառնում:

–Հացը մնում է հաց, եւ գինին՝ գինի՝ իրենց տեսքով ու որակով, սակայն, Յիսուս Քրիստոսի խօսքի համաձայն, նրանք իրենց գոյացութեան մէջ խորհրդաբար դառնում են Նրա Մարմինը եւ Արիւնը: Այլ խօսքով, մեր զգայարանների համար հացը հաց է, իսկ գինին՝ գինի, բայց իբրեւ քրիստոնեայ հաւատում ենք մեր Փրկչի խօսքերին, թէ դրանք Իր Մարմինն ու Արիւնն են. իսկ սա արդէն խորհուրդ է:

Ուրեմն, Եկեղեցու սուրբ Սեղանի վրայ օրհնուած եւ նուիրուած Հացն ու Գինին սովորական հացը եւ գինին չե՞ն:

–Ո՛չ: Այդ մասին Պողոս առաքեալը շատ որոշակի եւ կտրուկ բառերով ասում է. «Երբ հաւաքւում էք միասին, Տիրոջ Տունը ձեզ համար հաց ուտելու տեղ չէ... Մի՞թէ տուն չունէք՝ ուտելու եւ խմելու համար, կամ Աստուծոյ Եկեղեցի՞ն էք արհամարհում...

Որովհետեւ ես ընդունեցի Տիրոջից, ինչը եւ ձեզ աւանդեցի, որ Տէր Յիսուս այն գիշերը, երբ մատնուեց, հաց վերցրեց, գոհութիւն մատուցեց, կտրեց եւ ասաց. «Այս է Իմ Մարմինը, որ ձեզ համար է: Արէ՛ք այս Իմ յիշատակի համար»: Նոյնպէս եւ ընթրիքից յետոյ վերցրեց բաժակը եւ ասաց. «Այս բաժակը Նոր Ուխտ է Իմ Արեամբ: Ամէն անգամ, որ խմէք, այս արէ՛ք Իմ յիշատակի համար: Ամէն անգամ, որ ուտէք այս հացը եւ խմէք այս բաժակը, Տիրոջ մահը պատմեցէ՛ք, մինչեւ որ Նա գայ»:

Այսուհետեւ ով անարժանութեամբ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ բաժակը, պարտական կլինի Տիրոջ Մարմնին եւ Արեանը: Թող մարդ նախ փորձի իր անձը եւ ապա ուտի այդ հացից եւ խմի այդ բաժակից, քանզի ով անարժանութեամբ է ուտում եւ խմում, իր անձի դատապարտութեան համար է ուտում եւ խմում, քանի որ չի տարբերում Տիրոջ Մարմինը: Սրա համար է, որ ձեր մէջ շատ հիւանդներ ու ցաւագարներ կան, եւ շատերն էլ մեռած են, որովհետեւ եթէ մենք մեզ քննէինք, չէինք դատապարտուի» [Ա Կորնթ. ԺԱ 20–31]:

Ո՞րն է Հաղորդութեան արդիւնքը հաւատացեալի կեանքում:

–Ինչպէս աղօթքը մեզ սրբում եւ Աստծուն է մօտեցնում, այնպէս էլ, հաղորդուելով Փրկչի Մարմնին ու Արեանը, սրբւում ենք եւ նմանւում Նրան, Ով խաչի վրայ թափեց Իր մաքուր Արիւնը՝ մարդկանց մեղքի ապականութիւններից փրկելու համար: Եւ զգուշանում ենք մեղքերից՝ մտածելով, որ մեղքը խափանում է մեր հաղորդութիւնը Սուրբի եւ Սրբութեան հետ: Գրիգոր Տաթեւացին ասում է. «Այս խորհուրդի գործն է՝ աւելացնել շնորհները եւ դեղ լինել ամէնօրեայ մեղքերին» («Գիրք հարցմանց», էջ 594): Այս է պատճառը, որ հաղորդուելով՝ պիտի յիշենք Յիսուս Քրիստոսի չարչարանքները:

Իսկ Յովհաննէս Մանդակունի հայրապետն ասում է. «Նրանք, ովքեր հաւատքով եւ երկիւղածութեամբ են մօտենում Քրիստոսին, լուսաւորւում են Սուրբ Հոգով եւ առաքինի գործերով օրէցօր վեր բարձրանում»:

Ե՞րբ պէտք է հաղորդուել:

–Առաքելական ժամանակներում հաւատացեալներն ամէն կիրակի հաւաքւում էին Տէրունի ընթրիքի համար: Իսկ Եկեղեցու կազմաւորման առաջին շրջանում ամէն օր Պատարագ էր մատուցւում: Այս սովորութիւնը պահպանուել է Լատին Եկեղեցում: Մեր Եկեղեցում էլ առաջ Պատարագն ամէնօրեայ էր, հիմա սուրբ Պատարագ մատուցւում է շաբաթ եւ կիրակի օրերին, ինչպէս նաեւ՝ տօնական մասնաւոր օրերի եւ այլ առիթներով: Իւրաքանչիւր հայ քրիստոնեայ պէտք է հաղորդուի գոնէ հինգ Տաղաւարներին եւ մանաւանդ Մնունդի եւ Զատկի տօներին:

Ինչպէ՞ս պէտք է պատրաստուել՝ Հաղորդութիւն ստանալու համար:

–Նախ՝ ինչպէս առաքեալն է ասում, իւրաքանչիւր մարդ պէտք է ինքն իրեն քննի՝ ինչպիսի՞ կեանքով է ապրում, ի՞նչ մեղքեր է գործել, որոնք արատաւորել են իրեն եւ հեռացրել աստուածային սրբութիւնից: Այս ինքնաքննութիւնն անելուց յետոյ պէտք է զղջայ, խոստովանի ու պահքով եւ աղօթքով պատրաստուի հաղորդուելու Տէր Յիսուս Քրիստոսի մեղսաքաւիչ Մարմնին եւ Արեանը՝ նորից չմեղանչելու որոշումով:

Ինչո՞ւ է Հաղորդութեան խորհուրդը Պատարագ կոչւում:

–Պատարագ բառն այլեւայլ իմաստներ ունի. նշանակում է զոհ, նուէր, ընծայ եւ այլն: Իսկ այստեղ նշանակում է Քրիստոսի ինքնազոհաբերութիւնը մեր փրկութեան համար: Քրիստոս Իրեն հաշտութեան պատարագ (զոհ) է մատուցում Աստծուն՝ ազատելու մարդկանց չարի կապանքներից: Սուրբ Սեղանի վրայ խորհրդաբար պատարագւում է Քրիստոս՝ Անմահ Գառը՝ Իր սուրբ Մարմինն ու Արիւնը բաշխելով մեզ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Այս խորհուրդը կատարող քահանան կոչւում է պատարագիչ, ինչպէս որ Մկրտութեան խորհուրդը կատարողը կոչւում է մկրտիչ:

Բոլոր մարդիկ անխտիր կարո՞ղ են հաղորդուել, երբ կամենան:

–Նրանք, ովքեր մկրտուած չեն, չեն կարող հաղորդուել: Հաղորդուողը պէտք է լինի հաւատացեալ, իր Եկեղեցու զաւանանքին

եւ կարգուկանոնին հաւատարիմ քրիստոնեայ:

Հնում, Պատարագի երկրորդ մասի ընթացքում, երբ սարկաւագը աղաղակում էր՝ «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից, մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս», չմկրտուածներին (երախայ), թերահաւատներին, ապաշխարողներին, անմաքուրներին հանում էին եկեղեցու գաւիթ:

Սրանից հետեւում է, որ չի կարելի աստուածային խորհուրդին մօտենալ առանց պատրաստուելու եւ առանց լրացնելու կանոնական պայմանները:

Ինչպէ՞ս պէտք է պատրաստուել Հաղորդութեանը:

-Արդէն ասուեց, որ ինքնաքննութիւնը, զղջումը, ապաշխարութիւնը, խոստովանութիւնը անհրաժեշտ պայմաններն են. դրանց հետեւում է նաեւ բարեգործութիւնը, որովհետեւ մեղք գործող մարդն անպատճառ որեւէ չարիք կամ վնաս հասցրած կլինի իր նմաններին. այն պէտք է հատուցել եւ դարմանել բարեգործութեամբ: Եւ վերջապէս, հաղորդուելուց առաջ պէտք է պաս եւ ծոմ պահել՝ ըստ մեր նախնիների բարեպաշտ աւանդութեան, որ շատ նպաստաւոր է հոգեւոր կեանքի համար:

Պատարագից առաջ պատարագիչը նոյնպէ՞ս պարտաւոր է պատրաստուել:

-Այո՛, եւ ուրիշ ուշադրութեամբ ու խստութեամբ: Պատարագիչների պատրաստութեան համար մեր Եկեղեցին շատ հին եւ ընդհանրացած սովորութիւններ ունի. այսպէս՝ նրանք Պատարագի նախորդ օրը, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, պէտք է մնան եկեղեցու խցերում, ծոմապահութեամբ, աղօթքներով եւ հոգեւոր ընթերցանութեամբ հսկեն գիշերը, անպայման մասնակցեն առաւօտեան ժամերգութեանը, ապա մեծ խորհուրդը կատարելու համար սուրբ Սեղան ելնեն մաքուր մարմնով եւ սրբասուն խղճմտանքով:

Ո՞րն է Ծնորհալի հայրապետի պատուէրը պատարագիչ քահանաներին:

-Աստուածային խորհուրդին սպասաւորեցէք մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հաւատքով, մեծ յուսով, պարզ մտքով, կատարեալ սիրով, ահ ու դողով: Խողովակի հոսող ջրի պէս անմտաբար մի՛ անցէք աղօթքի սրբազան խօսքերի միջով, որոնք մատուցում էք՝ սաղմոսերգութիւն լինի, թէ Սուրբ Գրքի ընթերցում կամ ժամերգութիւն, ինչպէս նաեւ սուրբ Պատարագի եւ այլ սահմանուած կանոնների քահանայական աղօթքներ, այլ՝ յոյժ ուշադիր եւ, եթէ կարելի է, արցունքով եւ մեծ երկիւղով, որպէս թէ նոր էք բխեցնում դրանք ձեր սրտից ու մտքից:

Ինչպէ՞ս է մատուցւում Պատարագը մեր Եկեղեցում:

-Լաւ մտածուած կարգաւորութեամբ եւ շատ վայելուչ ու խորհրդաւոր հանդիսաւորութեամբ. հոգեւորոգ սաղմոսներ եւ աղօթքներ, հոգեզմայլ երգեր, պարտ ու պատշաճ զգեստաւորում, ջահավառութիւն, խնկարկութիւն եւ հաւատացեալների արտաքին ու երկիւղած մասնակցութիւն արարողութեանը՝ տեղին համեմատ լուռ կամ ձայնաւոր հետեւողութեամբ:

Մեր Եկեղեցու Պատարագի արարողութիւնն իր մեծ վայելչութեամբ խորը տպաւորութիւն է թողնում նոյնիսկ օտարազգի քրիստոնեաների վրայ:

Որո՞նք են Պատարագի արարողութեան էական պայմանները:

-Քրիստոնէական Եկեղեցում հաստատուած վաղեմի կանոնների եւ սովորութեան համաձայն Պատարագ կատարելու համար անհրաժեշտ են երեք էական պայմաններ.

ա) ձեռնադրուած եւ օծուած պաշտօնեայ,

բ) հաց ու գինի,

գ) աղօթք:

Պատարագիչը պէտք է լինի Ձեռնադրութեամբ եւ օծումով քահանայական աստիճան ունեցող եկեղեցական:

Պատարագը պէտք է կատարուի զուտ եւ մաքուր ցորենի ալիւրից թխուած թարմ բաղարջ (անխմոր) հացով եւ անապակ (մաքուր, ջուր չխառնած) գինով:

Պատարագչի կողմից հաւատքով եւ երկիւղածութեամբ պէտք է ասուեն օրհնութեան եւ սրբագործութեան քահանայական աղօթքներ:

Պատարագի արարողութեան միւս մասերը հիմնուած են այս երեք

պայմանների վրայ եւ նպաստում են խորհուրդի կատարումը վայելով եւ արտայայտութիւնը զգալի դարձնելուն:

Ե՞րբ են հաստատուել Պատարագի արարողութեան այս վայելուչ կերպերը մեր Եկեղեցում:

–Սկզբում Պատարագի արարողութեան կերպը շատ պարզ էր, բայց հետզհետէ ճոխացաւ, մանաւանդ՝ սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետի օրերին (†1173, օգոստոսի 16) եւ նրա ձեռքով: Մեր եկեղեցու Պատարագում մեծ տեղ ունեն սուրբ Յովհաննէս Ոսկեբերանի (347–407) եւ սուրբ Գրիգոր Նարեկացու (950–1010) աղօթքները: Իսկ աւելի ուշ, ԺԴ դարից սկսած, երգւում է երաժիշտ Խաչատուր Տարօնացի վարդապետի կողմից մի հանդիսաւոր առիթով ստեղծուած «Խորհուրդ խորին»-ը:

Ո՞րն է հաւատացեալ ժողովրդի պարտքը եկեղեցում սուրբ Պատարագի ժամանակ:

–Սուրբ Պատարագը պէտք է մատուցուի հաւատացեալների պատկառանքով եւ երկիւղածութեամբ լի մթնոլորտում: Ոչ մի շշուկ եւ փսփսուք, ոչ մի երթեւեկ, վերջապէս՝ ոչ մի աւելորդ շարժում ու ձայն, բացի արարողութիւնը կատարողների ձայնից ու շարժումից: Աշխարհական թէ հոգեւորական՝ բոլոր հաւատացեալներն իրենց ուշադրութիւնը պէտք է սեւեռեն աստուածային խորհուրդի վրայ եւ առանց շեղուելու հետեւեն աղօթքներին եւ երգերին:

Յաւօք, մեր եկեղեցում, հակառակ մեր ժողովրդի բարեպաշտութեան, այս պայմանները չեն յարգւում: Ելումուտը, աղմուկը, մանաւանդ կանանց մէջ, խանգարում են արարողութեան մեծավայելչութեանը: Մենք պէտք է ուշադիր լինենք, որ այս տգեղ իրողութիւնները եկեղեցում տեղի չունենան:

ՊՍԱԿ

Ի՞նչ է պսակը:

–Պսակը այր ու կնոջ ամուսնութեան խորհուրդն է:

Ինչո՞ւ է ամուսնութիւնը խորհուրդ:

–Որովհետեւ այր եւ կնոջ միաւորութիւնը օրհնւում եւ կնքւում է Աստուծոյ անունով. «Աստուծոյ միացրածը մարդը թող չբաժանի» [Մատթ. ԺԹ 5–6]:

Պօղոս առաքեալը այր եւ կնոջ ամուսնական միաւորութիւնը նմանեցնում է Քրիստոսի՝ Իր եկեղեցու հետ միութեանը:

Եւ իսկապէս, մարդկային ցեղի մաքուր եւ առողջ աճը, Քրիստոսի եկեղեցու բարգաւաճումն ու պայծառութիւնը կախուած են օրինաւոր ամուսնութեան արդիւնքից: Եւ որովհետեւ Քրիստոս եւ Իր եկեղեցին իբրեւ մէկ մարմին նոյնացած են, հարկ է, որ ամուսնացողները, իբրեւ աստուածային պատուէրը («աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք») կատարողներ, կատարելապէս գիտակ եւ հաւատարիմ լինեն իրենց միաւորման ուխտին եւ նպատակին: Երկու էակների միութիւնն ինքնին խորհրդաւոր է, եւ եկեղեցին այն դարձրել է եօթ խորհուրդներից մէկը՝ հիմնուելով աստուածային պատգամի եւ օրհնութեան վրայ:

Ուրիշ ի՞նչ կարելի է ասել այս խորհուրդի մասին:

–Ամուսնութիւնը հիմնուած է ողջախոհութեան վրայ, որովհետեւ նրա նպատակը որդեծնութիւնն է: Այր եւ կին, իբրեւ իրենց եկեղեցու ճշմարիտ անդամներ, պէտք է մաքրակենցաղ լինեն, որպէսզի իրենց միութիւնն արդիւնաւոր լինի, տուն, ընտանիք կազմուի, եւ եկեղեցին զօրանայ նոր ուժերով:

Եւ որովհետեւ ամուսնութիւնը հիմնուած է ողջախոհութեան վրայ, այր ու կին պէտք է զգուշանան բղջախոհութիւնից եւ չապականեն իրենց ամուսնական միութեան սրբութիւնը պոռնկութեամբ եւ շնութեամբ:

Կարո՞ղ ես յիշել Պօղոս առաքեալի խօսքերն ու խրատներն այս մասին:

–Այո՛: Եփեսացիների թղթում այր եւ կնոջ ամուսնական կեանքի պարտաւորութիւնները եւ նրանց՝ իրար նկատմամբ պարտականութիւնները բացատրելիս նա ասում է. «Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով: Կանայք թող հնազանդ լինեն իրենց ամուսիններին, ինչպէս Տիրոջը: Որովհետեւ ամուսինն է կնոջ գլուխը, ինչպէս Քրիստոս գլուխն է Եկեղեցու, եւ Ինքն է Փրկիչը այդ մարմնի: Եւ ինչպէս Եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին, այնպէս էլ կանայք թող հնազանդուեն իրենց ամուսիններին ամէն ինչում: Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ Իր անձը մատնեց նրա համար... Ով սիրում է իր կնոջը, իրեն է սիրում... Սրա համար այրը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ գնայ իր կնոջ ետեւից, եւ երկուսով պիտի լինեն մէկ մարմին: Մեծ է այս խորհուրդը, բայց ես ասում եմ Քրիստոսի եւ Եկեղեցու վերաբերեալ» [Եփես. Ե 21–23]:

Ինչպէ՞ս է կատարւում Պսակի արարողութիւնը:

–Մեր Եկեղեցում Պսակ կատարելու իրաւունքը քահանայինն է: Պսակուողները գալիս են եկեղեցի: Աստուծոյ եւ հանդիսութեանը ներկայ մարդկանց առջեւ քահանան նրանց հարցնում է՝ իրենց ազատ կամքո՞վ են եկել պսակուելու եւ, հաստատական պատասխան ստանալով, միացնում է նրանց ալ ձեռքերն ու ճակատները եւ խրատում, աղօթում, օրհնում նրանց միութիւնը:

Ամուսնական միութիւնը կարո՞ղ է քակուել կամ լուծարուել:

–Ինչպէս որ Քրիստոս չի զատւում Իր Եկեղեցուց, այնպէս էլ պսակուած ամուսինները չեն կարող բաժանուել միմեանցից: Ուրիշ խօսքով, ամուսնական միութիւնը սկզբունքօրէն անլուծելի է:

Ըստ Աւետարանի՝ ամուսնալուծման օրինական պատճառ կարող է լինել միայն շնութիւնը: Բայց Եկեղեցին վաղ ժամանակներից, նկատի առնելով ամուսնական կեանքում երեւան եկող մի շարք լուրջ պատճառներ, որոնք արգելք են դառնում ամուսնական միութիւնն իրագործելուն կամ խանգարում են այդ միութեանը, ընդունել է ամուսնալուծութիւնը՝ միութիւնն արգելակող օրինական պատճառները քննելուց եւ ստուգելուց յետոյ միայն:

ՍԱՆՕԹ. Այսօր աշխարհում նկատի ունենալով ամուսնութեան կարեւորութիւնը եւ նրա վերաբերեալ խնդիրները հասարակական եւ քաղաքական կեանքի տեսակէտից՝ ամուսնութեան արտօնութիւնը վերապահուած է քաղաքային իշխանութեանը: Սա պետական օրէնք է դարձել: Այնպէս որ, երբ օրինապէս չափահաս դարձածներն ուզում են ամուսնանալ, դիմում են քաղաքային իշխանութեանը եւ յայտարարում, որ պիտի ամուսնանան: Վկաների ներկայութեամբ արձանագրւում են նրանց ինքնութեան եւ բնակութեան վերաբերեալ կարեւոր տեղեկութիւնները: Դրանից յետոյ նրանք ազատ են՝ կենցաղավարելու իբրեւ օրինաւոր այր եւ կին:

Բայց քրիստոնէական աշխարհում ամուսնացողները, յարգելով հանդերձ երկրի օրէնքը, քաղաքային ամուսնութեան արտօնութեան ձեւակերպութիւնները լրացնելուց յետոյ եկեղեցի են գնում՝ պսակադրութեամբ օրհնելու իրենց ամուսնութիւնը:

Որո՞նք են ամուսնութեան համար անհրաժեշտ պայմանները:

–Չափահասութիւն, կանոնական հասութիւն, դաւանական եւ ազգային նոյնութիւն, փոխադարձ յօժարութիւն եւ սէր:

Չափահասութեան տարիքը կախուած է կլիմայից եւ երկրի օրէնքներից: Արբունքի չհասածները եւ անչափահասները չեն կարող ամուսնանալ:

Կանոնական հասութիւն նշանակում է ազգականական որոշակի աստիճան: Իբրեւ առողջ սերունդ ունենալու պայման՝ ամուսնացողներն ազգականութեամբ ու արիւնով որքան հեռու լինեն իրարից, այնքան յարգած կլինեն Եկեղեցու կանոնները, որոնք հիմնուած են առողջապահական սկզբունքների վրայ: Հին կանոններով՝ տղան եօթ պորտ, եօթ ճիւղ կամ եօթ աստիճան հեռու պիտի լինի այն աղջկանից, ում հետ ամուսնանում է:

Նախկինում նոյնքան խիստ էին խնամիական եւ հոգեւոր ազգականութեան (սանահայրութիւն կամ կնքահայրութիւն) աստիճանները, բայց այժմ դրանք գրեթէ անուշադրութեան են մատնուած, եւ ուշադրութիւն է դարձւում միայն ազգականական կամ արիւնակցական կապի աստիճանին:

Տղայի եւ աղջկայ՝ միեւնոյն դաւանութեան եւ ա[illegible]ութեան պատկանելը շատ կարեւոր է ընտանեկան կեանքի խաղաղութեան եւ երջանկութեան համար:

Իսկ ամուսնացողների փոխադարձ յօժարութիւնն ու սէրը անհրաժեշտ պայմաններ են՝ ամուսնութեան բնական եւ բարոյական պարտականութիւնները կատարելու համար: Միայն այս պայմանը

յարդելով են խափանում բռնի ամուսնութիւններն ու այլ անպատեհութիւնները:

Կարո՞ղ է ամէն օր Պասկ կատարուել:

-Ողջախոհութեան եւ բարեպաշտութեան հիմքերի վրայ մեր Եկեղեցին կանոնադրել է, որ Պահոց եւ Տէրունի օրերին Պասկ չօրհնուի, եւ հարսանիք չարուի: Սա շատ գեղեցիկ է, եւ երանի՜ թէ մեր Եկեղեցու զաւակները կարողանային լիովին յարդել իրենց ազգային եւ եկեղեցական սովորութիւնները:

Ամուսնութիւնը կրկնելի՞ է:

-Այո՛, երբ կողմերից մէկը մեռնի, եւ երբ օրինական ամուսնալուծութեան հետեւանքով մէկ կամ միւս կողմն արտօնուած լինի նորից ամուսնանալու:

Եթէ մարդը երկու անգամ կորցնում է կնոջը, եկեղեցական կանոնը թոյլատրում է, որ նա երրորդ անգամ պսակուի: Աւելին հակառակ է ոչ միայն կանոնին, այլ նաեւ բարոյագիտութեանը:

Երբ ամուսիններից մէկը որեւէ պատճառով կորչի, ամուսնութիւնը լուծարւո՞ւմ է:

-Այո՛, եթէ ամուսիններից մէկը կորչի, եւ եօթ տարի որեւէ լուր եւ տեղեկութիւն չլինի նրա մասին, միւսը կարող է ամուսնանալ, եթէ կամենայ: Եւ եթէ եօթ տարի անցնելուց յետոյ կորած կողմը յայտնուի, նա ազատ է եւ կարող է ամուսնանալ ուրիշի հետ:

Դարձեալ՝ եթէ ամուսիններից մէկը փոխի իր քրիստոնէական հաւատքը կամ խախտի ամուսնական կեանքի միութեան եւ խորհուրդի պայմանները, հոգեւոր իշխանութիւնը կարող է մարդասիրական յատուկ կարգադրութիւններ անել:

Ըստ Աւետարանի՝ պոռնկութիւնն ու շնութիւնը խախտում են ամուսնական միութիւնը եւ եղծում խորհուրդը, հետեւաբար ամուսնութիւնը լուծւում է, իսկ յանցաւոր կողմը զրկւում եւ զրկւում է վերստին ամուսնանալու իրաւունքից:

Եթէ իրենց պսակի ազատութեան համար երկու կողմերն էլ մեղաւոր են կամ եթէ երկու կողմերն էլ ֆիզիկապէս եւ բարոյապէս ընդունակ չեն եղել ընտանիք կազմելու եւ գոյութիւնների տեղիք են տուել, ամուսնութիւնը լուծւում է, եւ երկուսն էլ զրկւում են վերստին ամուսնանալու իրաւունքից:

Ո՞վ է իրաւասու լուծել ամուսնութիւնը:

-Հոգեւոր վերին իշխանութիւնը: Եկեղեցին է պսակում եւ Եկեղեցին էլ լուծում է պսակը: Քահանան պսակում է Եկեղեցու անունով, բայց լուծել չի կարող: Ամուսնութիւնը լուծելը հոգեւոր վերին իշխանութեան իրաւասութիւնն է՝ օրինական քննութիւններ կատարելուց յետոյ, թէ՛ ժողովների միջոցով, թէ՛ ուղղակի:

Իսկ հոգեւոր իշխանութիւնը ներկայանում է եպիսկոպոսութեամբ: Նրանք, եթէ առաջնորդական պաշտօն ունեն, կարող են զբաղուել ամուսնական խնդիրներով: Բայց ամենից վերեւ կաթողիկոսն է, որ իշխանութիւն եւ իրաւասութիւն ունի վերջին խօսքն ասելու եւ վճիռներ արձակելու՝ ամուսնական խնդիրներ լուծելու համար:

ԿԱՐԳ ՀԻՒԱՆԴԱՑ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Ի՞նչ է Կարգ հիւանդաց անուանուող խորհուրդը:

–Հիւանդութիւնը, որ կողմից էլ դիտելու լինենք, իր ծագումն հետեւանքն է մարդու տգիտութեան եւ սխալների, ինչպէս ասում է՝ նրա կամայ-ակամայ գործած մեղքերի: Կան հիւանդութիւններ, որոնք ժառանգական են, կան հիւանդութիւններ էլ, որոնց պատճառ մենք ենք:

Եթէ մարդիկ ապրէին շնորհի կեանքը իրենց աստուածային նկարագրի համեմատ, չէին հիւանդանայ: Ուրեմն, մարդկանց աստուածային կեանքն ու կենցաղն են պատճառը նրանց հիւանդութիւնների: Ուրիշ խօսքով, հիւանդը մեղաւոր մարդն է, որ հեռացել է Աստծուց: Հետեւաբար, մեղաւորը պէտք է խոստովանի իր մեղքերը եւ զղջայ, իսկ եկեղեցին՝ աղօթի, որպէսզի հիւանդը խոստովանութեամբ թեթեւանայ եւ աղօթքով զօրանայ: Այս է Հիւանդաց կարգը, որ սկզբունքով նոյնանում է Ապաշխարութեան խորհուրդի հետ:

Ի՞նչ է Վերջին օծումը:

–Հիւանդներին իւղով օծելը հրէական հին սովորութիւն էր, որ շարունակուեց նաեւ առաքելական ժամանակների եկեղեցում: Երբ Յիսուս Քրիստոս իր աշակերտներին իշխանութիւն տուեց եւ առաքեց նրանց, որպէսզի դաստիարակեն ժողովուրդներին, Մարկոս աւետարանիչն ասում է, որ նրանք քարոզում էին, իւղով օծում հիւանդներին եւ բժշկում նրանց [տե՛ս Մարկ. Զ 12-13, Մատթ. Ժ 1]: Իսկ Յակոբոս առաքեալն ասում է. «Հիւա՞նդ է ձեզանից մէկը, թող կանչի եկեղեցու երէցներին, եւ նրա վրայ թող աղօթք անեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հաւատքով արուած աղօթքը կփրկի հիւանդին, Տէրը ոտքի կկանգնեցնի նրան, եւ եթէ մեղք գործած լինի, այդ կներուի նրան» [Յակ. Ե 14-15]:

Ուրեմն, ինչո՞ւ հիմա հիւանդներին չեն օծում:

–Մեր եկեղեցում հիւանդների օծում կատարուել է: Յետոյ այն խափանուել է շատ տրամաբանական պատճառով, որովհետեւ մարդիկ չգիտեն՝ երբ, որտեղ, ինչպէս պիտի հիւանդանան եւ մեռնեն. տա՞նը, ճամփորդելի՞ս, յանկա՞րծ, թէ՞ երկարատեւ կամ կարճատեւ հիւանդութիւնից, որեւէ արկածի՞ց, թէ՞ թշնամու ձեռքով: Եւ որպէսզի հաւատացեալներն առանց բացառութեան չզրկուեն Վերջին օծումից, մեր եկեղեցում այն միացուած է Առաջին օծումին, այսինքն՝ Դրոշմին:

Մկրտուածների ո՞ր տեղերն են դրոշմւում:

–Ճակատը, սիրտը, թիկնամէջը, ինչպէս նաեւ աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը եւ ոտքերը: Առաջին երեքը Դրոշմի խորհուրդի նշաններն են, իսկ մնացածը՝ Վերջին օծումի:

Ե՞րբ է դադարել Վերջին օծումի առանձին կատարումը մեր Եկեղեցում:

–Գրիգոր Տաթեւացուց (†1410) շատ առաջ, որովհետեւ այս նշանաւոր վարդապետն իր «Գիրք հարցմանց»-ում (էջ 604-605) բացատրութիւններ է տալիս այս մասին եւ ասում. «Մկրտուողի վրայ Առաջին օծումը (Դրոշմը) եւ Վերջին օծումը միասին ենք կատարում»: Եւ նշում է, որ խոստովանութիւնը Հիւանդաց կարգի համար անհրաժեշտ նախապայման է: Ուրիշ եկեղեցիներ այն վերացրել են եւ պահպանել միայն իւղով օծումը, եւ հաւատացեալները, փոխանակ խոստովանութեամբ սրբուելու, իրենց յոյսը դրա վրայ են դնում՝ ասելով՝ վերջին օրը բալասանի ձէթով կօծուենք եւ կարդարանանք: Ահա թէ ինչու եկեղեցու հայրապետները նպատակայարմար համարեցին վերացնել այն:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է Ձեռնադրութիւնը:

–Աւետարանը քարոզելու եւ խորհուրդները կատարելու համար յատուկ պատրաստութիւն ստացած անձանց՝ այդ աստուածային պաշտօնին նուիրուելու խորհուրդն է, որ կատարւում է շատ ազդեցիկ արարողութեամբ: Ձեռնադրութեան փոխարէն ասւում է նաեւ Կարգ քահանայութեան կամ Խորհուրդ կարգի, որովհետեւ Եկեղեցում քահանայութեան աստիճանն է, որ իրաւունք է տալիս ընծայուածին կատարելու խորհուրդները:

Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ Ձեռնադրութեան համար:

–Այն անձինք, ովքեր կամենում են ձեռնադրուել եւ աստուածային ծառայութեան նուիրուել, պէտք է.

ա) չափահաս լինեն, ինչպէս նաեւ մարմնական, մտաւոր եւ հոգեկան անթերի վիճակ ունենան.

բ) կոչմանը համապատասխանող մտաւոր եւ հոգեւոր պատրաստուածութիւն ունենան.

գ) յարմար եւ արժանաւոր լինեն աստուածային պաշտօնին.

դ) անձնական կամ ներքին վկայութիւն ունենան իրենց արժանաւորութեան մասին, ինչպէս նաեւ՝ վկայութիւն Եկեղեցու (ժողովրդի) կողմից:

Ո՞վ է կատարում Ձեռնադրութիւնը:

–Ձեռնադրութիւնը կատարում է եպիսկոպոսը: Իսկ նուիրադրում է այն օծումով:

Կարո՞ղ ես ամփոփ կերպով ասել՝ ինչպէս է կատարւում Ձեռնադրութեան արարողութիւնը մեր Եկեղեցում:

ա) Եպիսկոպոսը հրապարակային քննութեամբ ստուգում է ընծայեալի արժանաւորութիւնը՝ վերոյիշեալ հինգ կէտերի համաձայն:

բ) Մասնաւոր քննութեան է ենթարկում ընծայեալի հաւատքի եւ դաւանանքի ուղղափառութիւնը:

գ) Աղօթքներ, ընթերցուածներ Սուրբ Գրքից եւ շարականներ:

դ) Ձեռնադրութիւն եւ քահանայական զգեստաւորում:

ե) Օծում, որով եւ նուիրադրում է Ձեռնադրութիւնը, եւ ձեռնադրուածը կոչւում է տէր (այսինչ) քահանայ:

Մեր Եկեղեցում քահանայական աստիճանից բարձր եւ ցածր ի՞նչ աստիճաններ կան:

–Քահանայութիւնից վար վեց աստիճան կայ, իսկ նրանից վեր՝ երեք:

Վարի վեցը կոչւում են փոքր աստիճաններ: Դրանք են.

ա) դռնապանութիւն,

բ) ընթերցողութիւն,

գ) երգմնեցուցչութիւն,

դ) ջահընկալութիւն,

ե) կիսասարկաւագութիւն,

զ) սարկաւագութիւն:

Վերի երեք աստիճաններն են.

է) քահանայութիւն,

ը) եպիսկոպոսութիւն,

թ) կաթողիկոսութիւն:

Բոլորը միասին՝ ինն աստիճան:

Այժմ մեր Եկեղեցում գործնականապէս կա՞ն փոքր աստիճանները:

–Այո՛, Ձեռնադրութեան մաշտոցի մէջ դրանք կան, եւ քահանայութեան կոչուողը Ձեռնադրութեամբ ստանում է վեց աստիճանները, յետոյ՝ քահանայականը:

Բայց մեր Եկեղեցու գործնական կեանքում փոքր աստիճաններից առաջին չորսը կոչւում են դպրութիւն: Դպիրները՝ ձեռնադրուած լինեն, թէ ոչ, շապիկ են հագնում, կիսասարկաւագի պաշտօն կատարում, երգում շարականներ եւ մասնաւորապէս՝ սուրբ Պատարագի երգերը: Ընդհանրապէս, դպիրները ձեռնադրուած են լինում եւ մեծ

եկեղեցիներում ունենում են իրենց յատուկ կազմակերպութիւն դպրաց դաս անունով:

Եկեղեցում կան նաեւ ժամկոչներ եւ լուսարարներ, որոնք չունեն փոքր աստիճաններից եւ ոչ մէկը եւ ամսական աշխատավարձ աշխատողներ են:

Կան նաեւ (անշուշտ, ոչ յաճախ) ուրարակիրներ՝ կիսասարկաւագների եւ աւագ սարկաւագների փոխարէն, որոնք սպասաւորութիւն են կոչւում միայն եպիսկոպոսի հրամանով եւ կատարում են սարկաւագութեան պաշտօն, բացի վերաբերումից:

Կիսասարկաւագութիւնը գործնականում չկայ, իսկ սարկաւագութիւնն ընդհանրապէս մեծ եկեղեցիներում կամ վանքերում պահւում է մնում իբրեւ կուսակրօն քահանայութեան հանգրուան:

Ի՞նչ է կղերիկոսութիւնը:

-Կղերիկոս կամ կղեր նշանակում է ժառանգաւոր, այսինքն՝ այն անձը, ով աստիճանաբար ժառանգում է Եկեղեցու փոքր աստիճանները եւ պատրաստւում: Կղերիկոս կոչման տակ այժմ հասկացւում են փոքր աստիճան ունեցողները: Ձեռնադրութեան մաշտոցի սկզբում կայ կղերիկոսութեան մի յատուկ արարողութիւն: Այդ արարողութեան ընծայեալին տրւում է աւելածուի կամ սաղմոսերգուի պաշտօն:

Ի՞նչ է վարդապետութիւնը:

-Վարդապետութիւնը մեր Եկեղեցում Ձեռնադրութեամբ տրւող աստիճան է այն կուսակրօն քահանաներին, որոնք իսկապէս ուսեալ եւ հմուտ են աստուածաբանական կրթութեան մէջ, որովհետեւ նրանց պաշտօնն է քարոզել, մեկնել Սուրբ Գիրքը, բացատրել Եկեղեցու ուղղափառ դաւանանքը եւ ուսուցանել: Վարդապետ բառը նշանակում է ուսուցիչ եւ հնուց ի վեր գործածուել է հոգեւոր իմաստով, այսինքն՝ վարդապետը հոգեւոր կեանքի ուսուցիչն է:

Ո՞վ կարող է տալ վարդապետութեան աստիճան:

-Այն եպիսկոպոսները, ովքեր արդէն ստացել են այդ աստիճանը: Հնում ոչ բոլոր եպիսկոպոսներն ունէին վարդապետական աստիճան, ուստի միայն վարդապետ-եպիսկոպոսը կարող էր վարդապետութեան աստիճան տալ: Սրան հակառակ, ծայրագոյն վարդապետը, որ եպիսկոպոսութեան աստիճան չունի, կարող է վարդապետութեան աստիճան տալ: Իսկ այն եպիսկոպոսները, ովքեր վարդապետական աստիճան չունեն, եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ ստանում են:

Քանի՞ աստիճան է վարդապետութիւնը:

-Տասնչորս աստիճան, որի առաջին չորսը մասնաւոր վարդապետի աստիճաններ են, իսկ մնացած մասը՝ մեծ կամ ծայրագոյն վարդապետի: Վարդապետական աստիճանի խորհրդանշանն է օձագլուխ կամ խաչաձեւ գաւազանը:

Բուն վարդապետները ծայրագոյններն են, որոնք մեծ հեղինակութիւն կամ իշխանութիւն էին վայելում Եկեղեցում:

Այժմ վարդապետական իշխանութիւնը յարգո՞ւմ է իր նախկին նշանակութեամբ:

-Յարգւում է իսկապէս պատրաստուած արժանաւորների դէպքում, բայց ցաւալի է, որ վարդապետական գաւազանը տրւում է եւ անպատրաստներին, որի պատճառով էլ այն կորցրել է իր նախկին եւ պատմական նշանակութիւնը:

Ինչպէս ասացինք, հնում վարդապետն իրօք վարդապետ էր, Եկեղեցու ներքին կեանքի կազմակերպիչը, խօսքի եւ գրչի հեղինակութիւն, որ վեր էր վարդապետական աստիճան չունեցող եպիսկոպոսից:

Ի՞նչ է եպիսկոպոսութիւնը:

-Եպիսկոպոսութիւն նշանակում է տեսչութիւն: Եպիսկոպոսն իր թեմի կամ վիճակի հոգեւոր տեսուչն է. նա հսկում եւ կազմակերպում է իր վիճակի հոգեւոր կեանքը, պայծառացնում Եկեղեցիները, բարեկարգում ծիսական եւ պաշտամունքային կեանքը: Եպիսկոպոսի պարտքն ու պաշտօնն է նաեւ իր տեսչութեան ներքոյ գտնուող Եկեղեցիների համար պաշտօնեաներ պատրաստելը եւ նրանց ձեռնադրելը:

Ո՞վ է կաթողիկոսը:

-Կաթողիկոսը Հայաստանեայց Եկեղեցու ընդհանուր եւ գերագոյն պետն է: Կոչւում է նաեւ քահանայապետ, եպիսկոպոսապետ:

Կաթողիկոսն է ձեռնադրում եպիսկոպոսներին եւ օրհնում սրբալոյ մեռոնը: Կաթողիկոսն է լուծում եւ վճռում Եկեղեցուն եւ ամուսնութեանը վերաբերող ամէն տեսակի դժուարին խնդիրները, բացառիկ կարգադրութիւններ եւ տնօրինութիւններ անում Եկեղեցու պէտքերի եւ հանգամանքների համեմատ:

Ի՞նչ է կուսակրօնութիւնը:

–Կուսակրօն են այն եկեղեցականները, ովքեր չեն ամուսնանում եւ բնակւում են վանքում: Կուսակրօն քահանաները կոչւում են աբեղայ:

Կարող են ամուսնանալ փոքր աստիճան ունեցողները եւ քահանաները, իսկ նրանք, ովքեր նուիրւում են վանական կեանքին, չեն ամուսնանում: Կուսակրօն են վանական սարկաւագները, վարդապետները, եպիսկոպոսները եւ կաթողիկոսները:

Ինչո՞ւ նրանք չեն ամուսնանում:

–Որպէսզի աշխարհիկ հոգսերից ազատ լինեն եւ իրենց ամբողջ ժամանակը, ուժը եւ ուշադրութիւնը նուիրեն իրենց հոգեւոր գործին:

Զէ՞ որ կային ամուսնացած առաքեալներ, եւ մեր Եկեղեցու նոյնիսկ կաթողիկոսներ՝ սուրբ Գրիգոր Լուսաւորչից մինչեւ մեծ Սահակ, ամուսնացած էին:

–Այո՛, բայց միաժամանակ կային նաեւ չամուսնացած առաքեալներ եւ եկեղեցականներ: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը եւ նրա որդին՝ Վրթանէսը, ամուսնացած էին, բայց կուսակրօն էր նրա Արիստակէս որդին, որ յաջորդեց նրան: Սակայն ամուսնանալու սովորութիւնը քահանայութիւնից վեր աստիճանների մէջ յետոյ հետզհետէ վերացաւ:

Պողոս առաքեալը թէ՛ եկեղեցականներին եւ թէ՛ աշխարհականներին ազատ է թողնում իրենց կենցաղի ընտրութեան մէջ:

Աւելի ճիշտ չի՞ լինի, եթէ գայթակղութիւններից զերծ մնալու համար բոլոր եկեղեցականներն ամուսնանան:

–Պէտք է իմանալ, որ հայ եկեղեցականների մեծագոյն մասը քահանաները, ամուսնացած են, եւ քչերն են կուսակրօն: Դարձեալ ամուսնութիւնը դեռ բացարձակ երաշխիք չէ՝ գայթակղութիւններից եւ փորձութիւններից զերծ մնալու համար, որովհետեւ ամուրիութիւնը չէ գայթումների պատճառը, այլ միջավայրը եւ նկարագիրը: Հետեւաբար, աւելի տրամաբանական եւ աւելի բարոյագիտական է եկեղեցական դառնալ փափագողներին ազատ թողնել՝ իրենց անձնական գիտակցութեամբ ընտրելու իրենց կենցաղը:

Եւ որովհետեւ Եկեղեցու մէջ բարձր աստիճանները վերապահուած են կուսակրօններին, այս խտրականութիւնը վերացնելու համար պէտք է հիմք ընդունել ոչ թէ թեկնածուների ամուսնացած կամ ամուրի լինելը, այլ արժանիքները՝ մտաւոր եւ հոգեկան պատրաստուածութիւնը, եկեղեցական պաշտօնին յարմար լինելը, նկարագիրը:

Ինչպիսի՞ պէտք է լինի հոգեւորականների նկարագիրը:

–Հոգեւորականը պէտք է լինի իսկապէս բարի, հաւատքի եւ ծառայութեան մարդ, որովհետեւ միայն մտաւոր պատրաստութիւնը բաւական չէ՝ նուիրական պաշտօնը ստանձնելու համար: Քահանայից մինչեւ կաթողիկոս՝ բոլորը, ըստ իրենց աստիճանի ու դիրքի, ծառայելու կոչում ունեն եւ իրենց ծառայութիւնը պէտք է անեն բարի սրտով, անկեղծ հաւատքով եւ բոլորանուէր հոգով, որպէսզի հաւատացեալներին առաջնորդեն քրիստոնէական կեանքի մէջ, Եկեղեցին լինի ներշնչման մշտալոյս կենտրոն, որտեղ տիրի եղբայրասիրութիւնը, ազատութիւնը, եւ որտեղ մխիթարուեն դժբախտների եւ տրտմածների հոգիները: Որքան նուիրական է եկեղեցականի պաշտօնը, այնքան ծանր է նրա պատասխանատուութիւնը, այնպէս որ, եթէ նա չունի բարութիւն, հաւատք եւ նուիրուած հոգի, չի կարող կատարել իր պարտքն ու պաշտօնը:

ԵՕԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՒ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի՞նչ խորհրդածութիւն կարելի է անել եօթ խորհուրդների մասին:

-Գրիգոր Տաթեւացին երեք շարք խորհրդածութիւններ է անում, որոնցից երկրորդը հետեւեալն է. եօթ խորհուրդները մեզ պատրաստում են՝ իւրացնելու եօթ առաքինութիւնները.

ա) Մկրտութիւնը հաւատքի խորհուրդն է. մկրտւում ենք, որովհետեւ հաւատում ենք:

բ) Դրոշմը յոյսի խորհուրդն է. յոյս դնելով Սուրբ Հոգու զօրութեան վրայ՝ կարող ենք լինում մարտնչել թշնամու (սատանայի) դէմ:

գ) Հաղորդութիւնը սիրոյ խորհուրդն է. որովհետեւ սիրով ենք միանում եւ միաւորւում մեր գլուխը հանդիսացող Քրիստոսին՝ որպէս մարմին Նրա մարմնից եւ որպէս անդամ Նրա անդամներից:

դ) Ապաշխարութիւնը արդարութեան խորհուրդն է. որովհետեւ զղջման, խոստովանութեան եւ ապաշխարութեան գործերի միջոցով արդարանում ենք մեղքերից:

ե) Օծումը խորհուրդն է արդարութեան լրումի. որովհետեւ, կեանքի պատերազմից դուրս գալով (մեռնելով), մաքրում ենք քրտինքն ու փոշին՝ մարմնաւոր պատերազմից ելնողների պէս:

զ) Ձեռնադրութեան կարգը խոհեմութեան եւ գիտութեան խորհուրդն է. որպէսզի ընծայուողը իմաստութեամբ եւ գիտութեամբ սպասաւորի խորհուրդներին եւ խրատի ու սովորեցնի ժողովրդին:՝

է) Պսակը ողջախոհութեան խորհուրդն է. որպէսզի ողջախոհ ամուսնութեամբ զսպի բղջախոհ ցանկութիւնը եւ հեռու մնայ շնութիւնից ու պոռնկութիւնից («Գիրք հարցմանց», էջ 587):

* * *

Ո՞րն է խորհուրդների պատմութիւնը:

-Մեր Տիրոջից՝ Յիսուս Քրիստոսից ուղղակիօրէն հաստատուած խորհուրդները երկուսն են՝ Հաղորդութիւն եւ Մկրտութիւն: Մնացած հինգը յետոյ հաստատուել են այս երկուսի վրայ: Պէտք է իմանալ, որ խորհուրդների թիւն ու աստուածաբանական իմաստները բանաձեւուել են դարերի ընթացքում: Այլ խօսքով, Սուրբ Գրքում, ինչպէս նաեւ քրիստոնէական եկեղեցու հայրերի գրուածքներում իրենց նախնական պարզ վիճակով կան եօթ խորհուրդներ, որոնք իրենց այժմեան ձեւն ու իմաստը ստացել են 1545-1563 թուականներին՝ Տրիտենդեան ժողովի ժամանակ (այն Լատին Եկեղեցու ամենանշանաւոր ժողովներից մէկն է, որովհետեւ Լատին Եկեղեցին այդ ժողովով ճշտեց իր դիրքը տարբեր ուղղութիւններով ծաւալուած բողոքականութեան դէմ եւ սկսեց ներքնապէս բարեկարգել ինքն իրեն եւ զօրանալ):

Եօթ խորհուրդներն ինչպիսի՞ անհրաժեշտութիւն են քրիստոնէական կեանքի համար:

-Եօթ խորհուրդներից Մկրտութիւնը, Դրոշմը, Ապաշխարութիւնը եւ Հաղորդութիւնը անպայմանօրէն անհրաժեշտ են՝ քրիստոնեայ լինելու եւ քրիստոնէական կեանքով ապրելու համար, իսկ Ամուսնութիւնը եւ Ձեռնադրութիւնը կամաւոր են, Կարգ հիւանդացը ըստ դիպուածի է:

Եօթ խորհուրդներից որո՞նք են կրկնելի, որոնք՝ ոչ:

-Մկրտութիւնը մէկն է, այսինքն՝ մէկ անգամ մկրտուածը երկրորդ անգամ չի կարող մկրտուել: Այդպիսին է նաեւ Դրոշմը:

Ապաշխարութիւնն ու Հաղորդութիւնը միշտ կրկնւում են:

Ամուսնութիւնը կրկնւում է, երբ մեռնում է ամուսիններից մէկը կամ միւսը, կամ երբ ամուսնալուծւում են, եւ բաժանուածներն օրէնքով, այսինքն՝ ամուսնալուծման վճռով՝ չեն զրկւում նորից ամուսնանալու իրաւունքից:

Ձեռնադրութիւնը կամաւոր է եւ չի կրկնւում:

Հիւանդաց կարգը միայն հիւանդների համար է, կամաւոր եւ կարող է կրկնուել:

Խորհուրդներից որո՞նք են ինքնին ջնջւում:

-Խորհուրդները սկզբունքօրէն անջնջելի են: Բայց նրանք, ովքեր ուրանում են իրենց հաւատքը՝ հաւատք բառի քրիստոնէական եւ աստուածաբանական իմաստով, եւ յարում են ոչ քրիստոնէական

կրօնի, նրանք, ովքեր անաստուած եւ հեթանոս են դառնում՝ ուրանալով իրենց քրիստոնէութիւնը, այնպիսիների վրայից ինքնին ջնջւում են կատարուած խորհուրդները:

Դարձեալ՝ նրանք, ովքեր Ձեռնադրութեամբ եւ օծումով կարգ են ստացել եւ այլեւայլ պատճառներով կարգազրկուել կամ ինքնակամ կարգաթող եղել, այնպիսիների վրայից խորհուրդը ջնջւում է:

ՄԱՐԴԸ, ՄԵՂՔԸ, ՇՆՈՐՀԸ

ՄԱՐԴԸ

Ի՞նչ է մարդը:

-Սուրբ Գրքի բացատրությամբ՝ մարդն Աստուծոյ պատկերով ստեղծուած արարած է:

Մենք սովորեցինք, որ Աստուած հոգի է: Ուրեմն, մարդը, որը մարմնաւոր է, ինչպէ՞ս կարող է աստուածային դէմք կամ պատկեր ունենալ:

-Այո՛, Աստուած հոգի է, բայց, ինչպէս բացատրում են սուրբ հայրերը, «երբ Աստուած ուզում էր երեւալ Իր սուրբերին, ոչ թէ ուրիշ, այլ միայն մարդու կերպարանքով էր երեւում, ում ստեղծեց Իր պատկերի նման: Եւ իզուր չարեց այս, այլ որպէսզի Իր առաւելագոյն սէրը ցոյց տայ մարդկանց: Նաեւ՝ որպէսզի մարդկանց սկզբում կրթի եւ պատրաստի՝ իմանալու, որ երբ Իր Որդուն իբրեւ մարդ աշխարհ առաքի, տարօրինակ բան չհամարեն այդ, այլ մանաւանդ իմանան, որ Ինքն (Աստուած) այդ կերպարանքով էր յայտնւում» (Եղնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց», Ա, ԻԳ):

Ուրեմն, ի՞նչ է նշանակում Աստուած մարդուն Իր պատկերով ստեղծեց:

-Այսինքն՝ մարդը Աստծուն նմանւում է իր հոգով, որովհետեւ Աստուած հոգի է:

Աստուած անձնիշխան է (Իր կամքի տէրը, ազատ). այդպիսին է եւ մարդը:

Աստուած անմահ է. անմահ է նաեւ մարդու հոգին:

Մարդն իր իմացական եւ հոգեկան կարողութիւններով է, որ վեր է աշխարհի բոլոր արարածներից եւ իշխում է նրանց: Իսկ երբ մարդը յարում է երկրաւոր բաների, մերկանում է նրա աստուածային պատիւը, եւ նա նմանւում է անասուններին:

Ի՞նչ կերպով է արտայայտւում մարդու հոգին:

-Մարդու իմացական կարողութեամբ եւ ազատ կամքով: Մարդն իր հոգո՛վ է հաղորդակցւում Աստուծոյ հետ:

Աստուած տեսնո՞ւմ է:

-Աստուած չի տեսնւում, որովհետեւ հոգի է, բայց յայտնւում է ամէն տեղ եւ ամէն ժամանակ Իր հրաշալի ստեղծագործութիւնների մէջ, եւ մարդը, իբրեւ կատարելագոյնը արարածների, իր հոգով հաղորդակցւում է Աստուծոյ հետ: Մարդու հոգին նոյնպէս չի երեւում, բայց յայտնւում է նրա իմացականութեան ու ազատ կամքի մէջ, եւ մարդն իր այս հոգով է, որ հաղորդակցւում է Աստուծոյ հետ:

Ո՞րն է մարդու պարտականութիւնն այս աշխարհում:

-Քանի որ մարդն օժտուած է հոգեկան եւ իմացական կարողութիւններով, պարտաւոր է մաքուր, այսինքն՝ անմեղ պահել իր հոգին եւ անխախտ՝ իր հաղորդակցութիւնն Աստուծոյ հետ: Որովհետեւ, ըստ Աւետարանի, սուրբ (մաքուր, անմեղ) սիրտ ունեցողներն են տեսնելու Աստծուն:

Ուրեմն, ինչո՞ւ է մարդը մեղք գործում:

-Մարդն անմեղ ստեղծուեց, բայց, չարի հետ համագործակցելով, մեղանչեց Աստուծոյ դէմ: Մարդը պէտք է զգուշանայ չարից հրահրող կրքերից եւ ցանկութիւններից, որպէսզի միշտ արտափայլեն նրա հոգեկան եւ իմացական կարողութիւնները:

Ինչպիսի՞ն է մարդու յարաբերութիւնն Աստուծոյ հետ:

-Աստուած, իբրեւ արարչագործութեան Հեղինակ եւ Տէր, նախախնամում է Իր արարածներին: Եւ մարդը, իբրեւ ամենաբարձր եւ կատարեալ արարած, բարձրօրէն վայելում է Աստուծոյ նախախնամութիւնը: Բայց, նախահայր Ադամից սկսած, մարդը միշտ փորձւում է, սայթաքում, մեղանչում: Այս է պատճառը, որ ասում են՝ մարդը մեղանչական է:

Ի՞նչ է նշանակում նախախնամել:

-Նախախնամել նշանակում է սկզբից իսկ խնամք տանել: Աստուած նախախնամում է Իր ողջ ստեղծագործութեանը: Իսկ մարդու համար Նրա նախախնամութիւնը մի անճառելի գեղեցկութիւն ունի:

Ինչպէ՞ս:

-Աւետարանի խօսքով՝ «Աստուած այնքան սիրեց աշխարհը, զ նոյնիսկ Իր Միածին Որդուն տուեց, որպէսզի աշխարհը Նրանով փրկուի» [Յովհ. Գ 16]: Եւ մարդու՝ Յիսուս Քրիստոսի Արեան փրկագործութիւնը Աստուծոյ նախախնամութեան անենահիանալի և ամենամեծ դրսեւորումն է:

Ի՞նչ է մահը:

-Կրօնական իմաստով՝ մահ նշանակում է հոգու բաժանում մարմնից: Եբրայեցի իմաստունի բացատրութեամբ՝ «Հողը (մարմինը) վերադառնում է երկիր (հող), ինչպէս որ էր սկզբում, իսկ հոգին վերադառնում է Աստուծոյ մօտ, Ով այն տուեց» [Ժող. ԺԲ 7]:

Սովորեցինք, որ Աստուած ամէնուրեք է. ուրեմն ո՞ւր է գնում մարդու հոգին:

-Մարդկային լեզուն անկարող է բացատրել հոգեկան աշխարհի խորհրդաւոր իրողութիւնները: Միայն գիտենք եւ հաւատում ենք, որ մարդու հոգին անմահ է եւ մարմնի մահից յետոյ մնում է անմահ անմահութեան ծոցում:

ՄԵՂՔԸ

Ի՞նչ է մեղքը:

-Մեղք նշանակում է յանցանք, վնաս: Ճշմարտութիւնն ուրանալը, պատուիրանին կամ օրէնքին հակառակ արուած գործը յանցանք է, մեղք: Իսկ բառի կրօնական իմաստով՝ մեղք են կոչւում այն բոլոր գործերը, որոնք հակառակ են աստուածային պատգամներին ու պատուիրաններին:

Ի՞նչ է մեղքի հետեւանքը:

-Երբ մարդ յանցանք է գործում, դրա համար պատժւում է. երբ վնաս է պատճառում, հատուցում է այն: Կան ներելի եւ աներելի մեղքեր:

Աւետարանում ինչպէ՞ս են բացատրւում ներելի եւ աներելի մեղքերը:

-Բոլոր մեղքերն ու հայհոյութիւնները, որքան էլ դրանք շատ լինեն, կներուեն մարդկանց, բայց ով որ հայհոյի Սուրբ Հոգուն, ամենեւին չի ներուելու նրան. նա պարտաւոր պիտի լինի յաւիտենական Դատաստանի առաջ [Հմմտ. Մարկ. Գ 28-29, Ղուկ. ԺԲ 19]: Այլ խօսքով, յայտնի ճշմարտութիւնները տեսնելը եւ նրանց հակառակ գործելը հոգեւոր եւ նիւթական աշխարհում այնպիսի մեղքեր եւ յանցանքներ են, որ քաւութիւն չունեն: Այդպիսի մեղաւորներն ու յանցաւորները անպատճառ պիտի տուժեն:

Ինչպէ՞ս են քաււում ներելի մեղքերը:

-Երբ մարդ խոստովանում է իր գործած մեղքը եւ սրտանց ապաշխարում այլեւս չմեղանչելու որոշումով, արժանանում է մեղքի քաւութեան ու թողութեան:

ՄԱՆՕԹ. Մեղքի մասին խօսել ենք նաեւ խորհուրդների շարքում:

ՇՆՈՐՀԸ

Ի՞նչ է նշանակում *շնորհ*:

–Շնորհ բառը շատ իմաստներ ունի, բայց այստեղ, իր կրոնական իմաստով, նշանակում է այն կարողությունը կամ ընդունակությունը, որ Աստուած տալիս է հաւատացեալներին՝ գործադրելու եւ կատարելու համար Իր կամքը: Երբ ասում ենք՝ այսինչ մարդն աստուածային ձիրք կամ շնորհ ունի, հասկանում ենք Աստծուց տրուած ձիրք, շնորհ: Եւ ընդհակառակը, երբ ասում ենք անշնորհք մարդ, հասկանում ենք այնպիսի մէկի, որը զուրկ է աստուածային շնորհից:

Ուրեմն, շնորհը բնածին չէ՞ մարդու մէջ:

–Անշուշտ, մարդիկ բնականից օժտուած են այլեւայլ ձիրքերով լինեն նրանք քրիստոնեայ հաւատացեալ, թէ ոչ: Եւ որովհետեւ Աստուած է մարդու Արարիչը կամ Ստեղծիչը, Նա էլ տալիս է բնածին շնորհները. սակայն այստեղ խնդիրը ոչ թէ մարդու այս կամ այն ձիրքի կամ շնորհի մասին խօսելն է, այլ աստուածային կամքը կատարելու ընդունակութեան եւ կարողութեան: Եւ քրիստոնէական աստուածաբանութեան կարեւոր կէտերից մէկը շնորհի վարդապետութիւնն է:

Ի՞նչ է ասում Յովհաննէս աւետարանիչը շնորհի մասին:

–«Եւ Բանը մարմին եղաւ եւ բնակուեց մեր մէջ, եւ Նրա փառքը տեսանք՝ փառքը որպէս Միածնի Հօրից՝ լի շնորհներով եւ ճշմարտութեամբ... Եւ Նրա լիութիւնից մենք ամէնքս ստացանք շնորհ շնորհի փոխարէն: Քանզի օրէնքը տրուեց Մովսէսի միջոցով, իսկ շնորհը եւ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան» [Յովհ. Ա 14–17]:

Ի՞նչ է ասում այս մասին Պօղոս առաքեալը:

–«Որովհետեւ Աստուծոյ շնորհը յայտնուեց որպէս փրկութեան միջոց բոլոր մարդկանց, շնորհ, որ խրատում է մեզ մերժել ամբարշտութիւնն ու աշխարհիկ ցանկութիւնները, այս աշխարհում ապրել զգաստութեամբ, արդարութեամբ ու աստուածպաշտութեամբ եւ սպասել երանելի յոյսին եւ փառքի յայտնութեանը մեր Աստուծոյ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի, որ Իր Անձը տուեց մեզ համար, որպէսզի փրկի մեզ ամենայն անօրէնութիւնից եւ մաքրի որպէս Իր սեփական ժողովուրդ՝ նախանձախնդիր բարի գործերի» [Տիտոս Բ 11–14]:

Ի՞նչ ենք հասկանում առաքելական այս խօսքերից:

–Հասկանում ենք, որ նոյն Ինքը՝ Յիսուս Քրիստոս, Հին Օրէնքի տեղ որպէս աստուածային շնորհ տրուեց աշխարհին՝ նրա փրկութեան համար:

Հասկանում ենք նաեւ, որ Աստուած շնորհ է տալիս Իր հաւատացեալներին, որպէսզի կատարեն Իր կամքը ճիշտ Յիսուս Քրիստոսի նման՝ ապրելով առանց մեղքի եւ բարձր կեանքով:

Ի՞նչ կերպով է արտայայտւում շնորհը Եկեղեցու մէջ:

–Յակոբոս առաքեալն ասում է. «Ամէն բարի տուրք եւ ամէն կատարեալ պարգեւ իջնում են վերեւից՝ լուսոյ Հօրից...» [Յակ. Ա 17]:

Հետեւաբար, Եկեղեցում արուած բոլոր աղօթքներն ու պաշտամունքները, բոլոր խորհուրդներն ու արարողութիւնները, որոնց նպատակը հաւատացեալների սրբացումն ու մերձեցումն է Աստծուն, արդիւնք են շնորհի, որ իջնում է Աստծուց: Այս է պատճառը, որ Առաքելական թղթերում շնորհը միշտ շեշտւում է եւ խաղաղութեան հետ ողջոյնի ձեւով ուղղւում հաւատացեալներին: Եկեղեցու աստուածային պաշտամունքի մէջ էլ շնորհը շեշտւում է՝ համաձայն առաքելական աւանդութիւնների:

Ի՞նչ կապ ունի շնորհը Երրորդութեան հետ:

–Շնորհն աստուածային է, հետեւաբար աստուածային երեք Անձերի անունով էլ (Աստուծոյ շնորհ, Յիսուս Քրիստոսի շնորհ, Սուրբ Հոգու շնորհ) արտայայտւում եւ ուղղւում է հաւատացեալներին՝ միշտ յիշեցնելու համար սրբութեան կամ մաքուր կեանքի անհրաժեշտութիւնը, քաջալերելու եւ զօրացնելու սուրբ հաւատքի մէջ:

Առաքելական թղթերում տեսնում ենք, որ առաքեալները Յիսուս Քրիստոսի Յարութեան վկայութիւնը տալիս էին մեծ զօրութեամբ, եւ բոլորի վրայ մեծամեծ շնորհներ կային [տե՛ս Գործ. Դ 33]: Պօղոսը

եւ Բառնաբասը իրենց առաքելական գործունէութեան մէջ քարոզում էին, համոզում իրենց ունկնդիրներին, որ «մնան Աստուծոյ շնորհի մէջ» [անդ, ԺԳ 43]: Պետրոս առաքեալն ասում է. «Հաւատում ենք, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով ենք փրկւում մենք, ինչպէս նաեւ նրանք» [անդ, ԺԵ 11, հմմտ. Գաղատ. Բ 16]: «Այսուհետեւ, հաւատքով արդարացած, խաղաղութիւն ունենանք Աստուծոյ հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ում միջոցով էլ հաւատքով հաղորդակից դարձանք այդ շնորհին, որի մէջ ենք եւ պարծենում ենք Աստուծոյ փառքի յոյսով» [Հռոմ. Ե 1-2]: «Որպէսզի մեղքը ձեզ չտիրի, որովհետեւ այլեւս օրէնքի տակ չէք, այլ շնորհի» [անդ, Զ 14]: «Որովհետեւ մեղքի վարձը մահն է, իսկ Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք» [անդ, Զ 23]:

Նոյնիսկ հաւատացեալներից իւրաքանչիւրի ընդունակութիւններն ու կարողութիւնները պէս-պէս շնորհներ են կամ շնորհների արտայայտութիւններ [տե՛ս Հռոմ. ԺԲ, Ա Կորնթ. ԺԲ]:

Վերջապէս, Աստուծոյ շնորհն ու կոչումն «անզեղջ» են, այսինքն՝ անփոփոխ, եւ Աստուած չի զղջում՝ դրանք տալու համար [տե՛ս Հռոմ. ԺԱ 29], եւ առաքեալները (մանաւանդ Պօղոս առաքեալը) իրենց բոլոր թղթերում ողջունում են շնորհով եւ մաղթում, որ շնորհն ամենեւին չպակասի ընդհանրապէս եկեղեցուց եւ մասնաւորապէս ամէն մի հաւատացեալից:

Մեր Եկեղեցում մասնաւորապէս ո՞ր հանդիսաւոր առիթով է շեշտւում շնորհը:

–Ձեռնադրութեան ժամանակ երգւում է, եւ եպիսկոպոսը կրկնում է. «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ ի սարկաւագութիւնէ ի քահանայութիւն, սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեանս»:

Այսինքն՝ աստուածային եւ երկնաւոր շնորհն է լցնում Առաքելական Եկեղեցու սուրբ ծառայութեան պէտքերը, այդ շնորհն է սուրբ Եկեղեցու ծառայութեան կոչում ընծայուողին՝ թէ՛ իր եւ թէ՛ ժողովրդի վկայութեամբ:

Ուրեմն, ո՞րն է մեր պարտականութիւնը:

–Մենք, իբրեւ Առաքելական Սուրբ Եկեղեցու հաւատացեալ անդամներ, պարտաւոր ենք արդիւնաւորել մեզ տրուած շնորհները մեր կեանքում՝ ապրելով մաքուր, շնորհալի կեանքով եւ կատարելով մեր բոլոր գործերը համաձայն քրիստոնէական սուրբ կրօնի պայմանների:

ԿՐՕՆԻ
ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ի՞նչ է նշանակում բարոյագիտութիւն:

-Բարոյագիտութիւն նշանակում է մարդկային պարտականութիւնների կամ բարոյականի գիտութիւն:

Ուրեմն, ի՞նչ է կրօնի բարոյագիտութիւնը:

-Կրօնի նպատակը ոչ միայն աստուածգիտութեան լոյսով մարդկանց լուսաւորելն է, այլեւ աստուածային սկզբունքների եւ պատգամների վրայ հիմնուած կեանքով եւ կենցաղով նրանց ապրեցնելը: Դարձեալ, կրօնի նպատակը իրենց ամբողջ հաւատքով ու գիտակցութեամբ մարդկանց երջանիկ դարձնելն է Աստուծոյ սիրոյ եւ մարդկային հասարակութեան խաղաղութեան մէջ: Հետեւաբար, կրօնի բարոյագիտութիւնն է, որ սովորեցնում է այդ նպատակի համաձայն կեանք եւ կենցաղ վարելու գիտութիւնը:

Բացատրի՛ր ասածներդ:

-Կատարելով իրենց պարտականութիւնները աստուածային կամքի եւ օրէնքների համաձայն՝ քրիստոնեայ մարդիկ կիրագործեն կրօնի բարոյագիտութիւնը, որովհետեւ սոսկ անունով աստուածապաշտ լինելը ոչ մի նշանակութիւն չունի. պէտք է Աստուծոյ կամքը կատարող լինել: Այս բացատրութիւններից հետեւում է, որ քրիստոնեայ մարդու հաւատքը եւ կեանքը պէտք է համապատասխան լինեն իրար:

Որտե՞ղ ենք գտնում կրօնի բարոյագիտութեան առաջին դասերը:

-Հին Կտակարանի Ելից [գլ. Ի] եւ Բ Օրինաց [գլ. Ե] գրքերում: Այս դասերը ծանօթ են Տասնաբանեայ պատուիրաններ անունով, որ նշանակում է տասը խօսքերից բաղկացած պատուէրներ:

Ո՞վ է գրել Տասնաբանեան:

-Ըստ Սուրբ Գրքի՝ Աստուած է գրել այն քարէ երկու տախտակների վրայ եւ տուել Մովսէս մարգարէին Սինա լեռան վրայ:

Որո՞նք են Տասնաբանեայի դասերը:

-Համառօտ՝ հետեւեալներն են.

ա) Ես եմ միակ Աստուած, ուրիշ աստուածներ չունենա՛ս:

բ) Կուռքեր չշինե՛ս քեզ համար:

գ) Աստուծոյ անունը զուր տեղը չտա՛ս:

դ) Շաբաթ օրը սո՛ւրբ պահիր:

ե) Պատուի՛ր հօրդ եւ մօրդ:

զ) Մի՛ սպանիր:

է) Մի՛ շնանայ:

ը) Մի՛ գողանայ:

թ) Սուտ մի՛ վկայիր:

ժ) Մի՛ ցանկանայ ընկերոջդ ունեցուածքը:

Կարո՞ղ ես բացատրել սրանք:

-Այո՛:

ա) Վաղնջական ժամանակներում մարդիկ հաւատում էին մէկից աւելի աստուածների, բայց հետզհետէ հասկացան, որ Աստուած մէկն է, որ ուրիշ աստուած կամ աստուածներ չկան: Բազմաստուածութիւնն ապականում է մարդկանց նկարագիրը, իսկ քրիստոնէական միաստուածութիւնը՝ ազնուացնում եւ բարձրացնում:

բ) Կռապաշտութիւնը հին կրօնների ամենաթոյլ կողմն է, եւ տկարամիտ ժողովուրդներն են նիւթական կուռքեր պաշտել: Ճշմարիտ Աստուած բազմաստուած եւ կռապաշտ Եգիպտոսի գերութիւնից ճողոպրած ժողովրդին պատուիրում է կուռքեր չշինել՝ յիշելով Եգիպտոսի կեանքը:

գ) Մարդիկ իրենց խօսքը հաւաստի դարձնելու կամ իրենց շահը պաշտպանելու համար յաճախ երդւում են ամենանուիրական բաների անունով: Աստուած նուիրական անուն է, եւ պէտք չէ զուր տեղը տալ Նրա անունը՝ սուտ խօսքը իրաւացի դարձնելու եւ կամ ինչ-որ անիրաւ շահ պաշտպանելու համար, որովհետեւ ճշմարտութիւնը եւ անմեղութիւնն ինքնին խօսուն են եւ յայտնի են դառնում եւ ապացուցուելու համար արհեստական ձեւերի կարիք չունեն: Պէտք է յիշել, որ մեր Տէրն էլ պատուիրեց Իր աշակերտներին՝ «Ձեր այոն այո, եւ ոչը ոչ թող լինի» [Մատթ. Ե 37]:

դ) Շաբաթը, այսինքն՝ եօթնեակի վերջին օրը սուրբ պահել, ուրիշ խօսքով՝ վեց օր աշխատել, իսկ եօթերորդ օրը հանգստանալը եւ նոյնիսկ աշխատաւոր կենդանիներին հանգիստ տալը անհրաժեշտութիւն է մարդկանց եւ մարդկանց համար աշխատող կենդանիների համար: Որովհետեւ չափազանցութիւնները վնասում են մարմնի կանոնաւոր զարգացմանը եւ առողջութեանը: Մուլութիւնն էլ իր բոլոր ձեւերով վնասակար է մարդուն: Հետեւաբար, ամբողջ վեց օր կանոնաւոր աշխատանքների եւ գործունէութեան մէջ յոգնած մարդը պէտք է մէկ օր կատարելապէս հանգստանայ, որպէսզի կազդուրուի եւ պատրաստ լինի նոր աշխատանքի: Իսկ հանգստի այդ մէկ օրը պէտք է իսկապէս հանգիստ անցկացնի եւ կազդուրուի եկեղեցով եւ հոգեւոր մտածումներով:

ե) Մնողների հանդէպ սէրը եւ յարգանքը զաւակների ամենատարրական պարտքն է: Միայն գիտենալն ու յիշելը, թէ հայրն ու մայրը որքա՜ն հոգս ու խնամք են տարել՝ զաւակներին մեծացնելու համար, ինքնին պիտի ծնողասիրութիւն ծնեն զաւակների սրտում ու մտքում:

Զաւակներն ամէն կերպ պէտք է սիրեն ու յարգեն իրենց ծնողներին եւ մշտապէս օգնեն նրանց հիւանդութեան եւ նեղութեան ժամանակ: Սուրբ Գիրքն ասում է, որ ծնողասէր զաւակները բարիք պիտի վայելեն եւ երկար պիտի ապրեն:

զ) Մարդասպանութիւնը ոճիր է: Մարդիկ պարտաւոր են իրենց պաշտպանել իրենց կեանքի թշնամիների դէմ: Ըստ Աւետարանի՝ աւելի լաւ է զգուշանալ չարից՝ ոճիր գործելու փորձանքի մէջ չընկնելու համար: Բայց իրաւունքներ եւ ճշմարտութիւններ ծածկելու, հաճոյքի կամ մի այլ բանի համար մարդ սպանելը ոճիր է, իսկ աստուածապաշտ մարդիկ չպէտք է ոճիր գործեն:

է) Շնութիւնը հակառակ է օրինաւոր ամուսնութեան: Պէտք չէ, որ մարդիկ շներին նմանուեն: Ամուսնութիւնը նուիրագործուած է աստուածային օրհնութեամբ: Այդ օրհնութիւնը պէտք է սուրբ պահուի: Երբ սուրբ Պսակով ամուսնացածները դրժում են իրենց ուխտը եւ ապօրինի յարաբերութիւնների մէջ մտնում ուրիշների հետ, մեղանչում են ամուսնական սրբութեան դէմ եւ ապականում ընտանեկան եւ հասարակական կեանքը: Իսկ ապականուած ընտանիքը կամ հասարակութիւնը այլեւս զուրկ է օրհնութիւնից: Աստուած սուրբերի (մաքուրների) հետ է եւ նրանց մէջ է բնակւում: Ամուսնական կեանքի խախտումը շնութեամբ մարդկային հասարակութեանն անընդունակ է դարձնում կեանքի ազնուագոյն եւ բարձրագոյն գործառնութիւնների համար:

ը) Գողութիւնը ստոր եւ վտանգաւոր զբաղմունք է, որ առաջնորդում է բազմատեսակ ոճիրների: Քեզ չպատկանող բաներին չպէտք է տիրանաս գողութեամբ: Գողութիւնը քաջութիւն չէ, այլ յանդուգն վատութիւն:

Արդար վաստակն ապահովում է կանոնաւոր եւ գործունեայ կեանք, որ անհրաժեշտ է ապրելու համար: Աշխատող մարդիկ չեն կարող գողանալ եւ չեն գողանում: Աշխատի՛ր կանոնաւորապէս, ապահովի՛ր արդար վաստակդ. այսպէս անելով՝ ոչ միայն կապրես խաղաղ ու ապահով, այլեւ կարող ես աւելացնել, նոյնիսկ հարստանալ եւ ուրիշներին օգնել:

թ) Ստելը մեղք է ճշմարտութեան դէմ: Այն անիրաւ եւ անպատիւ գործ է: Ինչո՞ւ են մարդիկ ստում. որովհետեւ անիրաւ են կամ գող, ծոյլ կամ շահախնդիր. վերջապէս, անխոստովանելի գործեր կատարելու պատրաստ մարդն է ստախօսը, որ սուտ է խօսում եւ սուտ վկայութիւններ անում՝ ուրիշներին վնաս պատճառելու համար: Բարձր նկարագրի տէր, պարկեշտ եւ քաջ մարդը չի ստի եւ սուտ վկայութիւն չի անի երբէք:

ժ) Ցանկանալ այն բաները, որոնք քեզ չեն պատկանում. հասարակութեան կեանքի առողջացման պայմանն է սա: Անիրաւ ցանկութիւնը մարդուն մղում է գործելու ամէն տեսակ վատութիւն, ոճիր: Կարելի է ասել, որ ցանկութիւնն իր մէջ բովանդակում է Զ-Թ պատուիրաններում մատնանշուած մեղքերը: Այն բանը, որ քոնը չէ, եւ ուզում ես անօրինաբար ձեռք բերել, այդ անելու համար անպայման պիտի ստես, գողանաս, շնութիւն անես եւ նոյնիսկ մարդասպան դառնաս եւ այլն: Ուրեմն, չպէտք է ցանկանաս:

Ուրեմն, ո՞րն է Տասնաբանեայ պատուիրանների բարոյագիտական նշանակութիւնը:

–Այդ տասը դասերում կան երեք կէտեր, որոնց վրայ հիմնուած են կրօնի բարոյական ճշմարտութիւնները.

ա) ճանաչել ճշմարիտ Աստծուն,

բ) իմանալ սեփական անձի պատիւը,

գ) սիրել ընկերոջը:

Յիսուս Քրիստոս ի՞նչ ասաց Տասնաբանեայի մասին:

-Մի անգամ մի հարուստ երիտասարդ եկաւ Քրիստոսի մօտ եւ հարցրեց. «Բարի՛ Վարդապետ, ի՞նչ բարի գործ անեմ, որ յաւիտենական կեանք ունենամ»: Յիսուս նրան ասաց. «Պահի՛ր պատուիրանները»: Երիտասարդը կրկին հարցրեց. «Ո՞ր պատուիրանները»: Վարդապետն ասաց. «Մի՛ սպանիր, մի՛ շնանայ, մի՛ գողանայ, սուտ մի՛ վկայիր, պատուի՛ր հօրդ եւ մօրդ, սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պէս»: Երիտասարդն ասաց. «Ես այդ բոլորը մանկութիւնից ի վեր պահել եմ, դեռ պակաս բան ունե՞մ արդեօք: Յիսուս պատասխանեց. «Եթէ ուզում ես կատարեալ լինել, գնա՛, վաճառի՛ր ունեցուածքդ, տո՛ւր աղքատներին (որով գանձեր կունենաս երկնքում) եւ ե՛կ ինձ ետեւից»: Հարուստ երիտասարդը տրտմեց, որովհետեւ շատ ունեցուածք ունէր, եւ անցաւ գնաց [Մատթ. ԺԹ 16-22]:

Ի՞նչ է հետեւում Յիսուսի այս խօսքերից:

-Նախ՝ այն, որ Տասնաբանեայ պատուիրանները մեր Տէրն էլ է դնում որպէս մարդկանց կրօնական, անձնական եւ հասարակական կեանքի կատարելութեան պայման: Ուրեմն, քրիստոնեաների պարտականութիւնն է լաւ սերտել Հին Կտակարանի այս դասերը:

Երկրորդ՝ Յիսուսին մօտեցող հարուստ երիտասարդը կատարելութեան պայմանը լրացնելու չափ ո՛չ քաջութիւն ունէր, ո՛չ էլ կարող էր զոհողութիւն անել: Որովհետեւ ընկերոջը սիրելու ամենադրական ապացոյցն է աղքատին օգնելը: Հասարակութեան մէջ կվերանայ աղքատութիւնն ու թշուառութիւնը, երբ ընկերասիրութիւնը, բառի ուրբաթային իմաստով, յարգուի եւ իրագործուի այս աշխարհում:

ԵՕԹ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԵՕԹ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի՞նչ է նշանակում առաքինութիւն:

-Առաքինութիւն նշանակում է բարի, ճշմարիտ ունակութիւն կամ յատկութիւն: Առաքինութիւնը անձնական է. երբ ասում ենք առաքինի մարդ, հասկանում ենք հոգով բարի եւ ճշմարիտ անձնաւորութիւն:

Ի՞նչ է նշանակում մոլութիւն:

-Մոլութիւնը հոգեկան եւ բարոյական անկարգ վիճակ է, երբ մարդու ցանկութիւնները, կրքերը, ձգտումները բնականոն չեն: Մոլութիւնն էլ անձնական է, եւ նրանք, ովքեր հոգեպէս եւ բարոյապէս գտնուում են այդպիսի վիճակում, կոչւում են մոլի:

Որո՞նք են այդ եօթ առաքինութիւնները եւ եօթ մոլութիւնները:

-Եօթ առաքինութիւններն են. ա) խոնարհութիւն, բ) եղբայրասիրութիւն, գ) հեզութիւն, դ) աշխատասիրութիւն, ե) ողորմածութիւն, զ) ժուժկալութիւն, է) ողջախոհութիւն:

Եօթ մոլութիւններն են. ա) հպարտութիւն, բ) նախանձ, գ) բարկութիւն, դ) ծուլութիւն, ե) ագահութիւն, զ) որկրամոլութիւն, է) բղջախոհութիւն:

Կրօնական առումով ի՞նչ են եօթ մոլութիւնները:

-Մեծ մեղքեր են, եւ դրանցից պէտք է զգուշանալ: Թէեւ դրանք անձնական մեղքեր են, բայց քանի որ մարդիկ իրար կապուած են հոգեւոր եւ հասարակական կեանքի կապերով, մէկի մոլութիւնն անպատճառ ազդում է միւսի վրայ: Մոլութիւններն արդիւնք են միջավայրի եւ դաստիարակութեան, եւ նրանք, ովքեր մոլութիւններ ունեն, չեն կարող սիրել Աստծուն, որովհետեւ մեղքը Աստծուն սիրելու արգելք է: Եօթ մոլութիւնները յաճախ կոչւում են նաեւ եօթ մահացու մեղքեր:

Այս եօթ առաքինութիւնները եւ մոլութիւնները որեւէ կապ ունե՞ն

Տասնաբանեայի հետ:

-Իհարկէ ունեն, որովհետեւ երկուսի սկզբունքն էլ նոյնն է՝ սիրել Աստծուն, սիրել սեփական անձը եւ սիրել ընկերոջը:

Կարո՞ղ ես բացատրել այդ սկզբունքները:

- Այո՛:

ա) Հպարտ մարդը ոչ միայն չի կարող սիրել իր ընկերոջը, այլ նաեւ Աստծուն: Սրա համար է ասուած. «Աստուած ամբարտաւաններին հակառակ է, իսկ խոնարհներին շնորհ է տալիս» [Առակ. Գ 34]:

բ) Նախանձոտ մարդն ամենից առաջ թշնամին է իր իսկ անձի, որովհետեւ նախանձը միշտ ջղագրգիռ վիճակում է պահում մարդուն, միշտ չարութիւն է խորհել տալիս նրան եւ դրդում չարիք պատճառել ընկերոջը: Սրա համար է ասուած. «Սիրի՛ր ընկերոջդ, ինչպէս քո անձը»: Իսկ Աւետարանի պատգամն է. «Այն ամէնը, ինչ որ կամենում էք, որ անեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դո՛ւք արէք նրանց, քանզի այս իսկ են Օրէնքն ու Մարգարէները» [Մատթ. է 12]:

գ) Բարկութիւնը, երբ արդար բանի համար չէ, նախանձի պէս վնասում է անձին եւ արգելում ընկերասիրութեան ճին: Սրա համար ասուած է. «Թէ բարկանաք էլ, մի՛ մեղանչէք, արեգակը ձեր բարկութեան վրայ թող մայր չմտնի» [Եփես. Դ 26]: Դարձեալ, թէ՝ հեզերը պիտի ժառանգեն երկիրը [տե՛ս Մատթ. Ե 5]:

դ) Ծանր մեղք է ծուլութիւնը: Ըստ Պօղոսի՝ չաշխատողը չպէտք է ուտի: Մարդը պէտք է լինի աշխատասէր, գործունեայ, որպէսզի օրինաւոր կերպով վաստակի իր ապրուստը, չդողանայ եւ ուրիշներին չվնասի: Սողոմոն Իմաստունն իբրեւ աշխատասիրութեան տիպար մրջիւնին է մատնանշում [տե՛ս Առակ. Զ 6]:

ե) Ագահ մարդը ո՛չ ինքն է վայելում եւ ո՛չ էլ ուրիշին վայելել տալիս: Իսկ առատաձեռնը վայելում է իր աշխատութեան արդիւնքը եւ սիրով օգնում ընկերոջը: Կեանքի տեւողութիւնը կարճ է. պէտք է բարիք գործել բոլորի համար, քանի դեռ ժամանակ կայ [տե՛ս Գաղատ. Զ 10]: Մարդը պէտք է ողորմած լինի, որպէսզի հարստանայ աստուածային ճոխութիւններով:

զ) Որկրամոլութիւնն ախտ է. դրա դարմանը ժուժկալութիւնն է կամ չափաւորութիւնը, ինչն առողջ է պահում մարդու մարմինը եւ հոգեկան կարողութիւնները: Մինչդեռ շատակերութիւնը վնասակար է առողջութեանը, որովհետեւ չափից աւելի բեռնաւորուած ստամոքսը շուտ է յոգնում, շուտ շարքից դուրս գալիս եւ հիւանդութիւնների պատճառ դառնում: Պէտք չէ, որ մարդ շատ եւ ամէն բան ուտի: Ուտելիքն ու խմելիքը մեծ ազդեցութիւն ունեն մարդկանց վրայ: Որկրամոլների, շատակերների եւ խմողների առջեւ բաց են մեղքի ճամփաները:

է) Բղջախոհութիւնը հակառակն է ողջախոհութեան: Կրօնի բարոյագիտութիւնը պահանջում է, որ մարդ միշտ առողջ եւ մաքուր խորհուրդներ ունենայ: Անմաքուր խորհուրդներով խռնուած միտքը գիշեր-ցերեկ այլ բան չի խորհում, բացի պղծութիւնից ու ցոփութիւնից: Շուայտութիւնն ու արբեցութիւնը բղջախոհութեան անխուսափելի հետեւանքներն են: Նրանք, ովքեր գերի են մարմնի ցանկութիւններին, յափշտակում են իրենց հոգու իրաւունքները, իրենց կաշկանդում մեղքի գրկի մէջ եւ այսպիսով ոչ միայն կարճացնում են իրենց կեանքը, այլեւ զրկւում հոգեւոր կեանքի զուարթ վայելքից եւ անհաղորդ մնում աստուածային գեղեցկութիւններին, որոնցով շատ հարուստ է կեանքը:

ԵԿԵՂԵՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
ԱՂՕԹՔ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ԵԿԵՂԵՑԻ

Ի՞նչ ես հասկանում *եկեղեցի* ասելով:

-Հասկանում եմ այն տեղը, որտեղ հաւաքւում են հաւատացեալները եւ աղօթում: Սրա համար է, որ եկեղեցին կոչւում է նաեւ աղօթքի տուն, աղօթավայր:

Ինչպէ՞ս է սահմանում Եկեղեցին Պօղոս առաքեալը:

-Իր Տիմոթէոս աշակերտին նա գրում է. «Քեզ գրում եմ սա, քանզի յոյս ունեմ շուտով գալ: Իսկ եթէ ուշանամ, որպէսզի գիտենաս, թէ ինչպէս պէտք է շրջել Աստուծոյ տան մէջ, որ կենդանի Աստուծոյ Եկեղեցին՝ ճշմարտութեան սիւնը եւ հաստատութիւնը [Ա Տիմոթ. Գ 14-15]:

Ուրեմն, Եկեղեցին միայն շէնք չէ՞:

-Անշուշտ. եկեղեցի է նաեւ հաւատացեալ ժողովուրդը, որովհետեւ մեր Տէրն ասաց. «Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն Իմ անունով, ես այնտեղ՝ նրանց մէջ եմ» [Մատթ. ԺԸ 20]: Սրա համար էլ սուրբ Սահակ հայրապետն այսպէս է սահմանում Եկեղեցին. «Աստուծոյ պատուիրանները մեզ չեն ասում, թէ քարերից եւ փայտերից շինուածքն է Եկեղեցին, այլ հաստատուն վէմի վրայ հաւատքով շինուած մարդկային ցեղը: Ուրեմն, Եկեղեցին ճշմարիտ հաւատքն է, որ հաւաքում է մեզ մէկտեղ՝ ճանաչելու համար Աստուծոյ Որդուն»: Նոյն հայրապետը, շեշտելով անբիծ հաւատքի կարեւորութիւնը, ասում է. «Իսկապէս այս է Քրիստոսի հաւատացեալների մայր Եկեղեցին: Միայն թէ աներկմիտ պահենք այդ հաւատքը, որով բանաւոր եւ մտաւոր Եկեղեցի շինուեցինք առաքեալների եւ մարգարէների հիման վրայ»:

Հաւատամքի մէջ ի՞նչ ստորոգելիներով կամ նշաններով է նկարագրուած Եկեղեցին:

-«Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի»: Այսինքն՝ քրիստոնէական Եկեղեցին մի է եւ այդ մի Եկեղեցին Ընդհանրական է, Առաքելական եւ Սուրբ:

Կարո՞ղ ես բացատրել այդ ստորոգելիների իմաստը:

-Այո՛. մի է Քրիստոս, հետեւաբար մի է Քրիստոսի հաւատացեալների հաւատքը: Սրա համար մի է Եկեղեցին, որ կազմուած է աշխարհի բոլոր քրիստոնեայ հաւատացեալներից: Ուրիշ խօսքով, այլեւայլ Եկեղեցիներ չկան, եւ պէտք չէ, որ լինեն, քանի որ մի է Քրիստոս, մի է հաւատքը, եւ մի է այդ հաւատքի վրայ շինուած Եկեղեցին: Գրիգոր Տաթեւացին ասում է. «Մի՛ կոչի Եկեղեցի ոչ տեղեաւ, այլ միով հաւատով եւ յուսով կոչմանն» («Գիրք հարցմանց», էջ 533):

Այդ մի Եկեղեցին Ընդհանրական *է կամ* Կաթողիկէ, *այսինքն՝ այս աշխարհում սփռուած քրիստոնէական Եկեղեցին կազմում է քրիստոնեայ հաւատացեալներից՝ առանց ցեղի եւ լեզուի խտրութեան:*

Այդ մի եւ Ընդհանրական *Եկեղեցին* Առաքելական *է, որովհետեւ բոլոր առաքեալները Տէր Յիսուս Քրիստոսի հրամանով գնացին ամէն կողմ՝ քարոզելու բոլոր ազգերին, նրանց Աւետարանի աշակերտ դարձնելու եւ մկրտելու յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

Այդ մի, Ընդհանրական *եւ* Առաքելական *Եկեղեցին* Սուրբ *է, որովհետեւ Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս, սուրբ է. սուրբ է նաեւ հաւատքը, որի վրայ հիմնուած է Եկեղեցին:*

Սուրբ Սահակ հայրապետն ասում է. «Մենք սովորեցինք սրան ասել Կաթողիկէ Առաքելական *Եկեղեցի, որովհետեւ ամբողջ աշխարհում Քրիստոսին հաւատացողները Եկեղեցի են յորջորջւում՝ համաձայն առաքեալներին տրուած տէրունական հրամանի, թէ՝ «Գնացէ՛ք բոլոր երկրները, աշակե՛րտ դարձրէք բոլոր հեթանոսներին, մկրտեցէ՛ք նրանց Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով, սովորեցրէ՛ք նրանց պահել, ինչ որ պատուիրեցի ձեզ» (Սոփերք, Բ, էջ 100-105):*

Ուրեմն, ինչո՞ւ այլեւայլ Եկեղեցիներ կան:

-Այլեւայլ ասելով՝ պէտք է հասկանալ ոչ թէ իրար հակառակ, այլ յարանուն Եկեղեցիներ, որոնք ներկայացնում են քրիստոնէական մի Եկեղեցին: Ուրիշ խօսքով, քրիստոնէական մի Եկեղեցին այլեւայլ ճիւղաւորումներ ունի՝ իբրեւ տրամաբանական հետեւանք երկրների, միջավայրերի եւ լեզուների տարբերութեան:

Ուրեմն, իսկապէս մի՞ են յարանուն Եկեղեցիները:

–Այո՛, Քրիստոսի Եկեղեցին մի է. սա անվիճելի է: Ցարանուն Եկեղեցիներն էլ, լինելով հանդերձ մի Եկեղեցու մասերը կամ անդամները, իւրաքանչիւրն իր սեփական գծերն ունի, որոնք նուիրագործուել են դարերի ընթացքում: Այս սեփական գծերը երկրորդական են Եկեղեցու եւ հաւատքի միութեան սկզբունքի նկատմամբ:

Բայց չէ՞ որ այս երկրորդական կէտերը վէճի եւ բաժանման տեղիք են տուել:

–Այո՛, սա պատմական իրականութիւն է, եւ շատ ցաւալի է, որ Քրիստոսի մի Եկեղեցու մէջ տեղի են ունեցել վէճեր ու բաժանումներ. բայց իրականութիւն է նաեւ, որ նոյն այդ վէճերն ու բաժանումներն են քրիստոնէութեան ծաւալման պատճառ դարձել, որովհետեւ յարանուանութիւնները բազմացել եւ տարածուել են աշխարհի բոլոր կողմերում: Սրանից զատ, յարանուն Եկեղեցիներն ազգային նկարագիր են ստացել, եւ այդ կերպով էլ Քրիստոսի մի Եկեղեցին պահպանուել եւ բարգաւաճել է աշխարհի տարբեր անկիւններում:

Հնարաւոր չէ՞ր, որ այս բոլոր Եկեղեցիները համաձայնէին երկրորդական եւ երրորդական կէտերում:

–Պատմական փորձառութիւնը ցոյց է տուել, որ եթէ ոչ անկարելի, ապա շատ դժուարին մի խնդիր է այդ: Իր զուտ կրօնական եւ հոգեւոր բարձր սկզբունքներով Եկեղեցու միութիւնը հազիւ տեւեց մինչեւ Ե դարի կէսը: Այնուհետեւ իւրաքանչիւր ազգի քաղաքական, հասարակական եւ այլ հանգամանքները, ինչպէս նաեւ եպիսկոպոսների եւ իշխանների ազգային եւ անձնական փառասիրութիւնը պատճառ դարձան Եկեղեցու միութեան պառակտման եւ վէճերի ու անհամաձայնութիւնների շարունակութեան:

Սրանց վրայ չպնդելու եւ յարանուն Եկեղեցիներում սէր ու միաբանութիւն հաստատելու համար սուրբ Օգոստինոսն (354–430) ասել է.

միութիւն՝ կարեւոր բաներում,

ազատութիւն՝ երկրորդականներում,

սէր՝ ամէն ինչում:

Ուրեմն, որո՞նք են այն կարեւոր կէտերը, որոնցով միութիւն է

հաստատւում յարանուն Եկեղեցիների միջեւ:

–Այն բոլոր կէտերը, որ բանաձեւուած են Հաւատամքում: Այս կէտերից ոմանց մասին տրուած դաւանաբանական ուրոյն բացատրութիւնները, ինչպէս նաեւ ծէսերի եւ վարչական կամ նուիրապետական դրութեան տարբերութիւններն են, որ Եկեղեցիների միջեւ բաժանութիւն են առաջացրել:

Սէրը, *որ լրումն է բոլոր օրէնքների, ցանկալի է, որ տիրի բոլոր յարանուն Եկեղեցիների միջեւ եւ ամէն օր զօրանայ Քրիստոսի Եկեղեցում, որպէսզի իրագործուի մի Հովուի եւ մի հօտի տեսիլքը [տե՛ս Յովհ. Ժ 16]:*

Ինչպիսի՞ն պէտք է լինի մեր դիրքը յարանուն Եկեղեցիների հանդէպ:

–Կատարեալ պէս յարգալից: Քրիստոնէական ոգուն բոլորովին հակառակ է այս կամ այն Եկեղեցին արհամարհելը՝ այնպէս կարծելով, թէ միայն իրենց Եկեղեցին է ճշմարիտը: Ցարանուն Եկեղեցիների անդամները հաւատացեալի իրենց կեանքով պիտի ցոյց տան, թէ իրենց Եկեղեցիներն ինչ յաջողութեամբ են դաստիարակել իրենց ժողովրդին Յիսուս Քրիստոսի Աւետարանի ոգով եւ առաքելական շնչով: Այսուհանդերձ, իւրաքանչիւր մարդ, յարգելով հանդերձ ուրիշ Եկեղեցիները, պարտաւոր է ամէն գնով հաւատարիմ մնալ իր ազգային Եկեղեցուն: Եւ որպէս հաւատացեալ իր հաւատարմութիւնը պիտի ցոյց տայ իր կեանքով եւ աշխատի իր Եկեղեցու բարեկարգութեան ու պայծառութեան համար բոլոր միջոցներով եւ զոհողութիւններով, որչափ ներում են իր բարոյական եւ նիւթական կարողութիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Ի՞նչ է նշանակում Հայաստանեայց Եկեղեցի:

-Հայաստանեայց Եկեղեցի նշանակում է Հայաստանցիների Եկեղեցի, այսինքն՝ հայ ազգի կամ հայ ժողովրդի Եկեղեցի: Ահա թէ ինչու կոչւում է նաեւ Հայոց Եկեղեցի, Հայ Եկեղեցի:

Ի՞նչ է նշանակում մայրենի Եկեղեցի:

-Հայաստանեայց Եկեղեցին իր ժողովրդի հոգեւոր մայրն է, եւ ժողովուրդն էլ նրա հոգեւոր զաւակն է: Որովհետեւ Մկրտութեամբ ժողովուրդը հոգեւորապէս ծնւում է նրա ծոցից, նրանից ստանում իր հոգեւոր սնունդը եւ պաշտպանւում նրա հովանու տակ ընդդէմ իր հաւատքի եւ բարոյականի թշնամիների: Այս պատճառով ասւում է մայրենի Եկեղեցի:

Հայ ժողովուրդը որչա՞փ է սիրում իր մայրենի Եկեղեցին:

-Սկզբից ի վեր հայ ժողովուրդը ջերմօրէն սիրել է իր մայրենի Եկեղեցին՝ նրա համար զոհելով իր ամենաթանկ բաները եւ, եթէ հարկ է եղել, անգամ իր կեանքը:

Վարդանանց պատմիչը՝ Եղիշէն, պատմում է, որ ամբողջ ժողովուրդը՝ այր, թէ կին, աղաղակում եւ ասում էր պարսիկներին. «Պատրա՛ստ ենք հալածուելու, մեռնելու, ամէն տեսակ նեղութիւնների եւ չարչարանքների սուրբ Եկեղեցիների համար, որ աւանդեցին մեզ մեր նախահայրերը... Որովհետեւ մեզ հայր ճանաչում ենք սուրբ Աւետարանը եւ մայր՝ Առաքելական Կաթողիկէ Եկեղեցին. թող որեւէ չար անջրպետ մէջ ընկնելով չբաժանի՛ մեզ սրանից»: Եւ արդէն իսկ Վարդանանց պատերազմը մղուեց՝ պահպանելու համար սուրբ Աւետարանը եւ մայրենի Եկեղեցին:

Ո՞վ հիմնեց Հայաստանի Եկեղեցին:

-Ամենից առաջ՝ Թադէոս առաքեալը, Սանատրուկ թագաւորի ժամանակ: Սանատրուկը հակառակուեց Աւետարանի քարոզութեանը, սակայն նրա դուստր Սանդուխտը լուսաւորուեց Թադէոս առաքեալի

ձեռով: Սանատրուկը շատ ճիգեր գործադրեց, որ իր դուստրն ուրանայ քրիստոնէութիւնը, բայց՝ ապարդիւն, եւ իր զայրոյթը յագեցնելու համար սպանել տուեց թէ՛ Թադէոս առաքեալին եւ թէ՛ Սանդուխտ կոյսին: Թադէոսից յետոյ Հայաստանում քարոզեց Բարդուղիմէոս առաքեալը, բայց նա էլ պետութեան կողմից հալածանքների հանդիպեց եւ նահատակուեց: Այս պատճառով էլ քրիստոնէութիւնն ազատ, համարձակ եւ անարգել չկարողացաւ տարածուել Հայաստանում:

Բայց երբ շուրջ 300 թուականին սուրբ Գրիգոր Լուսաւորչի առաքելութեամբ ու ջանքերով եւ Տրդատ թագաւորի պաշտպանութեամբ քրիստոնէութիւնը Հայաստանի համար պաշտօնական կրօն հռչակուեց, Եկեղեցին արագ մեծացաւ, զարգացաւ եւ տարածուեց:

Ինչո՞ւ եկեղեցիները տարբեր անուանումներ ունեն, օրինակ՝ Սուրբ Փրկիչ, Սուրբ Խաչ, Սուրբ Նշան, Սուրբ Աստուածածին, Սուրբ Երրորդութիւն, Սուրբ Լուսաւորիչ, Սուրբ Գրիգոր, Սուրբ Յակոբ, Սուրբ Քառասունք, Սուրբ Թարգմանիչք եւ այլն:

-Շատ հին ժամանակներից ի վեր բարեպաշտական սովորութիւն է եղել՝ եկեղեցիները կոչել Աստուծոյ, հրեշտակների, սրբութիւնների եւ սուրբերի անուններով, որոնք սովորաբար յայտնութեամբ կամ հրաշքով են տրուել:

Ո՞րն է Եկեղեցու պաշտօնը:

-Եկեղեցու պաշտօնն է քրիստոնէական հաւատքով դաստիարակել ժողովրդին եւ այդ հաւատքն արտայայտել նրա կեանքում եւ կենցաղում: Այս նուիրական գործը կատարելու համար Եկեղեցին պահում է Սուրբ Գիրքը իբրեւ գանձարան ատուածային պատգամների եւ պատուիրանների, պահում է Եկեղեցու ուղղափառ հայրերի գրուածքները եւ նրանց հեղինակութեամբ առաջնորդում ժողովրդին: Եկեղեցին է, որ պահում է քրիստոնէական վաղեմի աւանդութիւնները, Եկեղեցին է, որ աստուածային պաշտամունքի պէս-պէս յօրինուածքով, ինչպէս նաեւ հոգեւոր խօսքի կենդանի քարոզութեամբ հաւատացեալների ուշադրութիւնը շարունակ ուղղում է դէպի կրօնի խորհուրդները եւ քրիստոնէական կեանքի իրողութիւնները: Եկեղեցին

է, որ հաւատացեալների կեանքի բոլոր հանգրուաններում իր պաշտօնեաների միջոցով նրանց հետ է՝ նրանց ուրախութեանն ուրախանալով, նրանց վշտերին վշտակից, ուսուցչի եւ առաջնորդողի իր նուիրական դերում. միշտ ժողովրդի հետ է, նրա համար է եւ նրանով է գործում:

ԱՂՕԹՔ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ի՞նչ է *աղօթքը*:

-Աղօթքը հաւատացեալների՝ Աստծուն ուղղած խօսքերն են:

Ինչպէ՞ս են Աստծուն ուղղւում այդ խօսքերը:

-Ցայտնի կամ ծածուկ, այսինքն՝ հաւատացեալներն աղօթում են հրապարակաւ կամ առանձին:

Ո՞րն է հրապարակային աղօթքը:

-Աղօթքը հրապարակային է, երբ հաւատացեալները հաւաքւում են եկեղեցում կամ որեւէ տեղ եւ աղօթում միասին: Աղօթքը ծածուկ է, երբ հաւատացեալներն աղօթում են առանձին՝ տանը, դաշտում, լեռան վրայ, ծովում եւ այլուր:

Ինչպիսի՞ն պէտք է լինի աղօթքի բովանդակութիւնը:

-Մեր Տէր Յիսուս Քրիստոս «Հայր մեր»-ով սովորեցրեց, թէ ինչպէս պէտք է աղօթել: «Հայր մեր»-ը կոչւում է Տէրունական աղօթք, այն է.

«Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն»:

Կարո՞ղ ես բացատրել այս աղօթքը:

-Այո՛: Քրիստոնեաները պէտք է հաւատան եւ դիտենան, որ Աստուած իրենց երկնաւոր Հայրն է, Ում անունը սուրբ է, Ում թագաւորութիւնը պէտք է տիրի մարդկանց մէջ, Ում կամքը պէտք է գործադրուի ամէն տեղ: Մեր անէնօրեայ հացը կամ անունդը նա է տալիս մեզ: Նա է ներում մեզ մեր յանցանքները, եւ մենք էլ իրար պիտի ներենք եւ պիտի խնդրենք Նրանից՝ հեռու պահել մեզ փորձութիւններից եւ փրկել չարից, որովհետեւ Նրանն է իշխանութիւնը,

կարողությունը եւ յաւիտենական փառքը:

Ո՞րն է հրապարակային աղօթքի ձեւը Հայաստանեայց Եկեղեցում:

-Ամէն օր, նշանակուած ժամին, հաւատացեալները հաւաքւում են եկեղեցում եւ հոգեւոր պաշտօնեաների առաջնորդութեամբ ժամերգութիւն կատարում, որի ժամանակ մատուցւում են աղօթքներ, երգւում շարականներ, ընթերցւում է Սուրբ Գիրքը եւ այլն:

Ուրիշ ի՞նչ արարողութիւններ են լինում եկեղեցում:

-Կատարւում են սրբազան խորհուրդներ, այսինքն՝ մատուցւում է Պատարագ, կատարւում է Մկրտութիւն եւ այլն՝ իրենց յատուկ ծիսակարգով:

Ի՞նչ է նշանակում արարողութիւն եւ ծէս:

-Արարողութիւն եւ ծէս գրեթէ միեւնոյն նշանակութիւնն ունեն, այսինքն՝ խորհրդաւոր մի բան անել՝ համաձայն որոշուած կանոնների եւ ձեւերի:

Ինչպիսի՞ գրքեր են գործածւում մեր Եկեղեցում՝ աստուածային պաշտամունք կատարելու համար:

-Մէկից աւելի գրքեր.

1. Ժամագիրք, որ բովանդակում է օրուայ ժամերգութիւնների կարգը:

2. Շարակնոց, որ բովանդակում է Հայ եկեղեցու հոգեւոր երգերն ըստ կանոնների:

3. Ճաշոց գիրք, քանի որ մեր եկեղեցում Սուրբ Գրքի ընթերցումը կատարւում է ճաշի ժամին, այսինքն՝ կէսօրին մօտ, այդ պատճառով այդ գիրքը Ճաշոց է կոչւում, որ բովանդակում է Հին եւ Նոր Կտակարաններից ընտրուած ընթերցումները ամբողջ տարուայ իւրաքանչիւր օրուայ համար:

4. Տօնացոյց, որ ցոյց է տալիս տօն օրերի շարքը մեր եկեղեցում եւ աստուածային պաշտամունքի ամէնօրեայ կարգը, այսինքն՝ օրուայ ընթերցուածները, շարականները, աղօթքները եւ այլն: Հայաստանեայց եկեղեցում Տօնացոյցն աստուածային պաշտամունքի ընդհանուր ուղեցոյցը կամ յայտագիրն է:

5. Մաշտոց, որ բովանդակում է խորհուրդների եւ այլ սրբազան արարողութիւնների կատարման կարգաւորութիւնը եւ արարողական ու ծիսական խրատները: Այս է պատճառը, որ Մաշտոցը կոչուել է նաեւ Միսարան:

6. Պատարագամատոյց կամ Խորհրդատետր՝ սուրբ Պատարագի խորհուրդի գիրքը, որ Պատարագի ժամին դրւում է սուրբ Սեղանի վրայ:

7. Տաղարան, որ բովանդակում է բազմաթիւ տաղեր կամ երգեր, ինչպէս նաեւ սուրբ Պատարագի երգեցողութեան մասը:

Ինչի՞ համար են պատրաստուել այս գրքերը:

-Որպէսզի Հայաստանեայց Եկեղեցու աստուածային պաշտամունքն ամէնուր միանման ծիսակարգով կատարուի:

Ո՞րն է հաւատացեալների պարտքը հրապարակային աղօթքի մէջ:

-Հաւատացեալները պէտք է որոշուած ժամին ներկայ գտնուեն եկեղեցում, ջերմեռանդութեամբ մասնակցեն ժամերգութեանը եւ ամփոփ մտքով աղօթեն, պաշտամունքը խանգարող որեւէ բան չանեն (իրար հետ չխօսեն, հազի եւ այլ արտառոց ձայներ չհանեն, չերթեւեկեն այս ու այն կողմ, պաշտամունքը կիսատ չթողնեն՝ դուրս գալու համար եւ այլն):

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Ի՞նչ է նշանակում *հրեշտակ*:

– Մեր լեզուում հրեշտակ նշանակում է պատգամաբեր, դեսպան: Իսկ Առաքելական Թղթում ասւում է. «Չէ՞ որ նրանք սպասաւոր հոգիներ են եւ ուղարկւում են նրանց համար, ովքեր ժառանգելու են փրկութիւնը» [Եբր. Ա 14]: Ուրեմն, հրեշտակներն էլ հոգիներ են:

Որտեղի՞ց գիտենք, որ հրեշտակներ կան:

–Սուրբ Գրքից: Ողջ մարդկութիւնը հաւատում է անտեսանելի ոգիների գոյութեանը: Տիեզերքը լի է գաղտնիքներով, եւ հոգեւոր աշխարհը խորհրդաւոր եւ զարմանալի յօրինուածք ունի: Ուստի, մենք չենք կարող տեսնել նրանց, բայց, ինչպէս կարդում ենք Սուրբ Գրքում, նրանք տարբեր կերպարանքներով երեւում են մարդկանց:

Աւետարանի պատմութեան ո՞ր մասերում են յիշւում հրեշտակները:

–Յովհաննէս Մկրտչի ծննդեան պատմութեան սկիզբում [տե՛ս Ղուկ. Ա 13–19]: Երբ սուրբ Կոյս Մարիամը հրեշտակից ընդունեց Փրկչի Մայր լինելու աւետիսը [տե՛ս Ղուկ. Ա 26–38]: Յիսուս Քրիստոսի Յարութեան պատմութեան մէջ [տե՛ս Մատթ. ԻԸ, Ղուկ. ԻԴ, Յովհ. Ի]:

Եթէ հրեշտակները հոգի են, ինչո՞ւ են թեւաւոր մարդու կերպարանքով պատկերւում:

–Ինչպէս որ Աստուած յայտնւում է մարդու կերպարանքով, հրեշտակներն էլ նկարագրւում են թեւաւոր մարդու կերպարանքով՝ իբրեւ խորհրդանշան իրենց արագահաս սպասաւորութեան:

Մարդիկ ժամանակի խորհրդանշանը պատկերում էին օղակի կամ թեւաւոր անուի ձեւով, բայց ժամանակը նիւթական բան չէ, հետեւաբար ո՛չ անիւ ունի, ո՛չ թեւ: Սրանք որեւէ գաղափար, որեւէ հոգեւոր կամ իմացական ընդունում չշոշափելի եւ հասկանալի դարձնելու համար ստեղծուած կերպեր եւ միջոցներ են:

Ի՞նչ ասաց Յիսուս Քրիստոս հրեշտակների մասին:

–«Զգո՛յշ եղէք, այս փոքրիկներից մէկին չարհամարհէ՛ք, որովհետեւ նրանց հրեշտակները երկնքում միշտ տեսնում են Հօրս երեսը, որ երկնքում է» [Մատթ. ԺԸ 10]: «Պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակներին, որոնք ելնում եւ իջնում են մարդու Որդու վրայ» [Յովհ. Ա 51]:

Հրեշտակներն անուն եւ թիւ ունե՞ն:

–Ոմանց անունները յիշուած են Սուրբ Գրքում, օրինակ՝ Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ, Անայէլ, Ուրիէլ, Դակուէլ, Բարաքիէլ, Ադոնիէլ, Փանուէլ, իսկ նրանց թիւը հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց է ասւում, այսինքն՝ անթիւ, անհամար:

Քանի՞ դասի են բաժանւում հրեշտակները:

–Սուրբ հայրերի գրքերում բաժանուած են երեք դասի, իսկ իւրաքանչիւր դաս երեք աստիճան ունի.

Ա դաս՝ Աթոռք, Քերովբէք, Սերովբէք.

Բ դաս՝ Տէրութիւնք, Զօրութիւնք, Իշխանութիւնք.

Գ դաս՝ Պետութիւնք, Հրեշտակապետք, Հրեշտակք.

Նոր Կտակարանում կա՞ն ակնարկութիւններ այս դասակարգման մասին:

–Պօղոս առաքեալն ասում է. «Աստուած մեռելներից յարութիւն տուեց Քրիստոսին, նստեցրեց Իր աջ կողմում, երկնքի մէջ՝ ամէն իշխանութեան, պետութեան, զօրութեան, տէրութեան եւ ամէն անուան վրայ» [Եփես. Ա 21]:

Կարո՞ղ ես հրեշտակների մասին որեւէ բան յիշել հայոց պատմութիւնից:

–Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն Արտաշատի Խոր Վիրապում նետուած մնաց 15 տարի, եւ կարծում էին, թէ մեռած է, սակայն Տրդատ թագաւորի քոյրը՝ Խոսրովիդուխտը, երազում հրեշտակից հաւաստիացաւ, թէ սուրբ Գրիգորը ողջ է, եւ նա հանուեց Խոր Վիրապից:

Դարձեալ, համաձայն մի գեղեցիկ աւանդութեան՝ իր բանտարգելութեան երկար տարիներին Լուսաւորչին ամէն օր այցելում էր իր պահապան հրեշտակը: Համբարձման չորրորդ օրը հրեշտակը չի

այցելում բանտարկեալին, եւ միւս օրը, երբ հարցնում է նրա չգալու պատճառը, հրեշտակն այս բացատրութիւնն է տալիս. «Երբ մեր Տէրը համբարձուեց երկինք, մի օր մնաց հրեշտակների ինը դասի մէջ եւ ուրախացրեց նրանց: Իւրաքանչիւր դաս ամէն տարի տօնում է իրեն արուած այցելութեան տարեդարձը. արդ, կիրակի օրը մեր դասի տարեդարձի օրն էր, որովհետեւ մեզ այցելել է Համբարձման չորրորդ օրը: Ուրախութեան տօն ունէինք, դրա համար չեկայ»: Այս աւանդութիւնը մեր եկեղեցում երգւում է «Մեծահրաշ այս խորհուրդ» շարականով Զատկի Է կիրակի օրը, որ կոչւում է նաեւ Երկրորդ ծաղկազարդ կամ Մեծահրաշի կիրակի, որ Համբարձման հինգշաբթիի չորրորդ օրն է:

Մեր եկեղեցու տօնակարգում հրեշտակներին տօնի օր է յատկացուել նաեւ Յաչվերացից յետոյ Ը շաբաթուայ շաբաթ օրը:

Ուրիշ ի՞նչ գիտենք հրեշտակների մասին:

–Առաքեալն ասում է. «Աստուած չինայեց յանցաւոր հրեշտակներին, այլ խաւարի կապանքով տարտարոս նետեց եւ պահել տուեց՝ դատելու համար» [Բ Պետր. Բ 4]: «Եւ այն հրեշտակները, որ չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ թողեցին իրենց բնակութիւնը, մշտնջենաւոր կապանքով պահեց նրանց խաւարի մէջ՝ մեծ Օրուայ դատաստանին» [Յուդա 6]:

Իսկ մեր Տէրն ասում է. «Անիծեալնե՛ր, հեռացէ՛ք Ինձանից, գնացէ՛ք յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար» [Մատթ. Իե 41]:

Ուրեմն, յանցաւոր հրեշտակնե՞ր էլ կան:

–Այո՛: Սուրբ հայրերի կարծիքով՝ հրեշտակների յանցանքն Աստուծոյ դէմ հպարտութիւնն է եղել, եւ նրանք պատժուել են դրա համար: Երբ առաքեալը խօսում է եպիսկոպոսի արժանիքների մասին, ասում է. «Նորահաւատ չլինի (թեկնածուն), որպէսզի հպարտանալով՝ չընկնի սատանայի դատապարտութեան մէջ» [Ա Տիմոթ. Գ 6]:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ա

Քրիստոսի Եկեղեցու միութեան մասին սովորեցինք Քրիստոնէականի մէջ: Բայց իւրաքանչիւր մարդ գիտի եւ տեսնում է, որ ամէն ազգ ու ժողովուրդ ունի իր սեփական կամ ազգային Եկեղեցին, որոնց լեզուն, ծէսը, նուիրապետական եղանակներն ու կարգերը մեծապէս տարբերւում են իրարից, եւ դրանից հետեւեցնում են, թէ կան քրիստոնէական տարբեր Եկեղեցիներ:

Այո՛, կան զանազան Եկեղեցիներ, որոնք, սակայն, իրենց սկզբունքով եւ էութեամբ մէկ են. տարբերութիւնները բուն քրիստոնէական հաւատքից չէ, որ ծագում են, այլ առաջ են գալիս նրա մեկնութիւնից ու ընկալումից: Սրան աւելացնենք միջավայրի, ազգային ինքնուիւեան, Եկեղեցու առաջնորդների, նաեւ երկրի իշխանների կամ տիրապետողների փառասիրութիւնը եւ շատ դիւրութեամբ կարող ենք ըմբռնել այն բարդ պատճառները, որոնք առաջ են բերել եւ դեռ բերում են այդ տարբերութիւնները քրիստոնէական մէկ Եկեղեցու ներսում: Այս բացատրութիւնները տալուց յետոյ Եկեղեցու տարբերութիւնները կարող ենք ձեւակերպել այսպէս. Աւետարանը կամ հաւատքը միացնում է քրիստոնէական Եկեղեցիները, բայց աստուածաբանութիւնը բաժանում է դրանք: Այսինքն՝ բովանդակ քրիստոնէութիւնը մէկ Քրիստոս, մէկ Աւետարան եւ մէկ քրիստոնէական Եկեղեցի ունի, բայց Քրիստոսի Անձի եւ Նրա Աւետարանի շուրջ արտայայտուած աստուածաբանական ըմբռնումներն ու մեկնութիւնները պատճառ են դառնում Եկեղեցիների՝ միմեանց նկատմամբ ունեցած տարբերութիւնների:

Բ

Քրիստոնէական Եկեղեցին այսօրուայ իր վիճակով բաժանւում է երկու որոշակի եւ շատ յայտնի խմբերի՝ Առաքելական Եկեղեցի եւ Բողոքական Եկեղեցի: Առաքելական Եկեղեցի ասելով՝ հասկանում ենք Քրիստոսի առաքեալների կողմից հիմնադրուած Եկեղեցիները, որոնք, պատմական բացատրութեամբ, կոչւում են Արեւելեան եւ Արեւմտեան Եկեղեցիներ: Բողոքական Եկեղեցի ասելով՝ հասկանում

ենք այն Եկեղեցիները, որոնք երեւան եկան ԺԶ դարում Լիւթերի շարժման հետեւանքով: Այս շարժման պատմական անունն է բարեկարգութիւն (Réformation), իսկ նրանից առաջ եկած Եկեղեցիների համախմբութիւնը կոչւում է բողոքականութիւն (Protestantisme), որովհետեւ Լիւթերի բարեկարգութիւնը բողոք էր Հռոմի Եկեղեցու դէմ: Առաքելական Եկեղեցին միանգամայն տարբերւում է Բողոքական Եկեղեցուց իր աստուածաբանութեամբ, պաշտամունքի ձեւերով եւ վարչութեամբ:

Գ

Մենք խօսելու ենք միայն Առաքելական Եկեղեցիների զանազանութեան կամ տարբերութիւնների մասին, որովհետեւ Հայաստանեայց Եկեղեցին այդ խմբաւորման մէջ է:

Իսկ Առաքելական Եկեղեցիների մէջ Հայաստանի Եկեղեցին թէ՛ պատմականօրէն եւ թէ՛ միջավայրի կամ՝ աշխարհագրական դիրքի հետեւանքով յարաբերութեան մէջ էր Յոյն, Ասորի եւ Լատին Եկեղեցիների հետ, վերջինիս հետ՝ մանաւանդ միջին դարերում, խաչակիրների արշաւանքների ժամանակ, Կիլիկեան Հայկական Թագաւորութեան շրջանում:

Արդ, Հայոց Եկեղեցու առաջին տարբերութիւնը Յոյն եւ Լատին Եկեղեցիներից ծագում է աստուածաբանական շատ նուրբ խնդրի բացատրութիւնից: Այդ խնդիրն էր Յիսուս Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւնների միաւորման բացատրութիւնը կամ, ինչպէս հիմա է ասւում, քրիստոսաբանական հարցը:

Քրիստոնեայ բոլոր Եկեղեցիները հաւատում են, որ Յիսուս Քրիստոս, ինչպէս տեսանք Հաւատամքի մէջ, ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ Մարդ է միաժամանակ: Ուրեմն, ինչպէ՞ս են իրար միացած Աստուծոյ բնութիւնը եւ մարդու բնութիւնը: Ահա՛ մի խնդիր, որի բացատրութեան մէջ աստուածաբաններն իրար հետ չեն համաձայնում:

Մինչեւ 451 թուականն այսպիսի խնդիր պաշտօնապէս չկար: Մինչ այս, Դ դարում, Արիոսը ժխտում էր Քրիստոսի Աստուածութիւնը կամ Հօր հետ հաւասարութիւնը: Բայց Նիկիոյ Տիեզերաժողովը (325 թ.) քննեց այս խնդիրը, հերքեց Արիոսի հերետիկոսութիւնը, եւ հոչա-

կուեց, որ Որդին Հօր պէս Աստուած է:

Նման խնդիր, որ Սուրբ Հոգու վերաբերեալ, յուզում էր Մակեդոնին, որի պատասխանը տուեց Կ. Գոլսի Տիեզերական ժողովը (381 թ.) եւ հաստատեց, որ Սուրբ Հոգին Հօր եւ Որդու պէս Աստուած է՝ դատապարտելով Մակեդոնի հերետիկոսութիւնը:

Նեստորն ընդունում էր, թէ Յիսուս Քրիստոս մեզ նման մարդ էր, բայց Աստուածութիւնը բնակուեց Նրա մէջ: Նեստորի հերետիկոսութիւնն էլ քննուեց Եփեսոսի Տիեզերաժողովում (431 թ.) եւ հերքուեց, իսկ Նեստորը դատապարտուեց Արիոսի եւ Մակեդոնի պէս:

Ինչպէս տեսնում ենք, Նիկիոյ, Կ. Գոլսի եւ Եփեսոսի Տիեզերական երեք ժողովներում Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Հոգու վերաբերեալ աստուածաբանական խնդիրները լուծուել, քանաձեւուել եւ ընդունուել են այդ դարերում գոյութիւն ունեցող եկեղեցիների կողմից որպէս ուղղափառ դաւանանք:

Բայց կար Եւտիքէս անունով մի յոյն վանական, որ Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնն ապացուցելու համար Նեստորի դէմ մեծապէս մարտնչելուց յետոյ ընկաւ ծայրայեղութեան մէջ. այսպէս՝ Նեստորն ասում էր, թէ Յիսուս Քրիստոս մարդ էր, եւ Աստուածութիւնը եկաւ բնակուեց Նրա մէջ. Եւտիքէսն այնքան առաջ գնաց իր բացատրութիւնների մէջ, որ ասում էր, թէ Յիսուս Քրիստոս միայն Աստուած է՝ իր մարդկային կերպարանքի տակ: Եւտիքէսի քրիստոսաբանութեամբ՝ Յիսուս Քրիստոս միայն մէկ՝ աստուածային բնութիւն ունի, ինչը հակառակ էր ուղղափառ վարդապետութեան: Եւտիքէսի մոլորութիւնը եկեղեցական պատմութեան մէջ ծանօթ է եւտիքէսականութիւն (Eutychianisme) անունով:

Եւտիքէսի մոլորութիւնը քննելու համար 451 թ. տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը, որտեղ Եւտիքէսը դատապարտուեց, հաստատուեց Յիսուս Քրիստոսի երկու բնութիւնների վարդապետութիւնը: Իսկ Հռոմի Լեւոն Ա պապը, որ իր ներկայացուցիչների միջոցով նախագահել էր Քաղկեդոնի ժողովին, ժողովականներին էր յղել Յիսուս Քրիստոսի մէջ աստուածային եւ մարդկային բնութիւնների միացումը բացատրող եւ ջատագովող իր նշանաւոր կոնդակը, որ եկեղեցական պատմութեան մէջ ծանօթ է Լեւոնի Տումար անունով: Քաղկեդոնի ժողովը եւ Լեւոնի Տումարն ընդունողները կոչուեցին երկաբնակ

(երկու բնութիւն ընդունող), իսկ չընդունողները՝ միաբնակ (մի բնութիւն ընդունող)՝ այս անուններով փոխադարձաբար մեղադրելով իրար:

Հայաստանեայց Եկեղեցին մերժեց թէ՛ Քաղկեդոնի ժողովը եւ թէ՛ Լեւոնի Տումարը, որովհետեւ մարդեղութիւնից յետոյ երկու բնութիւն բացատրութիւնը վտանգաւոր էր նկատում իբրեւ մէկ քայլ դէպի նեստորականութիւն, մինչդեռ Հայաստանեայց Եկեղեցին հաւատարիմ էր մնացել ս. Կիւրեղ Աղեքսանդրացու բանաձեւին՝ մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որի համաձայն՝ աստուածային եւ մարդկային երկու բնութիւններն անշփոթ, անբաժան եւ անփոփոխ կերպով միաւորուում են Յիսուս Քրիստոսի մէջ. եւ Հայաստանեայց Եկեղեցին, հաւատարիմ կիւրեղեան քրիստոսաբանութեան, ընդունել է միաւորեալ մի բնութիւն բացատրութիւնը (տե՛ս «Ազգապատում», էջ 490–515):

Հայաստանեայց Եկեղեցու հակառակորդները դարեր շարունակ ասել են, թէ հայերը եւտիքէսական են կամ միաբնակ՝ եւտիքէսական իմաստով: Սակայն Հայաստանեայց Եկեղեցին նզովում է Եւտիքէսին՝ նրա վարդապետութեան մէջ լուրջ վտանգ տեսնելով փրկութեան խոկութեան դէմ:

Գալով միաբնակ բացատրութեանը՝ այն ուղղափառ է կիւրեղեան իմաստով, որովհետեւ, ըստ ս. Կիւրեղի քրիստոսաբանութեան, երկու բնութիւններ անշփոթ միաւորուում են Յիսուս Քրիստոսի մէջ, այսինքն՝ երկու բնութիւնները զատ-զատ չէ, որ գոյութիւն ունեն Քրիստոսի մէջ, այլ միաւորուած են մի բնութեան մէջ անշփոթ, անբաժան եւ անփոփոխ կերպով, որ միանգամայն տարբեր է Եւտիքէսի բացատրութիւնից, ըստ որի՝ երկու բնութիւնները չեն միանում, ընդհակառակը՝ մարդկային բնութիւնը ձուլւում է աստուածայինին եւ ոչնչանում նրա մէջ, եւ մնում է միայն աստուածային բնութիւնը:

Քրիստոսաբանական խնդիրն այնպիսի խորը էր դրել Եկեղեցիների միջեւ, որ բոլորի վրայ էլ շատ թանկ նստեց՝ տեղի տալով ծայրայեղ ատելութիւնների, թշնամանքի եւ այնպիսի իրողութիւնների, որոնք հակառակ են քրիստոնէութեան ոգուն, Փրկչի սիրուն եւ ազատամիտ ու բարեսիրտ սուրբ հայրերի բաղձանքներին: Դժբախտաբար, ոգեւորութիւնն ու կամաւոր կուրութիւնը մեծ դեր են խաղացել այս հարցերում:

Այսօր նկատելի է քրիստոնեական փոխըմբռնման որոշակի աշխուժութիւն մի բնութիւն դաւանող Արեւելեան Ուղղափառ եկեղեցիների եւ քաղկեդոնական եկեղեցիների միջեւ, եւ փոխադարձ անհիմն մեղադրանքների ծաւալը զգալիօրէն նուազել է:

Այսպիսին է նաեւ Սուրբ Հոգու՝ ի Հօրէ եւ յՈրդւոյ բխման աստուածաբանական բացատրութիւնների տարբերութեան խնդիրը: Մեր եկեղեցին ասում է՝ «բխումն ի Հօրէ», Լատին եկեղեցին պնդում է՝ ո՛չ. «բխումն ի Հօրէ եւ յՈրդւոյ»:

Դ

Պէտք է էջեր գրել՝ մեր եւ միւս եկեղեցիների բոլոր տարբերութիւնները ցոյց տալու համար: Երկու բնութիւնների վրայ փոքր-ինչ կանգ առնելով՝ կամեցանք ցոյց տալ, թէ աստուածաբանութիւնն ինչ դէր է խաղացել եկեղեցիների միջեւ տարբերութիւնների հարցում: Երբ կրօնական եւ աստուածաբանական հարցերով հետաքրքրւում եւ զբաղւում էին նոյնիսկ կայսրերը, թագաւորներն ու իշխանները, դրանք ծանրակշիռ հանգամանք էին ստանում. պատրիարքները դահազուրկ էին լինում, եկեղեցականներն աքսորւում էին, Աստուծոյ տունը, փոխանակ աստուածային սիրոյ հնոց լինելու, վերածւում էր բանադրանքների դարբնոցի:

Երկիւղած եւ բարեպաշտ հոգիները շփոթւում են՝ տեսնելով ցանկերն այն մոլորութիւնների, որոնցով եկեղեցիները մեղադրում եւ ամբաստանում էին իրար: ԺԱ դարում Յոյն եկեղեցին 35 ամբաստանութիւն ունէր Լատին եկեղեցու դէմ, ԺԴ դարում այդ ամբաստանութիւնների թիւը հասաւ 150-ի:

Հայաստանեայց եկեղեցու պատմութեան մէջ այս ամօթալի իրողութիւններից մի քանիսն են միայն արձանագրուել: Ամենից առաջ յիշենք Յովհաննէս Դամասկացուն (700-754) վերագրուող «Պատասխանիք առ Հայս» անվաւեր գրուածքը, որ հրատարակուած է «Լոյս» եկեղեցագիտական շաբաթաթերթում (1905 թ., էջ 1066-1112 եւ 1906 թ., էջ 45-ից սկսած ընդհատաբար, մինչեւ էջ 1196): Այս գործում շատ կան անհիմն վերագրումներ եւ թիւրիմացութիւններ:

Արժէ կարդալ Մխիթար Սկեւռացի քահանայի երկն առաքեալների համապատասխանութեան մասին: Այդ գրուածքի առաջին մասում

տեսնում ենք պապական պատուիրակի անհուն ամբարտաւանութիւնը եւ յոխորտանքները Հայոց պատուական եւ ծերունազարդ հայրապետի՝ կոնստանդին Ա Բարձրաբերդցու (1221-1267) հասցէին, նրա նուիրակ Մխիթար քահանայի եւ պատուիրակութեան առջեւ: Բայց Մխիթարն Աւետարանից քաղուած ապացոյցներով հրաշալի կերպով լռեցրել է պապի պատուիրակին (հմմտ. «Ազգապատում», էջ 1659-1660):

Մխիթար Գոշերցի կաթողիկոսի ժամանակ (1341-1355), Սիսի ժողովում, բերւում է լատինների եւ լատինացած հայերի կողմից 117 ամբաստանութիւնների մի շարք, որոնցով Հայ եկեղեցին տարբերւում է Լատին եկեղեցուց: Պէտք է ասել, որ նոյնիսկ օտարները ծիծաղելի եւ անկարեւոր են հռչակել այդ 117 կէտերի մեծամասնութիւնը: Այս ամբաստանութիւնների հայերէնը չունենք, իսկ լատիներէնի մասին ամփոփ տեղեկութիւն է տալիս Օրմանեանն իր «Ազգապատում»-ի մէջ (էջ 1859-1904):

Գրիգոր Տաթեւացին ունի համեմատական ցանկերն այն կէտերի, որոնցով Հայ, Յոյն, Ասորի եւ Լատին եկեղեցիները նմանւում կամ տարբերւում են (տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 550-554):

Հետաքրքրուողներն անշուշտ կգոհանան՝ դիմելով վերոյիշեալ աղբիւրներին, իսկ մենք ցոյց կտանք այն գլխաւոր տարբերութիւնները միայն, որոնք կան Հայ, Յոյն եւ մանաւանդ Լատին եկեղեցիների միջեւ:

Ե

1. Հայոց եկեղեցին ընդունում է միայն երեք Տիեզերական ժողովներ՝ (Նիկիոյ (325 թ.), կ. Պոլսի (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.). Յոյն եկեղեցին ընդունում է եօթ ժողովներ՝ առաջին երեքին աւելացրած Քաղկեդոնի (451 թ.), կ. Պոլսի Բ (553 թ.), կ. Պոլսի Գ (680 թ.), Նիկիայի Բ (787 թ.) ժողովները. իսկ Լատին եկեղեցին ընդունում է 21 Տիեզերական ժողովներ՝ Նիկիոյ առաջին ժողովից մինչեւ 1870 թ. Վատիկանի ժողովը, որտեղ հռչակուեց Պապի անսխալականութիւնը:

2. Լատին կամ Հռոմի եկեղեցին դաւանում է, թէ ինքն է քրիստոնէութեան կենտրոնը, որովհետեւ ասում է, որ Քրիստոսի յաջորդը Պետրոս առաքեալն է, իսկ նրա յաջորդը՝ Հռոմի քահանայապետը: Այս սկզբունքով՝ Լատին եկեղեցին հերձուած կամ բաժանուած է

համարում այն եկեղեցիները, որոնք չեն ընդունում Պետրոս առաքելին վերագրուած այս նախապատուութիւնը: Հռոմի Եկեղեցու յաւակնութիւնը հակառակ է ե՛ւ Աւետարանին, ե՛ւ եկեղեցական պատմութեանը:

3. Քահանայութիւնից մինչեւ կաթողիկոսութիւն՝ Հայաստանեայց Եկեղեցին ընծայեալներին ոչ միայն ձեռնադրում է, այլեւ օծում: Յոյն Եկեղեցին միայն ձեռնադրում է: Մինչին դարերից սկսած՝ Լատին Եկեղեցին եւս օծում է քահանաներին ու եպիսկոպոսներին:

4. Հայոց Եկեղեցում Պատարագը մատուցւում է միայն մէկ խորանի վրայ մէկ քահանայի կողմից, մինչդեռ Լատին Եկեղեցում որքան խորան կայ, այնքան քահանաներ միաժամանակ կարող են Պատարագ մատուցել: Լատին Եկեղեցում ձայնաւոր եւ թիւ՝ առանց երգեցողութեան Պատարագներ կան. Հայ Եկեղեցում Պատարագը ձայնաւոր է:

5. Հայ Եկեղեցին սուրբ Պատարագի համար օգտագործում է բաղարջ (անթթխմոր) հաց եւ անապակ գինի: Լատին Եկեղեցին էլ բաղարջ հացով է պատարագում, բայց բաժակի մէջ խառնում է մի քանի կաթիլ ջուր: Իսկ Յոյն Եկեղեցին թէ՛ խմորով հաց է գործածում եւ թէ՛ բաժակի մէջ ջուր խառնում:

6. Լատին Եկեղեցին հաւատացեալներին հաղորդում է միայն սուրբ Պատարագի հացով, իսկ Հայ Եկեղեցին՝ թէ՛ հացով եւ թէ՛ գինով:

7. Հայ Եկեղեցին մի քանի հաստատուն տօներից բացի, որոնք տօնում է ամսաթուով, իր տօները բաժանել է եօթնեակների վրայ, իսկ Լատին եւ Յոյն Եկեղեցիները Յայտնութեան կամ ամսաթուի համաձայն են տօնում:

8. Հայ Եկեղեցին Փրկչի Մանդեան եւ Մկրտութեան տօնը հաստատուն կերպով տօնում է յունուարի 6-ին՝ համաձայն քրիստոնէական Եկեղեցու վաղեմի աւանդութեան, Լատին Եկեղեցին Մանդը տօնում է դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտութիւնը՝ յունուարի 6-ին. Յոյն Եկեղեցին Մանդը տօնում է յունուարի 7-ին, իսկ Մկրտութիւնը՝ յունուարի 19-ին:

9. Արեւմուտքում Լատին Եկեղեցին ամուսնացած եկեղեցականութիւն չի ընդունում, բայց Հայ եւ Յոյն Եկեղեցիները վաղուց ի վեր ընդունել են քահանաների ամուսնութիւնը:

10. Լատին Եկեղեցում հոգեւոր պաշտօնները եւ պաշտօնեաները նշանակւում են վերեւից, եւ ժողովուրդը ձայն չունի իր առաջնորդների եւ քահանաների ընտրութեան գործում: Հայ Եկեղեցում ժողովրդի ձայնն անհրաժեշտ է:

11. Հայ Եկեղեցում եպիսկոպոսները ձեռնադրւում են ուղղակի կաթողիկոսի կողմից: Լատին Եկեղեցում պապի հրամանով ձեռնադրում են երեք եպիսկոպոսներ, իսկ Յոյն Եկեղեցում պատրիարքներն են եպիսկոպոս ձեռնադրում:

12. Հայ Եկեղեցում Մկրտութիւնը ընկղմամբ է կատարւում, իսկ Մկրտութիւնից անմիջապէս յետոյ մկրտող քահանայի կողմից կատարւում է Դրոշմի խորհուրդը: Լատին Եկեղեցում Մկրտութիւնը քահանան կատարում է սրսկումով, իսկ Դրոշմի խորհուրդը կատարում է եպիսկոպոսը փոքրիկի բաւականաչափ մեծանալուց յետոյ:

13. Լատին Եկեղեցու նուիրապետութեան մէջ կարդինալութիւն կայ՝ մի տիտղոս կամ աստիճան, որ տրւում է ոչ միայն եպիսկոպոսներին, այլ նաեւ սարկաւագներին եւ քահանաներին: Կարդինալներն էլ ընտրում են պապին: Հայ եւ Յոյն Եկեղեցիները չունեն կարդինալութիւն:

14. Հայերը եւ լատինները միանման են խաչակնքում, իսկ յոյներն աջից ձախ են տանում ձեռքը:

Միսական եւ այլ սովորութիւններում կարեւոր եւ երկրորդական հազար ու մի մանրամասնութիւններ կան. բոլորն էլ յարգւում են իրենց գոյութեան իրաւունքով:

***

Եկեղեցիների տարբերութեան մէջ մի երեւոյթ էլ կայ, որն ազգագրական է:

Մէսի տեսակէտից Արեւելքի Եկեղեցիները խմբաւորւում են հետեւեալ կերպ.

1. Յունական կամ Բիւզանդական,
2. Հայկական,
3. Ասորական,
4. Քաղդէական,

5. Մարոնիթ,

6. Ղպտի:

Սրանց մէջ կան Եկեղեցիներ, որ պահել են իրենց անկախութիւնը, կան, որ կախում ունեն Հռոմից, այսինքն՝ պահելով հանդերձ իրենց ազգային նկարագիրը՝ լատինադաւան են, եւ պապական նուիրակները հակում են նրանց: Այս Եկեղեցիների մէջ կան բողոքականութեան յարողներ, որոնք խզել են իրենց դաւանաբանական եւ եկեղեցական յարաբերութիւնն իրենց մայրենի Եկեղեցիների հետ:

Այս բոլոր Եկեղեցիների ազգագրական նկարագիրն արտայայտւում է նրանց լեզուներով: Հայ Եկեղեցու ծիսական լեզուն հայերէն է (գրաբարը): Քարոզի, ծանուցման եւ այլ գործառնութիւնների լեզուն արդի հայերէն է (աշխարհաբարը), բացի այն շրջանակներից, ուր հայ ժողովուրդը մոռացել է իր լեզուն եւ խօսում է Թուրքերէն, արաբերէն, քրդերէն, վրացերէն կամ այլ լեզուով: Այդպիսի շրջանակներում քարոզները եւ ծանուցումները, ինչպէս նաեւ ընթերցուածները կատարւում են տեղական լեզուներով:

Ցունական երկրներում Եկեղեցու լեզուն յունարէն է, բայց յունադաւան այլ ազգերը գործածում են իրենց մայրենի լեզուները. օրինակ՝ ռուսները, սերբերը եւ բուլղարները գործածում են սլաւոներէնը (իրենց դաւառաբարբառներով), ռումինները՝ ռումիներէնը, իսկ վրացիները՝ վրացերէնը:

Եգիպտոսի եւ Սիրիայի մէլքիդների (յոյն-արաբ) Եկեղեցիների լեզուն արաբերէնն է, իսկ ասորիներինն ու քաղդէացիներինը (Միջագետք, Քրդստան, Մալաբար (Հնդկաստան)՝ ասորերէնը: Ասորերէն է նաեւ Մարոնիթ Եկեղեցու լեզուն: Ղպտի Եկեղեցու լեզուն Եգիպտոսում ղպտերէնն է, թէեւ իրենք արաբախօս են, բայց Եթովպիայում ղէզերէնն է:

Արեւմուտքում, սկսած Իտալիայից, Եւրոպայի Հռոմէական բոլոր Եկեղեցիների ծիսական լեզուն լատիներէնն է, բայց քարոզի լեզուն իւրաքանչիւր երկրի ժողովրդի լեզուն է, որն այժմ հետզհետէ դառնում է նաեւ ծիսական լեզու:

Անգլիայի Եկեղեցին, որ մեծ մասամբ լատինական է, Հռոմի Եկեղեցուց տարբերւում է հետեւեալ գլխաւոր կէտերում.

1. Անկախ է Հռոմից, հետեւաբար չի ընդունում պապի գերիշխանութիւնը:

2. Բոլոր եկեղեցականներն ամուսնացած են եւ նոյնիսկ տարկապ եւ քահանայ ձեռնադրուելուց յետոյ ամուսնանում են:

3. Անգլիական Եկեղեցու ծիսական լեզուն անգլերէնն է: Այն իր դաւանաբանութեամբ եւ ծէսով Առաքելական Եկեղեցու խմբաւորմանն է պատկանում, սակայն Ամերիկայում Բողոքական է կոչւում:

Զ

Այս բոլոր տարբերութիւնները, որոնց հետեւանքով քրիստոնէական աշխարհում երեւան են եկել յարանուն Եկեղեցիներ, չեն կարող վերացուել, որովհետեւ, ինչպէս տեսանք, այդ տարբերութիւններն առաջ բերող պատճառների մէջ պատասխանատուն միայն ատաւածաբանութիւնը չէ:

Աշխարհագրական պայմանները, ժողովուրդների ազգային նկարագիրը, որ միշտ անկախութեան է ձգտում, զօրեղ պատճառներ են, որ արդարացնում են յարանուն Եկեղեցիների գոյութիւնը: Այս զանազանութիւնն ինքնըստինքեան հիանալի է, եթէ չարաշաւորուի մենաստրական եւ մրցակցական ոգեղութեամբ, եթէ որանց փոխարէն, ինչպէս սուրբ Օգոստինոսն է ասում, քրիստոնէական Եկեղեցիներում տիրի Քրիստոսի սէրը, Եկեղեցիները կարողանան հզօր միութիւն ստեղծել, եւ բոլորը լծուեն՝ իրագործելու համար միայն մէկ նպատակ՝ իրենց սուրբ հաւատքի եւ մայրենի Եկեղեցու պահպանութիւնն ու պաշտպանութիւնը ընդդէմ կրօնի թշնամիների, որոնք ներսից ու դրսից բանակներ կազմած, ջանում են խախտել ու ապականել բարի ժողովրդի հաւատքը եւ կոտրել Եկեղեցու հեղինակութիւնը:

Նկատի ունենալով պատմութեան դասերը, խղճի ազատութիւնը, Եկեղեցիների զանազանութեան մէջ արտայայտուող առաւելութիւնը, համագործակցութեան անհրաժեշտութիւնը Եկեղեցիների միջեւ եւ քրիստոնէական կրօնի ամենանանվիճելի եւ ամենակարեւոր մի պատգամը՝ սիրեցէ՛ք իրար՝ մենք փափագում ենք, որ մեր մայրենի Եկեղեցու զաւակները դաստիարակուեն Աստուծոյ թագաւորութեան անեղ ու անսահման մեծավայելչութեան մէջ, կրօնի մաքուր ու կենսատու տեսիլներով, որպէսզի Յիսուս Քրիստոս, Աւետարանը, հաւատքը, կրօնը սոսկ խօսքեր չլինեն, այլ ընդհակառակը՝ վերածուեն

կեանքի, գործնականացուն՝ ապահովելով մարդկային երջանկութիւնը:

Սրա համար մեր մայրենի Եկեղեցու զաւակները պէտք է փոքր հասակից լաւ սովորեն Աւետարանը, լաւ սերտեն Քրիստոնէականը, լաւ հմտանան իրենց մայրենի Եկեղեցու պատմութեան, աւանդութիւնների ուսումնասիրութեան մէջ, պէտք է սովորեն նաեւ Աւետարանի ամենաբարձր դասը, որ է՝ սիրել իրար, պէտք է յարգեն յարանուն Եկեղեցիները եւ ուրախանան՝ տեսնելով, որ նրանք կրօնը վերածում են կեանքի:

Որքա՜ն ոգեշնչող իրողութիւն է տեսնել, թէ ինչպէս է Քրիստոսի Եկեղեցին բոլոր ազգերի լեզուներով եւ ազգային նկարագրերով իրագործում քրիստոնէական սուրբ կրօնի գաղափարները այս աշխարհում, Աւետարանի լոյսն ու սէրը տարածում ամէն կողմ եւ աշխարհը ողողում աստուածային օրհնութիւնների անսպառ ծաւալումով:

Որովհետեւ Աւետարանը, քրիստոնէութիւնը կեանք է, ոչ թէ աստուածաբանական եւ խմաստասիրական բանաձեւերի շարք, որոնք շատ անգամ չոր են ու անօգուտ եւ ոչինչ չեն աւելացնում Աւետարանի ոգուն եւ քրիստոնէական սիրոյ գեղեցկութիւններին:

ՊԱՀՔ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաւատացեալների կեանքի առողջութեան եւ ներդաշնակութեան համար շատ մեծ կարեւորութիւն ունի պահեցողութիւնը: Եթէ միայն առողջապահական տեսակէտից դիտարկենք պահեցողութիւնը, բժշկական գիտութիւնն անվիճելի կերպով ընդունում է այն իբրեւ սկզբունք, իսկ դրա գործադրութեան ձեւերն ու կերպերը որոշում եւ կարգադրում մարդկանց վիճակի համապատասխան:

Խնդրին նայելով կրօնի տեսակէտից՝ տեսնում ենք, որ Եկեղեցին պահքը կանոնադրել է որպէս հոգեւոր կեանքի զարգացման կարեւոր սկզբունք, որը նաեւ յոյժ նպաստաւոր է մարմնի առողջութեան համար:

Սուրբ Գրքում օրերով ծոմապահութեան օրինակներ կան: Աւետարանական ժամանակների սկզբում տեսնում ենք Յովհաննէս Մկրտչին, որն իր անապատական կեանքի ընթացքում սնւում էր լոկ մարախով եւ վայրի մեղրով: Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս, քառասուն օր ծոմ պահեց Իր Մկրտութիւնից յետոյ, եւ փորձութեան պատմութեան մէջ տեսնում ենք, որ երբ փորձիչը հացին է դարձնում Նրա ուշադրութիւնը, Փրկիչը պատասխանում է. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ» [Մատթ. Դ 4]. Աստուծոյ խօսքը կամ հոգեւոր հացը նոյնչափ եւ աւելի կարեւոր է մարդու կեանքի համար:

Կան պարագաներ, ուր միայն հոգեւոր ազդակներ են պէտք՝ յաջողութիւն ձեռք բերելու համար: Յիսուս Քրիստոս բժշկում էր դիւահարների եւ Իր աշակերտներին էլ տուել էր այդ իշխանութիւնը: Բայց մի անգամ նրանք չկարողացան բժշկել մի դիւահարի, եւ երբ հիւանդի տէրը յայտնեց Յիսուսին, թէ՝ Քո աշակերտները չկարողացան բժշկել այս հիւանդին, Տէրը պատասխանեց. «Սա այնպիսի դիւահարութիւն է, որ կարող է բժշկուել միայն աղօթքով եւ պահքով» [տե՛ս Մատթ. ԺԷ 20]:

Եւ իրօք, ուտելիքի եւ խմելիքի՝ չափաւորութիւնն ու ժուժկալութիւնը մեծապէս նպաստում են՝ զօրացնելու հոգեկան կարողութիւնները եւ ապահովելու մարմնի առողջութիւնը:

Յաւօք, գնալով թուլանում է պահեցողութեան թէ՛ կրօնական

եւ թէ՛ առողջապահական ըմբռնումը: Եկեղեցական թէ աշխարհական, յարգելով բացառութիւնները՝ այսօր թոյլ ենք կրօնական պահեցողութեան մէջ. ամէնքս էլ ունենք մեր «արդարացուցիչ» պատճառները: Շատերն իրենց «արդարացնում» են՝ ասելով՝ արդէն փոխուել են ժամանակները եւ կամ կեանքի պայմանները: Այս առարկութեան մէջ խտանում են չքմեղանքի բոլոր իրական եւ կեղծ պատճառները: Միւս կողմից էլ, մարդիկ հազիւ են համակերպւում բժշկական հրահանգներին եւ այն դէպքում են ենթարկւում բժիշկների պատուիրած ռեժիմին, երբ հիւանդ են եւ վտանգ են տեսնում իրենց կեանքի դէմ:

Նկատի ունենալով այսօրուայ ըմբռնումները պահքի մասին՝ միայն մէկ ասելիք ունենք մեր Եկեղեցու զաւակներին. «Զանացէք յարգե՛լ պահեցողութեան սկզբունքը եւ նրա կերպերը՝ ըստ մեր մայրենի Եկեղեցու աւանդութիւնների»:

Քրիստոնեայ աշխարհի վարքուբարքի մէջ պահեցողութեան մասին տիրող ազատ կարծիքները մեծապէս թուլացրել են պահքի կարեւորութեան ըմբռնումը:

Խօսելով մասնաւորապէս հայ ժողովրդի մասին՝ գիտենք, որ գոնէ 1915-ից (աշխարհաւեր մեծ պատերազմի թուականից) առաջ նա ընդհանուր առմամբ խիստ հաւատարիմ էր իր մայրենի Եկեղեցու կարգուկանոնին: Բայց դրանից յետոյ նրա գոյութեան պայմաններն աներեւակայելի փոփոխութիւնների ենթարկուեցին, որի պատճառով խախտուեց ընդհանուր պահեցողութեան կարգը:

Հնարաւո՞ր է վերադառնալ հին կարգուկանոնին:

-Ինչու չէ, գոնէ որոշ չափով՝ Հայաստանեայց Եկեղեցու գեղեցիկ գծերից մէկը չեղծելու, քրիստոնէական կեանքի արտայայտիչ ազդակներից մէկը չսկարացնելու եւ անգործութեան չդատապարտելու համար:

«Հայր մեր»-ի մեկնութեան մէջ Եղիշէն ասում է. «Մարմնիդ կամքով մի՛ թաւալուիր երկրի վրայ, կորի՛ր եւ նետի՛ր քեզանից աւելորդ ցանկութիւնները: Շատ եւ բաւակա՛ն համարիր քեզ անհրաժեշտ կերակուրները, չափը մի՛ անցնիր եւ մի՛ չուայտանայ: Մարդը ճարպակալում է գիրութիւնից, եւ առատ ճարպից անօրինութիւններ են ելնում, ինչպէս արբեցողութիւնից՝ պիղծ գիճութիւններ. այսպիսին

չի կարող Հայր ասել Աստծուն... Աստուած չի կամենում փորձութեան տանել մարդուն, այլ՝ ազատել փորձութիւնից եւ փրկել մահուանից: Քանզի Նա, Ով չխնայեց Իր Որդուն, այլ ամենքիս համար մահուան մատնեց Նրան, Նրանով ամէն տեսակ բարիքներ է շնորհում բոլոր նրանց, ովքեր խնդրում են Իրենից: Թէպէտեւ մենք չենք կարող փոխհատուցել Աստծուն, չծուլանանք, որքան որ կարող ենք. մեր սակաւապէտութիւնը որպէս պահք է դիտւում, չափաւոր խմելը՝ դինեհատութիւն, միջակ հանդերձը՝ խոնարհութիւն, անհրաժեշտ ոտացուածքները՝ աղքատութիւն»:*

Ուսուցիչները պէտք է սերտեն պահքի մասին գրուածքները եւ դրանց ամենակարեւոր կէտերն ուսուցանեն իրենց աշակերտներին, որպէսզի ուսանողները հետաքրքրուեն, հասկանան եւ ինքնին յորդորուեն պահք պահելու՝ իբրեւ առողջութեան եւ հոգեւոր կեանքի զուարթութեան անհրաժեշտ պայման: Ջերմօրէն յանձնարարում ենք Հայաստանեայց Եկեղեցու զաւակներին՝ խնամքով ընթերցել պահքի մասին գրուած այս գլուխը: Բարեպաշտութիւնն իր ամբողջ պարզութեամբ պէտք է իշխի հայ ընտանիքում իբրեւ ցոլք հաւատքի եւ քրիստոնէական կեանքի:

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՕՐԵՐԸ

Ա

Քրիստոնէական կեանքի զարգացումը հաւատացեալների գործնական հաւատքի տրամաբանական հետեւանքն է, որովհետեւ կրօնը նոյն իր՝ հաւատացեալի կեանքն է, այլ խօսքով՝ հաւատացեալի կեանքում եւ կենցաղում գործնականապէս պէտք է արտայայտուի կրօնը հաւատքի ճշմարտութեամբ եւ բարոյագիտական գեղեցկութեամբ:

Կրօնական կեանքի զարգացմանն օժանդակելու համար Եկեղեցին տարուայ օրերին տուել է կրօնական նկարագիր, այնպէս որ հաւատացեալներն ամէն օր առիթ ունեն որեւէ հոգեւոր իրողութեան մասին խորհելու եւ մտածելու:

Կարող ենք ասել, որ Եկեղեցին կրօնականացրել է տարուայ օրերը: Այսպէս՝ շաբաթուայ եօթերորդ օրը տէրունի է (կիրակի), այսինքն՝ նուիրուած է Տէր Յիսուս Քրիստոսին ի յիշատակ Նրա սուրբ Յարութեան:

Բ

Եօթնեակի միւս վեց օրերն էլ տօնական եւ կամ պահոց օրեր են: Տօնական օրերը բաժանւում են երկու խմբի՝ տէրունի տօներ, մարտիրոսաց տօներ:

Տէրունի տօները նուիրուած են Տէր Յիսուս Քրիստոսին եւ Նրա տնօրինութիւնների յիշատակներին: Այսպէս՝ Աստուածայայտնութիւնը (Մնունդ եւ Մկրտութիւն), Յարութիւնը (Զատիկ), Համբարձումը, Հոգեգալուստը, Վարդավառը, Աստուածածինը, Խաչվերացը տէրունի են:

Մարտիրոսաց տօները նուիրուած են սուրբերի յիշատակին:

Պահոց օրերը նուիրուած են ապաշխարութեան:

Տօնական օրերին հաւատացեալն առիթ է ունենում խորհելու Փրկչի եւ Նրա գործերի մասին: Տօնախմբութեան յատուկ հանդէսներն իրենց ծիսական խորհրդաւորութեամբ ու պայծառութեամբ աւելի ապաւորիչ են դարձնում տօնը՝ մեր հոգիները համակելով փրկչական գործերի եւ տնօրինութիւնների նշանակութեամբ:

Մարտիրոսաց տօներին փառաւորւում են սուրբերի յիշատակները, եւ հաւատացեալները պաշտամունքի կենդանի արտայայտութեան մէջ զգում են, թէ նրանք իրենց սուրբ կրօնի սիրուն ինչպիսի գործարութիւնների են դիմակայել, որքան են հալածուել ու չարչարուել նոյնիսկ իրենց արեան գնով: Նրանք արիւն թափած նահատակներ են: Սուրբերի մէջ կան նաեւ այնպիսի քաջարի դէմքեր, որոնք կենդանի նահատակներ են կամ խոստովանողներ, որովհետեւ տանջուել են, չարչարուել, բայց ողջ մնացել մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ Աբրահամ Խոստովանողի պէս:

Հաւատացեալները սուրբերի կեանքում տեսնում են ամենադրական վկայութիւնը, որ տուել են նրանք իրենց հաւատքի ճշմարտութեան եւ իրենց քրիստոնէական դիտակցութեան ստուգութեան համար: Հաւատացեալները ոչ միայն զմայլւում են սուրբերի քաջութեամբ եւ նուիրումի անկեղծութեամբ, այլ նաեւ նրանց կենդանի բարեխօսութեան շնորհիւ յորդորւում են իրագործելու հոգեւոր կեանքի ճշմարտութիւնները:

Գ

Մարդը միայն աշխարհիկ հոգսերով կամ վայելքներով չպէտք է ապրի: Նա պէտք է ժամանակ յատկացնի ինքնաքննութեան, ապաշխարութեան եւ հոգեւոր վերաշինութեան համար: Պահոց օրերը սահմանուած են ապաշխարութեան համար: Այդ օրերին հաւատացեալը պէտք է անդրադառնայ իր ապրած կեանքին եւ գործերին, զղջայ իր կատարած սխալների ու մեղքերի համար, տրուի աղօթքի եւ հոգեւոր ընթերցանութեան՝ չարի դէմ սպառազինուելու եւ հոգեւորապէս զօրանալու համար:

Եկեղեցին իր արարողակարգով եւ ապաշխարութեան օրերի յատուկ պաշտամունքով մեծապէս օժանդակում է հաւատացեալներին՝ օրըստօրէ առաջադիմելու իրենց հոգեւոր կեանքում եւ հասնելու հոգեւոր բարձունքների:

Արժէ, որ Հայաստանեայց Եկեղեցու զաւակները մի ընդհանուր պատկերացում ունենան այն կարգի մասին, որով կրօնականացուած են տարուայ օրերը:

Դ

Ինչպէս ասուեց, տօնական օրերը երկու խմբաւորում ունեն.

ա) տէրունի տօներ,

բ) մարտիրոսաց կամ սրբոց տօներ:

ա) Արդէն բացատրեցինք, որ տէրունի նշանակում է կիրակի՝ Տիրոջը պատկանող օր: Այսինքն՝ բոլոր կիրակիները նուիրուած են Յիսուս Քրիստոսի Յարութեան յիշատակին: Դրանք, առանց բացառութեան, Յարութեան կիրակիներ են: Այս շեշտելու համար է, որ ամէն կիրակի կարդացւում է Իւղաբերից (Յարութեան) Աւետարանը, եւ օրուայ բոլոր շարականներում փառաբանւում է յարութիւն առած Փրկիչը:

Կիրակի օրերը գործի, աշխատանքային օրեր չեն: Այդ օրը առաւօտեան եւ երեկոյեան պէտք է եկեղեցի գնալ, իսկ օրուայ մնացած մասը՝ հանգստանալ կամ յատկացնել այցելութիւնների եւ բարեգործութիւնների:

Կիրակի օրերին են տօնւում տէրունի տօները՝ Հոգեգալուստը, Վարդավառը, Աստուածածնի Վերափոխումը, Խաչվերացը եւ այլն:

Կիրակի օրուայ ժամերգութիւնն ունի իր յատուկ շարականները, ընթերցուածները եւ այլն:

Մեծ պահոց բոլոր կիրակիները տէրունի են. այդ օրերին Յարութեան շարականների հետ երգւում են նաեւ ապաշխարութեան կամ այդ կիրակիներին յատուկ շարականներ:

Տէրունի տօների մի մասն էլ կարող է հանդիպել շաբաթուայ որեւէ օր, ինչպէս Մնունդը, որ մեր Եկեղեցում տօնւում է միշտ յունուարի 6-ին, որ օրն էլ հանդիպի: Համբարձումը միշտ տօնւում է հինգշաբթի օր:

բ) Մարտիրոսաց կամ սրբոց տօները մեր Եկեղեցում բաժանուած են եօթնեակների, այսինքն՝ ամսաթուերով կամ Յայսմաւուրքի շարակարգութեամբ չեն տօնւում*: Բացառութիւն են կազմում մի քանի տօներ, որոնք հաստատուն կերպով կապուած են ամսաթուերին, ոչ թէ օրերին: Այս է պատճառը, որ դրանք անշարժ են ասւում: Դրանք

* Քանի որ մեր Եկեղեցում տօները բաժանուած են եօթնեակների վրայ, իսկ Յայսմատուրքում ամսաթուերի վրայ, այս պատճառով Տօնացոյցի կարգը չի համաձայնում Յայսմատուրքի կարգին:

են յունուարի 5-ից մինչեւ յունուարի 13-ը իննեակ օրերի տօները. այսպէս՝

յունուարի 5՝ Ճրագալոյց Մնդեան.

յունուարի 6՝ Մնունդ.

յունուարի 7, 8, 9, 10, 11, 12՝ Մնդեան եօթնեակը կամ ութօրէքը.

յունուարի 13՝ Անուանակոչութիւն.

փետրուարի 14՝ Տեառնընդառաջ.

ապրիլի 7՝ Աւետում.

սեպտեմբերի 8՝ Մնունդ Աստուածածնի.

նոյեմբերի 21՝ Ընծայումն Աստուածածնի.

դեկտեմբերի 9՝ Յղութիւն Աստուածածնի:

Աստուածածնի տօնի օրը օգոստոսի 15-ն է. ուրիշ Եկեղեցիներ տօնում են եօթնեակի որ օրը հանդիպի, բայց մեր Եկեղեցին՝ օգոստոսի 12-18-ը եօթ օրերի մէջ հանդիպող կիրակին, այսինքն՝ օգոստոսի 15-ին ամենամօտ կիրակին:

Խաչի տօնի օրն է սեպտեմբերի 14-ը՝ եօթնեակի որեւէ օրը, բայց մեր Եկեղեցին տօնում է սեպտեմբերի 11-17-ը եօթ օրերի մէջ հանդիպող կիրակի օրը:

Յիսնակաց Բարեկենդանի օրն է նոյեմբերի 18-ը: Յիսնակ կամ յիսնեակ նշանակում է յիսուն, այսինքն՝ նոյեմբերի 18-ից մինչեւ յունուարի 6-ը՝ մինչեւ Մնունդ, յիսնօրեայ միջոցը: Բայց որովհետեւ Յիսնակը շաբաթապահք ունի, եւ Բարեկենդանը պէտք է ընկնի կիրակի, այդ պատճառով նոյեմբերի 15-21-ը եօթ օրերի մէջ հանդիպող կիրակին լինում է Բարեկենդան:

Ե

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Շարժական տօները կապուած են Զատկի (Յարութեան տօնի) հետ:

Զատիկը պէտք է լինի մարտ ամսի լուսնի լրումից անմիջապէս յետոյ եկող կիրակի օրը: Եթէ մարտ ամսի լուսնի լրումը մարտի 21-ից առաջ լինի, այդ դէպքում Զատիկը տօնւում է ապրիլ ամսի լուսնի լրումից անմիջապէս յետոյ եկող կիրակի օրը: Բայց երբ մարտ եւ

ապրիլ ամիսների լուսնի լրումը պատահի ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերին, Զատիկը կոծնուի անմիջապէս հետեւեալ կիրակի օրը: Սա կանոն է:

Արդ, մարտ ամսի լուսինը ծնւում է մարտի 8-ին եւ լրանում 21-ին: Այս լրումն ասւում է Աւագ լրումն լուսնի: Իսկ ապրիլ ամսի լուսինը ծնւում է ապրիլի 5-ին եւ լրանում 18-ին, որին յաջորդող կիրակին ապրիլի 25-ից չի կարող անցնել: Այստեղից հետեւում է, որ Զատիկը տօնւում է մարտի 22-ից մինչեւ ապրիլի 25-ը երեսունհինգ օրերի մէջ հանդիպող որեւէ կիրակի: Այլ խօսքով, Զատիկը 35 օրերի մէջ ետ ու առաջ է շարժւում կամ 35 օրերի շարժականութիւն ունի, եւ նրա հետ շարժւում են նաեւ մի շարք տօներ, որոնք են.

1. Մնունդին եւ Աստուածայայտնութեանը յաջորդող 11 տօները, որոնցից առաջինը Յովհաննէս Կարապետի ծննդեան տօնն է, եւ ապա միւս տօները, որոնք Տօնացոյցում նշանակուած են ապա բառով եւ կոչւում են Ապայից տօնք.

2. Վարդավառից մինչեւ Աստուածածին ձգուող շաբաթների տօները.

3. Եթէ Աստուածածնից մինչեւ Խաչ ընկած երեք շաբաթներին աւելանան Դ եւ Ե շաբաթներ՝ այս երկու շաբաթների տօները:

Զ
ՊԱՀՈՑ ՕՐԵՐ

Եկեղեցին ունի պահոց կամ ապաշխարութեան յատուկ օրեր, որոնց թիւը 150-157 է: Պահոց օրերն էլ բաժանւում են երկու խմբի՝ օրապահք եւ շաբաթապահք:

Եօթնեակի երկու օրերը՝ չորեքշաբթին եւ ուրբաթը, օրապահք են, իսկ պահքի եօթնեակի հինգ օրերը՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ, շաբաթապահք են:

Թէեւ պահոց օրերը ապաշխարութեան են յատկացուած, եւ տօն չպէտք է կատարել, բայց մի շարք տօների համար բացառութիւններ են արուել: Այդ օրերն են.

1. Բարսեղ Հայրապետ եւ այլն՝ սուրբ Մեծդեան պահոց շաբաթ օրը:

2. Առաջաւորաց պահոց ուրբաթ օրը՝ Յովնան մարգարէի եւ Նինուէացիների ապաշխարութեան յիշատակը:

3. Մեծ պահոց բոլոր շաբաթ օրերը. Ա շաբաթ՝ Թէոդորոս Զօրավար, Բ շաբաթ՝ Կիւրեղ Երուսաղէմացի եւ Կիւրեղ Աղեքսանդրացի, Գ շաբաթ՝ Յովհաննէս Երուսաղէմացի, Օձնեցի, Որոտնեցի եւ Տաթեւացի, Դ շաբաթ՝ Քառասուն մանկունք, Ե շաբաթ՝ Լուսաւորչի մուտն ի Վիրապ, Զ շաբաթ՝ յիշատակ Ղազարու յարութեան:

4. Ամբողջ Աւագ շաբաթը նուիրուած է տէրունի յիշատակների:

5. Եղիսկան շաբաթապահոց բոլոր օրերը նուիրուած են Սուրբ Հոգու Գալստեան յիշատակին:

6. Լուսաւորչի, Վարագայ խաչի եւ սուրբ Յակոբի շաբաթապահքերի երկուշաբթի, երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին սրբոց տօներ են կատարւում:

Է
ՈՒՏԻՔԻ ՕՐԵՐ

Քանի որ 35 օրերի շարժականութեան (մարտի 22-ից մինչեւ ապրիլի 25) համեմատ տօներն էլ շարժւում են, միեւնոյն պատճառով աւելանում կամ պակասում են ուտիք օրերը մինչեւ Զատիկ եւ Զատկից յետոյ: Այսպէս.

ա) Մնունդից մինչեւ Առաջաւորաց բարեկենդան՝ 6-ից մինչեւ 41 օր.

բ) Վարդավառից մինչեւ Աստուածածին՝ 2-ից 7 եօթնեակ.

գ) Աստուածածնից մինչեւ Խաչ՝ 4-ից 5 եօթնեակ.

դ) Վարագայ խաչից մինչեւ Յիսնակաց բարեկենդան՝ 7-ից 8 եօթնեակ.

ե) Սուրբ Յակոբից մինչեւ Մնունդ՝ 12-ից 18 օր:

Ուտիք են նաեւ.

ա) Առաջաւորաց պահքին յաջորդող 2 եօթնեակները,

բ) Յինունքը (Զատկից մինչեւ Հոգեգալուստ 50 օրերը),

գ) Հոգեգալուստի եօթնեակին յաջորդող 2 եօթնեակները,

դ) Լուսաւորչի (Գիւտ Նշխարաց) տօնին յաջորդող 2 եօթնեակ-

ները.

ե) Խաչին յաջորդող մէկ եօթնեակը.

զ) Ցիսնակի պահոց յաջորդող 2 եօթնեակները՝ մինչեւ սուրբ Ցակոբ:

ՄԱՆՕԹ. Պահոց օրերին չեն ուտում կաթ, միս, իւղ, հաւկիթ եւ սրանց նման բաներ: Նաւակատիք, ուտելիքի առումով, նշանակում է ամէն տեսակ ուտելիքի օր, բացի մսեղէնից, այդպիսի օրեր են Վարդավառի, Աստուածածնի եւ Խաչի շաբաթապահոց շաբաթ օրերը եւ մանաւորապէս Մենդեան եւ Զատկի Ճրագալոյցի օրերը: Իսկ ուտիք նշանակում է ոչ պահքի, այլ ուտելու յատուկ օրեր:

Ը
ՈՒԹ ՁԱՅՆԵՐ

Եկեղեցու երգեցողութիւններն ու ընթերցուածքը կանոնակարգուած են ըստ ութ ձայների, որոնք են.

ԱՁ- առաջին ձայն,

ԱԿ- առաջին կողմ,

ԲՁ- երկրորդ ձայն,

ԲԿ- երկրորդ կամ աւագ կողմ,

ԳՁ- երրորդ ձայն,

ԳԿ- երրորդ կողմ կամ վաղ ձայն,

ԴՁ- չորրորդ ձայն,

ԴԿ- չորրորդ կողմ կամ վերջ ձայն:

Ութ ձայները խմբաւորում են ոչ միայն սրբազան երգեցողութեան ութ ձայնեղանակները, այլեւ ժամասացութեան կարգը:

Ձայների կարգը սկսւում է Բուն բարեկենդանով. այդ օրը ձայնը, ինչպիսին էլ լինի, պէտք է փոխուի ԴԿ-ի, որպէսզի Զատկի օրը ԱՁ լինի:

Դարձեալ, եկեղեցու մէջ երկու դաս կայ՝ հիւսիսային եւ հարաւային, որտեղ կանգնում են քահանաները եւ դպիրները: Հիւսիսայինը կոչւում է Աջակողմեան դաս, հարաւայինը՝ Ձախակողմեան դաս: Ժամերգութիւնը կատարւում է դաս առ դաս: Աջակողմեան դասը վարում է ձայները, Ձախակողմեանը՝ կողմերը: Այն դասը, որն օրուայ

ձայնի համեմատ վարում է կարգը, ասւում է Աւագերիցու դաս, իսկ միւսը կոչւում է Աշակերտի դաս: Ըստ այսմ՝ երկու դասերը կոչւում են նաեւ Ձայնի դաս եւ Կողման դաս:

Քանի որ ժամերգութիւնը կատարւում է դաս առ դաս, մի տարի Աջակողմեան դասն է վարում ձայները, իսկ կողմերը՝ Ձախակողմեանը, յաջորդ տարին Ձախակողմեանը վարում է ձայները, իսկ Աջակողմեանը՝ կողմերը:

Եթէ Փրկչի թուականը դար (=զոյգ) է, ձայներն ընկնում են Աջակողմեան դասին, իսկ եթէ կոճատ (=անզոյգ) է՝ Ձախակողմեան դասին:

Թ
ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻ ՔԱՆԻ ՏՕՆԵՐԻ ԵՒ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ա) Մնունդ եւ Աստուածայայտնութիւն. Աստուածայայտնութիւն նշանակում է Աստուծոյ յայտնուելը: Յիսուս Քրիստոսի աստուածայայտնութիւնը բովանդակում է ոչ միայն նրա Մնունդը, այլ նաեւ Մկրտութիւնը եւ այլն: Այս պատճառով Փրկչի Մնունդն ու Մկրտութիւնը (չաբաթուայ որ օրն էլ պատահի) մեր եկեղեցում տօնախմբւում են միասին, յունուարի 6-ին՝ համաձայն քրիստոնէական եկեղեցու վաղեմի աւանդութեան: Մենդեան տօնի առաւօտեան, սուրբ Պատարագից յետոյ, կատարւում է Զրօրհնէք, որ յիշատակն է Յիսուս Քրիստոսի՝ Յորդանանում Յովհաննէս Մկրտչի ձեռքով Մկրտութեան:

բ) Տօն Անուանակոչութեան. ըստ Տօնացոյցի՝ «Տօն Յայտնութեան եւ Թլփատութեան», որ կատարւում է յունուարի 13-ին, այսինքն՝ Մնունդից ութ օր յետոյ: Հրեաները թլփատութիւնը կատարում էին մանկան ծնուելուց ութ օր յետոյ: Ըստ Աւետարանի՝ Յիսուս Մանկանն թլփատեցին: Հայաստանեայց եկեղեցում էլ փոքրիկները մկրտւում են իրենց ծննդեան ութերորդ օրը: Մեր եկեղեցում Մնունդն ութօրեայ մի տօն է, որ աւարտւում է Անուանակոչութեան տօնով:

Այդ օրուայ Ճաշու Աւետարանը միայն մէկ տուն է [տե՛ս Ղուկ. Բ 21 եւ հմմտ. Մատթ. Ա 25]:

գ) Տեառնընդառաջ. Յիսուս Քրիստոսի ծնունդից 40 օր յետոյ Նրան տաճարի մէջ Աստծուն նուիրելու կամ ընծայելու տօնն է, որ

լինում է փետրուարի 14-ին [տե՛ս Ղուկ. Բ 23-40]:

Մնուելուց 40 օր յետոյ մանուկներին տաճար տանելու եւ Աստծուն նուիրելու սովորութիւնը քրիստոնէական Եկեղեցում էլ մնաց: Այս է պատճառը, որ հայ մայրերը որդեծնութիւնից յետոյ 40 օր հանգստանում են տանը, իսկ քառասունքի վերջին օրը, իրենց մանկանը գրկած, գնում են եկեղեցի եւ յատուկ արարողութեամբ նրան նուիրում Աստծուն: Այդ գեղեցիկ արարողութիւնը կոչւում է Քառասունք:

Ջերմեռանդ մայրերը Տեառնընդառաջի տօնին իրենց փոքրիկներին, եթէ Մննդեան տօնից փոքր-ինչ առաջ կամ յետոյ են ծնուել նրանք, տանում են եկեղեցի՝ Յիսուս Մանկան ընծայման յիշատակին հաղորդակից դարձնելու համար: Հայ քրիստոնեայ ընտանիքներում քրիստոնէական զգացումով որքա՜ն լեցուն երեւոյթ է սա. մանկուց նուիրուել Աստծուն եւ ապրել ու աճել կրօնի սրբութեամբ:

Տեառնընդառաջը ժողովրդական լեզուում դարձել է Տէրընտաս, Տրնդեզ, ասւում է նաեւ Մէլէտ:

Կարծւում է, թէ հին մի տօնի՝ Միհրականութեան տեղն է հաստատուել Տեառնընդառաջը, քանի որ խարոյկ վառելու սովորութիւնը մնացել է, թէեւ Եկեղեցին այն փոխարինել է մոմավառութեամբ կամ ջահավառութեամբ: Այնպէս որ, այդ օրը Եկեղեցում վառուած մոմերը տուն են տանում եւ այդ գիշեր տան ճրագը կամ լամպը դրանով են վառում: Ժողովրդի մէջ մնացել է տանիքներին եւ հրապարակներում կրակ վառելու սովորութիւնը:

դ) Առաջաւորք կամ Առաջաւորաց պահք, որ Բարեկենդան էլ ունի. նախորդում է Մեծ պահքին: Ժողովուրդը սրան սուրբ Սարգսի պահք է ասում, որովհետեւ շաբաթ օրը տօնւում է սուրբ Սարգսի տօնը: Ուրբաթ օրն էլ նուիրուած է Յովհան մարգարէի եւ նինուէացիների ապաշխարութեան յիշատակին:

Առաջաւորաց պահքի ծագումը հայ պատմագիրները վերագրում են սուրբ Գրիգոր Լուսաւորչին, որ Խոր Վիրապից ելնելուց յետոյ հնգօրեայ պահեցողութեամբ (ծոմապահութեամբ) հայ ժողովրդին ապաշխարել տուեց եւ ապա մկրտեց: Այս կերպ Առաջաւորք պիտի նշանակի առաջին պահք, որ հաստատուել է սուրբ Գրիգոր Լուսաւորչից:

Հնում Մեծ պահքը 70 օր էր՝ Առաջաւորաց պահքից մինչեւ Զատիկ: Յետոյ Մեծ պահքը զատուեց Առաջաւորաց պահքից (տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 650):

Ամէն պարագայում, սա հայ ժողովրդի ամենաշատ յարգած շաբաթապահքն է: Այդ ժամանակ շատերը ոչ միայն պահք, այլեւ ծոմ են պահում 3 կամ 5 օր:

ե) Բարեկենդան նշանակում է բարի կենդանութիւն. սովորականից շատ ուտելու, խմելու, խրախճանքի օր, որին շաբաթապահք է յաջորդում: Իսկ Բուն բարեկենդան նշանակում է ամենամեծ բարեկենդան, որին յաջորդում է Մեծ պահքը:

զ) Մեծ պահք նշանակում է ամենամեծ պահքը՝ համեմատած օրապահքերի եւ շաբաթապահքերի հետ, որոնք փոքր պահքեր են: Ասւում է նաեւ Քառասունք, որովհետեւ նախկինում Մեծ պահքը 40 օր էր՝ Բուն բարեկենդանի վաղորդայնից մինչեւ վեցերորդ եօթնեակի ուրբաթ օրը, որին յաջորդում են շաբաթ՝ Ղազարի յարութեան յիշատակի օրը եւ Աւագ շաբաթը, որ դարձեալ պահք է:

Քառասունքը ծագումով անլուծանելի պահք էր. յետոյ կիրակի օրերը լուծելի դարձրեցին նաւակատիքով. հետեւաբար, Մեծ պահոց 6 լուծելի կիրակիների տեղը լցւում է Աւագ շաբաթի պահքով, եւ Քառասունքը սկզբունքօրէն քառասունք էլ մնում է՝ իբրեւ պահոց օրեր. յիշենք մեր Փրկչի քառասնօրեայ ծոմը:

Մեծ պահքը կոչւում է նաեւ Աղուհացք, որովհետեւ հնում Մեծ պահքի ժամանակ միայն աղ ու հաց էին ուտում եւ կամ աղ ու հացով լուծում էին ծոմը:

Մեծ պահոց կէսը կամ 24-րդ օրը, որ չորեքշաբթի է լինում, ասւում է Միջինք:

ՄԱՆՕԹ. Շաբաթների լուսանցքում Մեծ պահոց Հարցերից* մի քանիսի կողքին գրուած է Աղցմի բառը: Սա ազգաբարութիւն է, որ նշանակում է՝ յաղուհացս մի՛ ասեր, այսինքն՝ այս Հարցերը Մեծ պահքի ընթացքում մի՛ ասայ, որովհետեւ դրանք երգւում են ուրիշ պահոց օրերի:

Մեծ պահոց եօթ կիրակիները բացի առաջինից նուիրուած են մի

* Հարցը շարականի կանոնի երկրորդ մասն է եւ երգւում է առաւօտեան ժամերգութեան ժամանակ: Ունի հետեւեալ սկսուածքը. «Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ եւ փառաւորեալ է անուն Քո յաւիտեան»:

քանի յիշատակների.

առաջինը՝ Բուն բարեկենդանը նուիրուած է Դրախտի յիշատակին, որի փափկութեան մէջ նախածնողները մի պահ ապրեցին անմեղ ու երջանիկ կեանքով.

երկրորդը՝ Նախածնողների արտաքսմանը այդ դրախտից.

երրորդը՝ Անառակ որդու վերադարձին.

չորրորդը՝ Տնտեսին.

հինգերորդը՝ Դատաւորին.

վեցերորդը՝ Փրկչի Գալստեանը.

եօթերորդը՝ Փրկչի մուտքին Երուսաղէմ. կոչւում է Ծաղկազարդ.

է) Աւագ շաբաթ նշանակում է մեծ շաբաթ, որովհետեւ Փրկչի Յարութեան շաբաթն է կամ եօթնեակը: Աւագ շաբաթուայ վեց օրերը նուիրուած են աւետարանական յիշատակներին.

երկուշաբթին՝ Զորացած թզենուն,

երեքշաբթին՝ Տասը կոյսերին,

չորեքշաբթին՝ Քրիստոսի՝ կնոջ ձեռքով օծուելուն,

աւագ հինգշաբթին՝ սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատման յիշատակին,

ուրբաթը՝ Զարչարանքներին,

շաբաթ օրը Ճրագալոյց է:

ը) Զատիկ. Փրկչի Յարութեանը նուիրուած մեծ տօնն է:

Զատկի յատկանշական ուտելիքն է կարմիր ձուն՝ իբրեւ խորհրդանշան խաչի վրայ Փրկչի թափած արեան եւ Նրա Յարութեան:

թ) Զատկից մինչեւ Համբարձում 40 օր է: Այս ժամանակահատուածն էլ կոչւում է Քառասունք յարութեան, ինչպէս որ Մեծ պահքը կոչւում է Քառասունք ապաշխարութեան:

Դարձեալ, Զատկից մինչեւ Հոգեգալուստ կամ Պենտեկոստէ յիսուն օրերի ժամանակահատուածը կոչւում է Ցինունք, ինչպէս որ Մնունդը կանխող 50 օրերն աւանդւում են Ցինանկք:

ՄԱՆՕԹ. Ժողովուրդը Փրկչի Յարութեան տօնին ասում է Մեծ զատիկ, իսկ Մնդեան տօնին՝ Փոքր զատիկ:

ժ) Ցինանց կիրակիներն էլ զատ-զատ անուններ ունեն:

Առաջին կիրակին՝ Զատիկ:

Երկրորդը՝ Նոր կիրակի կամ Կրկնազատիկ. որովհետեւ Փրկչի Յարութիւնից յետոյ ամէն բան նորոգւում է, եւ քրիստոնէութեան համար մի Նոր կիրակի է, ինչպէս նաեւ՝ Կրկին զատիկ, այսինքն՝ Նոր կիրակի եւ Զատկի կիրակի:

ՄԱՆՕԹ. Նոր կիրակի երկուշաբթից սկսած՝ մեր եկեղեցում առաւօտեան և երեկոյեան կարդացւում են չորս Աւետարանները, որոնք աւարտւում են Ցինանց օրերի հետ՝ Հոգեգալստին. առաւօտեան՝ Ղուկաս, ճաշին՝ Յովհաննէս, երեկոյեան ժամերգութեան սկզբում՝ Մատթէոս, երեկոյեան ժամերգութեան վերջում՝ Մարկոս:

Երրորդը՝ Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի:

Աշխարհամատուռ նշանակում է բոլոր քրիստոնեաների մատուռը՝ Երուսաղէմի առաջին Եկեղեցին, որ կազմակերպուեց առաքեալների ձեռքով: Իսկ կանաչի հնախօսութիւնը ծանօթ չէ. ըստ երեւոյթին, դրանով յիշատակւում է նոր կանաչած, ծաղկած Եկեղեցին:

Չորրորդը՝ Կարմիր կիրակի: Մի տաղի մէջ այսպէս է ասւում.

Կարմիր անուանի
Օրն այն նազելի,
Զի Տէրն երեւի
Որպէս ի Զատկի
Օրն կիրակի:
Եւ այն զի կոչի
Կարմիր կիրակի
Եւ յոյժ պատշաճի,
Զի արեամբ ծաղկի:

ժա) Զատկի հինգերորդ կիրակի օրը տօնւում է Խաչի երեւումը՝ պարզապէս երեւման խաչ բացատրութեամբ:

Երուսաղէմի Կիւրեղ պատրիարքի ժամանակ Սիոնի վրայ տեղի է ունենում խաչանման լուսահրաշ մի երեւոյթ, որը Կիւրեղը նամակով նկարագրում է Կոստանդին Բ կայսրին (337 թ.): Այս դէպքն է յիշատակւում Զատկի Ե կիրակի օրը, եւ այդ առթիւ կարդացւում է Կիւրեղ եպիսկոպոսի՝ Կոստանդինոսին ուղղած նամակի հայերէնը Անգստանի ընթերցուածների սկզբում:

ժբ) Համբարձում. Զատկից քառասուն օր անց, Ցինանց վեցերորդ եօթնեակին, հինգշաբթի օրը, տօնւում է Փրկչի վեր բարձրանալը կամ համբարձումը Ձիթենեաց լեռան վրայից: Այս տօնը տասնօրեայ է, նրան յաջորդում է Հոգեգալուստը:

Մանօթ. Հայ ժողովրդի մէջ Համբարձումն ասւում է Վիճակի օր, որովհետեւ Ցուդայի փոխարէն վիճակով ընտրուեց Մատաթիան [տե՛ս Գործ. Ա 26], եւ այդ օրն է, որ հայ մայրերն ու աղջիկները յատուկ արարողութիւններով վիճակի խրախճանք էին անում՝ վիճակահանութեան մէջ քրիստոնէական ոգի դնելով:

ժգ) Զատկի եօթերորդ կիրակին կոչւում է Երկրորդ ծաղկազարդ, որովհետեւ ինչպէս որ Բուն բարեկենդանից մինչեւ Ծաղկազարդ քառասունք է, այդպէս էլ Զատկից մինչեւ Ցինանց եօթերորդ կիրակին քառասունք է, եւ այդ կիրակի Ծաղկազարդի յատուկ շարականների ընթերցուածները կրկնւում են նոյնութեամբ՝ ի յիշատակ Փրկչի գալստեան: Այս կիրակին կոչուել է նաեւ Մեծահրաշի կիրակի, որովհետեւ այդ օրուայ Օրհնութեան շարականը սկսւում է «Մեծահրաշ այս խորհուրդ» բառերով, որի մէջ երգւում է Լուսաւորչի՝ Խոր Վիրապում եղած ժամանակ հրեշտակի հետ ունեցած խոսակցութեան աւանդութիւնը:

ժդ) Հոգեգալուստ կամ Պենտեկոստէ. Սուրբ Հոգու իջմանը նուիրուած առաջին կիրակին է Զատկի կամ Ցինանց կիրակիներից յետոյ:

Ցիսուներորդ նշանակում է Պենտեկոստէ: Մագումով հրէական տօն է՝ Եգիպտոսում նրանց տօնած վերջին Պասեքի (Զատկի) յիշատակին, որ տօնում էին Զատկի յիսներորդ օրը: Հրեաների Պենտեկոստէն նաեւ, տօնն է Հնձոց եւ երախայրեաց, այսինքն՝ գոհութեան տօն, ինչպէս նաեւ, ըստ աւանդութեան, Սինա լեռան վրայ աստուածային օրինադրութեան տարեդարձն է:

Հոգեգալուստ նշանակում է Սուրբ Հոգու գալը կամ էջքը, որ տեղի ունեցաւ Պենտեկոստէի օրը Վերնատանը [տե՛ս Գործ. Բ], եւ քրիստոնէական Եկեղեցին, պահելով հանդերձ Պենտեկոստէ անունը, նուիրագործեց այդ կիրակին Հոգեգալստեան կիրակի անունով: Հոգեգալուստը եօթօրեայ տօն եղաւ Շնորհալու կարգադրութեամբ՝ եօթնեակն էլ «անլուծանելի» պահք հռչակելով:

Այս շաբաթապահքը կոչւում է նաեւ Եղիական պահք այն պարզ

պատճառով, որ Հոգեգալստին յաջորդող առաջին կիրակի օրը Ճաշու ժամին կարդացւում է Եղիա մարգարէի պատմութիւնը [տե՛ս Դ Թագ. Ա-Ե]:

ժե) Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի. սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով Վաղարշապատի Մայր եկեղեցու հիմնադրումը պատմական կարեւոր իրադարձութիւն է մեր եկեղեցու պատմութեան մէջ: Լուսաւորչի տեսիլքի համաձայն՝ Միածինն իջաւ եւ ոսկեայ մուրճով նշանակեց Հայաստանի Մայր եկեղեցու հիմքերի տեղը, որոնց վրայ բարձրացաւ այդ եկեղեցին: Ցետոյ Էջմիածինը յատուկ անուն դարձաւ՝ խորհրդանշելով լուսաւորչահիմն Մայր Եկեղեցին եւ միաժամանակ Մայր Աթոռը: Եկեղեցին կոչուեց նաեւ Կաթողիկէ Եկեղեցի Սրբոյ Էջմիածնի. Կաթողիկէ, այսինքն՝ բոլոր հայերի Ընդհանրական եկեղեցի:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն Էջմիածնի հիմքերը դրեց Խոր Վիրապից ելնելուց յետոյ: Այս պատճառով Լուսաւորչի՝ Վիրապից ելնելու տօնն էլ կատարւում է այս կիրակիին նախորդող շաբաթ օրը: Աստուածածնի Վերափոխման շաբաթ օրը տօնւում է Շողակաթը, որ Էջմիածնի հիմնադրման տօնն է, կարելի է ասել՝ նաեւ Միածնի իջման տօնը՝ ըստ սուրբ Լուսաւորչի տեսիլքի: Եւ որովհետեւ Էջմիածնի եկեղեցին նուիրուած է սուրբ Աստուածածնին, այդ պատճառով Շողակաթի տօնը դրուած է Աստուածածնի շաբաթ օրը:

ժզ) Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. Հոգեգալստեան երրորդ կիրակին Բարեկենդան է, եւ շաբաթ օրը տօնւում է Լուսաւորչի նշխարների գիւտը: Հայաստանեայց եկեղեցու ազգային գլխաւոր տօներից է այս տօնը: Մեր եկեղեցում տօնախմբւում են Լուսաւորչի կեանքից երեք դրուագներ՝ Վիրապ մտնելը, Վիրապից ելնելը եւ նշխարների գիւտը: Այս վերջինն ամենակարեւորն է, նուիրուած է մեր Լուսաւորչի պանծալի կեանքին եւ երջանիկ ելքին այս աշխարհից:

Պատմւում է, որ Լուսաւորիչն իր ծերութեան օրերին, հայրապետական պաշտօնն ու գործն իր Արիստակէս որդուն յանձնելուց յետոյ, քաշուեց Երզնկայի Սեպուհ լեռը, այնտեղ ապրեց իբրեւ միայնակեաց, ճգնեց եւ, ըստ համշէնցիների աւանդութեան, վախճանուեց գիհի ծառի փչակի մէջ: Մի հովիւ պատահաբար գտաւ նրա անշնչացած մարմինը կամ նշխարքը: Սա է Գիւտ նշխարաց աստուածը: Ցետագայում Սեպուհ

լեռան վրայ մի փառաւոր եկեղեցի շինուեց սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունով:

Յովհաննէս Երզնկացի վարդապետը (1250–1326) «Լերի՛նք ամենայն, այսօր ցնծացէ՛ք» շարականով փառաւորեց Լուսաւորչի այս տօնը:

ժէ) Վարդավառ. Քրիստոսի Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան տօնն է: Վարդավառը հայոց հեթանոսական կրօնից մնացած Աստղիկի տօնի անունն է, որ պահպանուել է:

Վարդավառի առթիւ աղաւնի թռցնելու եւ իրար վրայ ջուր լցնելու սովորութիւնն էլ Աստղիկի տօնից մնացած սովորութիւն է մեզանում:

ժը) Վերափոխումն սուրբ Աստուածածնի կամ պարզապէս Աստուածածին. տօնւում է օգոստոսի 12–17-ը հանդիպող կիրակի օրը: Տիրամօր Վախճանի կամ Վերափոխման տօնն է, որ, ըստ Շնորհալու կարգադրութեան, եօթօրեայ է:

Աստուածածինը մի քանի տօներ ունի. դեկտեմբերի 9-ին՝ Յղութիւն յԱննայէ, սեպտեմբերի 8-ին՝ Ծնունդ, նոյեմբերի 21-ին՝ Ընծայումն ի Տաճարն, ինչպէս նաեւ՝ յետամուտ Գիւտ տփոյ, Գիւտ գօտւոյ տօները: Ամենամեծը Վերափոխման տօնն է:

ժթ) Խաչվերաց նշանակում է խաչի հանդիսաւոր վերացումը կամ բարձրացումը, որ մեծ հանդիսութեամբ տօնւում է սեպտեմբերի 11–17-ը հանդիպող կիրակի օրը եւ եօթօրեայ տօն է:

Խաչը մեր Եկեղեցում մի քանի տօներ ունի՝ Երեւման խաչ, Վարագայ խաչ, Գիւտ խաչի, Խաչվերաց. սրանցից զատ, Եկեղեցու տօների շարքում երեք օր նուիրուած է Խաչին, ինչպէս կտեսնենք հետեւեալ հատուածում:

ի) Տօն Եկեղեցւոյ. Խաչը եւ Եկեղեցին եկեղեցաշինարարն հոմանիշ են: Եկեղեցին խաչեալ Փրկչի մահուան պտուղն է: Քրիստոսի մահուամբ հաստատուեց Եկեղեցին, որովհետեւ «մահով ընդոտնեց մահը եւ Իր Յարութեամբ կեանք պարգեւեց մեզ»:

Համշէնցիները եկեղեցուն խաչ են ասում: Ասացինք, որ Խաչվերացի տօնը եօթօրեայ է: Այս եօթնեակի կէսը Խաչի տօն է, կէսը՝ Եկեղեցու: Այսպէս.

երկուշաբթի՝ տօն Խաչի,
երեքշաբթի՝ տօն Եկեղեցւոյ,
չորեքշաբթի՝ տօն Եկեղեցւոյ,
հինգշաբթի՝ տօն Եկեղեցւոյ,
ուրբաթ՝ տօն Խաչի,
շաբաթ՝ տօն Խաչի:

իա) Վարագայ խաչ. Վարագը Վանի մօտ գտնուող մի լեռ է, որի բլուրներից մէկը կոչւում է Գալիլիա: Պատմւում է, որ սուրբ Հռիփսիմէն, երբ հալածուեց Հռոմից, իր վզին Կենաց Փայտից մի խաչ էր կախել: Երբ իր ընկերուհիների հետ հասաւ Վարագ լեռը, այդ թանկագին սրբութիւնը պահեց ժայռերի մէջ, որպէսզի այն չընկնի իր հալածիչների ձեռքը: Այս աւանդութեան համաձայն՝ Յովէլ անունով մի ճգնաւոր շատ չաշխարուեց՝ այս խաչը գտնելու համար: Վերջապէս տեսիլքի մէջ յայտնուեց նրան, թէ որտեղ է պահուած Հռիփսիմէի խաչը: Այն գտնում եւ դնում են Վարագի եկեղեցում: Այստեղից է Վարագայ խաչ անունը: Ներսէս Շինող կաթողիկոսը (640–661) փառաւոր հանդէսով պանծացրեց Վարագայ խաչի գիւտը եւ կարգադրեց տօնել այդ դէպքը:

իբ) Գիւտ խաչ. նշանակում է խաչի գտնուելը, որ, ըստ աւանդութեան, տեղի ունեցաւ մեծն Կոստանդիանոսի (306–337) մօտ՝ Հեղինէ թագուհու ձեռքով: Հեղինէն Երուսաղէմ է գնում Քրիստոսի խաչը գտնելու բուռն տենչանքով, եւ խաչելութեան վայրում, ըստ աւանդութեան, պեղելուց յետոյ գտնում է երեք խաչ՝ Յիսուսինը եւ երկու աւազակներինը: Այս երեքից Յիսուսի խաչը զատւում է մի հրաշքով. երեքն էլ հերթով դնում են մի ննջեցեալի վրայ, եւ Քրիստոսի խաչի տակ ննջեցեալը յարութիւն է առնում: Այս դէպքն է, որ տօնւում է Խաչվերացից յետոյ եօթերորդ կիրակի օրը:

իգ) Աւագ տօներ. աւագ նշանակում է մեծ: Մնունդի շաբաթապահքը կանխող չորս տօները կոչւում են Աւագ տօներ, որոնց երեքը զոյգ-զոյգ են: Մէկ Աւագ շաբաթ նախորդում է Զատկին, Աւագ տօներն էլ նախորդում են Մնունդին:

Աւագ տօների կարգը.

ա) սուրբ Դաւիթ մարգարէի եւ Յակոբ առաքեալի,

բ) սուրբ Ստեփանոս Նախավկայի,

գ) սուրբ առաքեալներ Պետրոսի եւ Պօղոսի,

դ) սուրբ Որոտման Որդիների՝ Յակոբ առաքեալի եւ Յովհաննէս աւետարանչի:

Սրանք քրիստոնէական Եկեղեցու մեծ տօներից են եւ Հայաստանեայց Եկեղեցում կատարւում են մեծ հանդիսութեամբ:

իդ) Այս բոլոր տօներից հինգը՝ Մնունդ, Զատիկ, Վարդավառ, Աստուածածնի Վերափոխում եւ Խաչվերաց, աւագագոյն տօներ են, որ կոչւում են հինգ տաղաւարներ: Այս տօների յաջորդ օրերը նուիրուած են մեռելոց յիշատակին:

Մեռելոց օրերին սուրբ Պատարագ է մատուցւում, որից յետոյ եկեղեցում տեղի է ունենում ընդհանուր հոգեհանգստեան պաշտօն, գերեզմանոցներում կատարւում է գերեզմանօրհնէք:

ԳԱՆՁԱՍԱՐ

ԱՂՕԹՔՆԵՐ

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի Քրիստոս

Ա

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ Քեզ, Հա՛յր եւ Որդի՛ եւ Սո՛ւրբ Հոգի, անեղ եւ անմա՛հ բնութիւն, Արարի՛չ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց, ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բ

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ Քեզ, անբաժանելի լո՛յս, միասնական Սո՛ւրբ Երրորդութիւն եւ Մի Աստուածութիւն, արարի՛չ լուսոյ եւ հալածի՛չ խաւարի, հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեանց եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել Քեզ ի հաճոյս եւ ընդունել ի Քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Գ

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղա՛յ յերկինս եւ առաջի Քո, ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին եւ զգեցո՛ զիս զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դ

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ Կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր, մեղա՛յ յերկինս եւ առաջի Քո, յիշեա՛ զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ Քով. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ե

Հոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի Վերնատունն եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին, մեղա՛յ յերկինս եւ առաջի Քո, մաքրեա՛ զիս վերստին աստուածային հրով Քով, որպէս հրեղէն լեզուօք՝ սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Զ

Անե՛ղ բնութիւն, մեղա՛յ Քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով, մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ Քում սրբոյ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Է

Տեսո՛ղ ամենայնի, մեղա՛յ Քեզ խորհրդով, բանիւ եւ գործով, ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ը

Քննո՛ղ գաղտնեաց, մեղա՛յ Քեզ կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութի՛ւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ Աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ Քո զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Թ

Ամենախնա՛մ Տէր, զի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ Քո սուրբ՝ ոչ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց Քոց յամենայնի. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ժ

Հո՛ւր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ Քո, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ եւ վառեսցէ զլոյս գիտութեան Քո ի սրտի իմում. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԱ

Իմաստութի՛ւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի Քո յամենայն ժամ, ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԲ

Կամեցո՛ղ բարեաց, Տէ՛ր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց Քոց բարեսիրաց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԳ

Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն Քո, զոր խոստացար սիրելեաց Քոց, եւ զօրացո՛ զսիրտ իմ՝ ատել զմեղս եւ սիրել զՔեզ միայն եւ առնել զկամս Քո. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԴ

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ Խաչի Քո զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց եւ ի մարդոց անիրաւաց եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԵ

Պահապա՛ն ամենայնի Քրիստոս, աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԶ

Աստուա՛ծ իմ, որ բանաս զձեռս Քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ Քով, Քեզ յանձն առնեմ զանձն իմ, Դո՛ւ հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԷ

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն եւ բեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գահենոյն եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԸ

Աղբի՛ւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ

քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԹ

Պարգեւի՛չ ողորմութեան, պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ սուրբ Մարմնոյ եւ Արեան Քո հաղորդութեամբ գալ առ Քեզ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ի

Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԱ

Լո՛յս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց Քոց ի կոչման աւուրն եւ հանդէպ յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յՕր մեծի գալստեան Քո. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԲ

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի Քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն եւ լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԳ

Ամէնողո՛րմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի Քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. չնորհեա՛ եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն, որ առ իս յանցանաց, եւ դարձո՛ զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ Քում արժանի եղիցին. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԴ

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս Քո եւ կատարեա՛ ի բարի զանդրդուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ Յովհաննու Մկրտչին եւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային եւ սրբոյն

Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ սրբոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց եւ ամենայն սրբոց Քոց երկնաւորաց եւ երկրաւորաց. եւ Քեզ փա՛ռք եւ երկրպագութի՛ւն՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս. ամէն:

Աղօթք առ սրբուհի Աստուածածինն

Անկանիմք առաջի քո, սո՛ւրբ Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զԿոյսդ՝ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց եւ աղաչեա՛ զմիածին Որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԲԱՆ ԽԱ

Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ, օրհնեա՛լ յամենայնի, Հօրդ ահաւորի անքննի՛ն ծնունդ, որ տկարանայ առ ի Քէն եւ ոչ ինչ, որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան Քո փառաց հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ դիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն Քո ամենակար, քաւի՛չդ ամենայնի:

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել, թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ, զի Դու միայն ես յերկնի անճառ եւ յերկրի՝ անգնին, ի տարր գոյի եւ յեզրս ծագաց աշխարհի, ակիզբն ամենայնի եւ յամենայնի՝ ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս. եւ Քեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԶԹ

Աստուա՛ծ եւ Տէ՛ր, կեա՛նք եւ արարի՛չ, ողորմա՛ծ, գթա՛ծ, լո՛յս, երկայնամի՛տ, անոխակա՛լ, մարդասէ՛ր, ամենագո՛ւթ, պարգեւատո՛ւ, փրկի՛չ, օրհնեա՛լ, գովեա՛լ, բարեբանեա՛լ, դարա՛ն ամրութեան, պատսպարա՛ն վստահութեան, առանց նենդութեան բարի՛, առանց խաւարի ճառագա՛յթ, քաւի՛չ մեղաց, ողջացուցի՛չ վիրաց, անհասանելեաց հնա՛ր, անմատչելեաց հպաւո՛ր, անյուսութեան ե՛լք, անուն Քո խոստովանեալ Աստուծոյ Որդի. եւ Հօր Քո ընդ Քեզ հզօրի եւ ահաւորի եւ Հոգւոյդ ամենակալի եւ ընդ Քեզ երկրպագելւոյ փա՛ռք եւ պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

Ի վայրի դալարւոջ՝ անդ բնակեցոյց զիս եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս եւ առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան Իւրոյ:

Թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ, զի Դու, Տէ՛ր, ընդ իս ես:

Ցուպ Քո եւ գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ Քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութիւն Քո, Տէ՛ր, զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց՝ բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ Ծ

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան Քում, ըստ բազում գթութեան Քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:

Առաւե՛լ լուա զիս յանօրէնութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ չար առաջի Քո արարի:

Որպէս արդար եղիցես ի բանս Քո եւ յաղթող՝ ի դատել Քեզ:

Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ Քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա՛ յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց, լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս Քո ի մեղաց իմոց եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Սի՛րտ սուրբ հաստատեա յիս, Աստուա՛ծ, եւ հոգի՛ ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս, Տէ՛ր, յերեսաց Քոց, եւ զՀոգի Սուրբ Քո մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան Քո եւ Հոգւով պետութեան Քո հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս Քո, եւ ամբարիշտք առ Քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան Քում:

Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո:

Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք, բայց Դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի՛ արա, Տէ՛ր, կամօք Քովք Սիոնի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան Քո զուարակս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնութիւն սեղանոյ

Ուտելուց առաջ.

Հայր մեր, որ յերկինս ես...

ապա օրհնող սեղանոյն ասէ.

Օրհնեա՛, Քրիստո՛ս Աստուած մեր, հոգեւոր օրհնութեամբ զկերակուրս եւ զըմպելիս ծառայից Քոց եւ շնորհեա՛ առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ, որպէս զի, կրօնաւորական պարկեշտութեամբ վայելելով ի մարմնաւոր պիտոյիցս, անանց բարեացդ եւ երկնից արքայութեանդ հաղորդս լիցուք ընդ ամենայն սուրբս Քո: Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զՔեզ ընդ Հօր եւ Ամենասուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պատրաստեալ է մեզ ի Տեառնէ. օրհնեալ է Տէր ի պարգեւս Իւր. ամէն:

Ուտելուց յետոյ.

Փա՛ռք Քեզ, Տէ՛ր, Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր երկնաւոր, որ եսուր մեզ կերակուր ուրախութեան. լցո՛ զմեզ Հոգւով Սրբով, զի գոցուք առաջի Քո հաճոյք եւ մի՛ ամաչեսցուք, զի Դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ 5
ՀԱՒԱՏՔ 7

ՀԱՒԱՏԱՄՔ

ՀԱՒԱՏԱՄՔ 12
ՀԱՒԱՏԱՄՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ 15

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ 18
ԱՍՏՈՒԱԾ 19
ՈՐԴԻ 22
ՀՈԳԻ 26

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 30
ՄԿՐՏՈՒԹԻՒՆ 32
ԴՐՈՇՄ 49
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ 41
ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ 45
ՊՍԱԿ 51
ԿԱՐԳ ՀԻՒԱՆԴԱՑ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՕԹՈՒՄ 56
ՋԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ 58
ԵՕԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ 64

ՄԱՐԴԸ, ՄԵՂՔԸ, ԾՆՈՐՀԸ

ՄԱՐԴԸ 68
ՄԵՂՔԸ 71
ԾՆՈՐՀԸ 72

ԿՐՕՆԻ ԲԱՐՈՑԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՑ 78
ԵՕԹ ԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԵՕԹ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐ 83

ԵԿԵՂԵՑԻ. ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ.
ԱՂՕԹՔ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ԵԿԵՂԵՑԻ 88
ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ 92
ԱՂՕԹՔ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ 95
ՀՐԵՇՏԱԿՆԵՐ 98

ՑԱՒԵԼՈՒԱԾ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ 102
ՊԱՀՔ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ 113
ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՕՐԵՐԸ 116

ԱՂՕԹՔՆԵՐ

Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ 134
ԱՂՕԹՔ ԱՌ ՍՐԲՈՒՀԻ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ 138
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ԲԱՆ ԽԱ, ՋԹ 138
ՍԱՂՄՈՍ ԻԲ 139
ՍԱՂՄՈՍ Ծ 139
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՑ 141

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Խմբագիրներ՝
Մեսրոպ քահանայ Արամեան,
Տիգրան Խաչատրեան,
Մարթա Արաբեան
Տեխ. խմբագիր՝
Յովհաննէս Կիզողեան
Գեղ. խմբագիր՝
Արեգ Ասատրեան
Վերստուգող սրբագրիչ՝
Ծուշան Վարդանեան
Նկարիչ՝
Արմէն Քիւրքչեան

Համակարգչային շարուածքը՝
«Գանձասար» հանդէսի
համակարգչային ծառայութեան:

«Գանձասար» հանդէս, Երեւան, Բաղրամեան 24 Գ